This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

A 992,281

GRAD
EREN
808
v.2
BUHR

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

ՇԱՐԱԿԱՆՔ
ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

Բ.

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՎԵՐԱԾԵՑ

ԵՐՈՒԱՆԴ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

معارف نظارت جليله سنك فى ٢٤ حزيران ١٣١٩ و ...
رخصتنامه سيله طبع و نشر اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ
Պապը-Ալի ճատէսի թիւ 38

—

1904

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
Digitized by Google

V. 2

Digitized by Google

ՇԱՐԱԿԱՆՔ
ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԿԱՆՈՆ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ

ԱՁ Բանն որ ընդ Հօր յէութեանն եւ համագոյ
ՏԷ սուրբ Հոգւոյն, զպատկերն իւրական խառնեալ
ԷԵ ընդ հողանիւթ բնութեանս, զոր զարդարեալ
փառօք եդ ի դրախտին փափկութեան :

Յորում ցնծայր զուարճացեալ անտխրական խնդութեամբ, քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին, յորմէ զլուսոյն ճառագայթ տպաւորէր ի յինքեան :

Վասն որոյ աղաչեա մայր Աստուծոյ Մարիամ զմիածին քո զորդին, զի շնորհեսցէ ըստ աւազակին ժառանգել վերստին մեզ զդրախտին վայելչութիւն :

Այսօր յօրինակ նախաստեղծին Ադամայ, որ ի դըրախտին փափկութեան ուրախանայր ընդ հրեշտակս, ցնծասցուք եւ մեք ի յօրհնութիւնս հոգեւորս :

Այսօր ի խորհուրդ աստուածաստեղծ նախահօրն, որ ի պտղոյն Ադինայ ճաշակելով զուարճանայր, ճաշակեսցուք եւ մեք զպատուիրանս Աստուծոյ :

Այսօր ի տիպ պատմուճանին առաջնոյ, որով պճնեալ զարդարէիր ի փառս մարդն առաջին, զարդարեսցուք եւ մեք աստուածային օրհնօք :

Digitized by Google

Ցնծա Մարիամ արեգականն արդարութեան արե-ւելք եւ աղաչեա զառ ի քէն զծնեալն Աստուած վասն մեր, զի դարձուսցէ վերստին զմեզ ի դրախտին ժա-ռանգութիւն :

Հ Ուրախացիր եկեղեցի Քրիստոսի փրկական

–ւ տնօրինութեամբ մարմնացելոյն ի կուսէն վասն քո Աստուծոյ հարցն մերոց :

Այսօր ցնծան որդիք Ադամայ քանզի որ ի սկզբանն օրինադիր պահոցն ի դրախտին վասն մեր պահել մարմ-նով յանձն առնու, Աստուած հարցն :

Այսօր երկրորդ Ադամ վասն առաջնոյն անճաշակ լինելով զճաշակաց պտղոյն քաւեալ զպարտիս, Աս :

Գ Զտէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։

Որ ըստ պահոց քառասնօրեայ փրկողին պահելով հարսնացեալ եկեղեցի զի մտցէ ի յառագաստ ընդ փեսա-յին յարուցելոյ, բարձր :

Եկայք հաւատացեալք Քրիստոսի ցնծութեամբ պա-հեսցուք ընդ անմահին մահու մեռանելով մեղաց, զի յարութեամբ նորա կենդանասցուք արդարութեամբ, բարձր :

Մ Որ ընտրեցար ի սկզբանէ անապական կոյս Մա-րիամ լինել տաճար սրբութեան անճառ լուսոյն որ ի հօ-րէ, առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ :

Որ առ ի քէն երկրորդ Ադամ վասն առաջնոյն յան-ցանաց բնութեամբ մերով պահելով զմահաբեր պտղոյն լուծեալ զպատրանս, առ նա :

Արդ աղաչեա մայր Աստուծոյ զծնեալն ի քէն վասն մեր զի ընդ նմին պահելով սուրբ յարութեամբ նորա նորոգեսցուք, առ նա :

Digitized by Google

Ո Ողորմեա ինձ Աստուած :

Որ զառաջինն ոչ պահելով զպատուիրանն մեռաք, շնորհեցեր քեւ օրինակ մեզ պատուիրան կենաց զի պահելով կենդանասցուք, ողորմեա :

Որ ի խորհուրդ քո կամաւոր մահուան եկեղեցի քո Քրիստոս մեռանելով օրինաց մեղաց զի յարուցեալ ընդ քեզ նորոգեսցի ի փառս, ողորմ :

Տ Փառք յարութեան քո տէր :

Որ տրտմակիան չարչարանաց խաչի քո Քրիստոս եկեղեցի հեթանոսաց չարչարակից գոլով քեզ սրբութեամբ պահօք, փառք յարու :

Տուր մեզ տէր մահու քո նմանիլ մեռելութեամբ մեղաց, զի եւ կենաց քոց հաղորդիլ արժանասցուք կենդանարար արքայութեանդ, փառք յարու :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Բանն Աստուած որ հայր Աստուծոյ էակից և սուրբ Հոգիին գոյակից է, իր սեփական պատկերը միացուց մեր հողեղէն բնութեան (Ադամին) հետ, զոր փառքով զարդարելով դրաւ եդեմական (փափուկ) դրախտին մէջ :

Ուր նա (Ադամ) կը խայտար և կը զուարճանար անարատ ուրախութեամբ, որովհետև կը տեսնէր միշտ զԱստուած դրախտին մէջ իջած, և անոր սեփական լոյսին ճառագայթը կը դրոշմէր իրեն վրայ :

Ուրեմն, ո՛վ Մարիամ, Աստուծոյ մայրը, աղաչէ՛

քու միածին որդւոյդ որպէսզի շնորհ ընէ մեզ՝ դարձեալ ժառանգել դրախտին վայելչութիւնը, ինչպէս շնորհ ըրաւ աւազակին ։

Այսօր Նախաստեղծ Ադամին պէս որ եդեմական դրախտին մէջ հրեշտակներուն հետ կ՚ուրախանար, մենք ալ հրճուինք հոգեւոր օրհնութիւններով ։

Այսօր աստուածաստեղծ Նախահօր (Ադամին) օրի-նակին համեմատ, որ Եդեմի պտուղէն ճաշակելով կը խայտար, մենք ալ ճաշակենք Աստուծոյ պատուիրան-ները ։

Այսօր առաջին պատմուճանին նմանութեամբ որով առաջին մարդը կը պճնուէր և փառքով կը զարդար-ուէր, մենք ալ զարդարուինք աստուածային օրէնք-ներով ։

Հրճուէ՛, ո՛վ Մարիամ, որ արեւելք եղար արդա-րութեան արեւին (Քրիստոսի), և աղաչէ՛ մեզի հա-մար քեզմէ ծնած Աստուծոյն որպէսզի նորէն դարձնէ զմեզ դրախտին ժառանգութեան ։

Ուրախ եղիր, ո՛վ Քրիստոսի եկեղեցի, այն փրկական կարգադրութեան վրայ, զոր ըրաւ քեզի համար կոյսէն մարմին առնող մեր հայրերուն Աստուածը ։

Այսօր կը հրճուին Ադամին զաւակները, որովհետև մեր հայրերուն Աստուածը, որ Նախապէս պահքը իբրև օրէնք դրաւ դրախտին մէջ, մեզի համար յանձն կ՚առ-նէ պահք պահել մարմինով (իբրև մարդ) ։

Այսօր մեր հայրերուն Աստուածը՝ երկրորդ Ադամը (Քրիստոս) առաջին Ադամին համար ծոմ պահելով քաւեց պտուղը ուտելուն մեղքը ։

Օրհնեցէք տէրը և ի պատ փառաւորեցէք զայն ։

Փրկչին քառասնօրեայ պահեցողութեան նման պահք կը պահէ անոր հարս եղած եկեղեցին, որպէսզի յարութիւն առնող փեսային հետ առագաստին մէջ մտնէ, ի սպաս։

Ո՛վ Քրիստոսի հաւատացեալներ եկէք պահք պահենք սրտի ուրախութեամբ անմահ Քրիստոսին հետ՝ մեր մեղքերուն համար մեռնելով, որպէսզի արդարացած կենդանանանք անոր յարութեամբ, ի սպաս։

Մ Ո՛վ անարատ կոյս Մարիամ, որ կանուխէն ընտրուեցար սուրբ տաճար ըլլալու հօրմէն ծագող անպատմելի լոյսին, միշտ բարեխօսէ անոր որ կեանք տայ մեզ։

Քեզմէ ծնած երկրորդ Ադամը առաջին Ադամին յանցանքին համար մեր բնութիւնն առնելով պահք պահեց, մահառիթ պտուղին յուսախաբութիւնը ի դերեւ հանելով, միշտ բա։

Ուրեմն, ո՛վ աստուածամայր, աղաչէ՛ մեզի համար քեզմէ ծնածին որպէսզի իրեն հետ պահք պահելով նորոգուինք իր սուրբ յարութեամբ, միշտ բա։

Ո Ողորմէ ինծի, ո՛վ Աստուած։

Առաջին անգամ պատուիրանը չպահելով մեռանք. քու օրինակովդ շնորհեցիր կենսատու պատուիրան մը որպէսզի զայն պահելով կեանք առնենք, ողորմ։

Ո՛վ Քրիստոս, քու եկեղեցիդ քու կամաւոր մահուանդ օրինակին համեմատ կը մեռնի մեղք պատճառող օրէնքին համար, որպէսզի քեզի հետ յարութիւն առնելով փութով նորոգուի, ողորմ։

Տ Ո՛վ Տէր, փառաւորեալ ըլլա՛յ յարութիւնդ։

Digitized by Google

Ո՛վ Քրիստոս, հեթանոսներէն կազմուած եկեղեցին սուրբ պահեցողութեամբ մասնակից կ'ըլլայ քու խաչիդ տրամառիթ չարչարանքներուն, ո՛վ Տէր, փառք։

Ո՛վ Տէր, շնորհէ մեզ որ քու մահուանդ նմանինք՝ մեղքի համար մեռնելով, որպէսզի արժանի ըլլանք նաև մասնակից ըլլալու քու կեանքիդ, այսինքն քու կենդանարար յարութեանդ, ո՛վ Տէր, փառք։

ԿԱՆՈՆ ԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԿԻՐԱԿԷԻ

ԱՂՈՒՀԱՑԻՑՆ

Ա։ Որ զօրէնս արքունեան պահոց նախ ի դրախ-
ձ տին աւանդեցեր, զոր ոչ պահելով նախա-
Ի՛ ստեղծիցն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին ըզ-
դառնութիւն մեղաց եւ մահու, վասն որոյ շնորհեա մեզ տէր ճաշակել զքաղցրութիւն քոց պատուիրանաց:

Որ զանազան վիրօք մեղաց հարաք յոգիս ի թշնամւոյն եւ ի բազմապատիկ հիւանդութիւնս կարօտացաք մարդասիրին բառնալոյ զցաւս մեր, վասն որոյ բժշկեա զմեզ Քրիստոս որպէս մարդասէր:

Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու, եւ կենդանարար քո յարութեամբդ հրաւիրեցեր զմահացեալսն ի յարութիւն անմահութեան, վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ փրկիչ:

Որ զերազոյն փառօք բարձրացուցեր զմանկունս եկեղեցւոյ քո Քրիստոս խոնարհութեան քո ճանապարհաւ առաջնորդելով ի յերկնային վարս հրեշտակաց, աղաչեմք առաջնորդեա մեզ տէր ի յարդարութիւն:

Որ զդառնութեան պտղոյն ճաշակն որով մեռաք արդարութեան՝ պահելով քո քառասնօրեայ փոխեցեր ի քաղցրագոյն օրինաց քոց ճաշակումն, աղաչեմք արբո մեզ տէր զուրախարար սիրոյ քո զբաժակն:

Որ անապական ծննդեամբդ քո լուծեր զերկունս նախամօրն, Մարիամ մայր Աստուծոյ, բարեխօսեա առ

Digitized by Google

միածին որդին լուծանել զկապանս մեղաց մերոց եւ աղաչեա փրկել զանձինս մեր ի փորձութենէ :

Հ Որ յառաջ քան զյաւիտեանս անժամանակ
—է ծնեալ ի Հօրէ անճառելի բանդ Աստուած, որով եղեն երկինք եւ երկիր, օրհնեմք զՔեզ Աստուած հարցն մերոց:

Որ ի պատկեր աստուածութեանդ քո զարդարեցեր զմարդն առաջին, եւ զպատուիրանն ոչ պահելով դարձաւ ի հող ընդ մահու անկեալ թագաւորութեան, օրհ :

Որ զգթութիւն արարչական սիրոյ քո ոչ դարձուցեր յորդւոց ադամայ, այլ շնորհեցեր զյոյս անդրէն դառնալոյ ի կեանս, որով զԵնովք յանմահութիւն վերափոխեցեր, օրհ :

Գ Զտէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան:

Ընդ նախահօրն տրտմութեան որ վասն ելիցն ի դըրախտէն կենաց, ընկալցուք եւ մեք զտրտմութիւն ապաշխարութեան, զի յարութեամբն Քրիստոսի արժանացուք մտից դրախտին եկեղեցւոյ, բարձր :

Ընդ Ենովսայ նահապետին որ յուսացաւ կոչել զանուն տեառն Աստուծոյ, յուսասցուք եւ մեք յարութեամբն Քրիստոսի յառնել նովաւ ի կեանսն յաւիտենից, բարձր:

Մ Որ զկեանքն անմահարար մահկանացու բնութեանս ի քեզ կրեցեր սուրբ կոյս Մարիամ, որով մեռեալքս որք յԱդամայ կենդանացաք յուսով յարութեան. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց :

Որ զբանն անեղական զէակն էից գոյացութեանց անճառաբար ծնար մարմին եղեալ ի փրկութիւն եղականացս, առ նա :

Որ զպտուղն ի քէն կենաց ընծայեցեր մեռեալն Ադամայ, զորոյ պահօք քառասնօրեայ քաւեաց զպտղոյն

ճաշակումն եւ յանվախճան զնոյն վերածեաց ի կեանս, առ նա :

Ռ Որ առաքեցար ի հայրական ծոցոյ ծածկեալ խորհուրդ ընդ հօր յաւիտեան, եւ առեր մարմին զմեղուցելոյ նախաստեղծին յանապական կուսէն անճառ միութեամբ, վասն մերոյ փրկութեան ողորմեա :

Որ փոխանակ ճաշակացն դառնութեան մահաբեր պտղոյն անճաշակ լինելով քո քառասնօրեայ, քաղցրացուցեր յուսով զլուծ նոր քո օրինաց, վասն :

Որ յաջակողմ աւազակին բացեր զդուռն դրախտին կենաց, բաց եւ մեզ մեղաւորացս ողորմութեամբ որք ընդ նմին զքեզ դաւանիմք տէր եւ թագաւոր, աղաչեմք զքեզ, ողորմեա : •

Տ Որ անմարմնոց հոգեղինաց դասակցեցեր Քրիստոս սուրբ զեկեղեցի, որք ընդ նոսին համաձայնեալ փառաւորեմք սուրբ զերրորդութիւնդ սրոբէական սրբասացութեամբ երգելով զփառս ի բարձունս:

Որ յաղթեցեր մերով բնութեամբս ի փորձութեան կամակոր օձին, որով ետուր իշխանութիւն որդւոց Ադամայ կոխել զգլուխ չար վիշապին, եւ ընդ երկնայնոցն երգել զփառս ի բարձունս :

Որ գալստեամբ քո վերածեր զմեզ յաշխարհական մեղաց ծովէս, տպաւորեալ լրմամբ ուռկանի վիմին հաւատոյ զոր ի ծովուն հրաշագործեցեր, երգեմք քեզ զփա:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պահեցողութեան սուրբ օրէնքը նախ և առաջ դըրախտին մէջ հաստատեցիր, բայց նախաստեղծները (Ադամ և Եւա) չպահեցին զայն, և (արգիլուած) պտուղը ուտելով՝ մեղքին և մահուան դառնութիւնը կերան. ուստի, ո՛վ տէր, շնորհ ըրէ մեզ որ ճաշակենք քու պատուիրաններուդ քաղցրութիւնը։

Թշնամին (սատանան) զանազան մեղքերու վէրքերով մեր հոգիները զարկաւ վիրաւորեց, և բազում հիւանդութիւններու մէջ կարօտ եղանք քեզ՝ մարդասէր տիրոջդ, որպէսզի փարատես մեր ցաւերը. ուստի բժշկէ զմեզ, ո՛վ Քրիստոս, որ մարդասէր ես։

Կոյս Մարիամէն ծնելով մարդիկը փրկելու եկար, և քու կենդանարար յարութեամբդ մեռածները հրաւիրեցիր անմահ յարութեան. ուստի կեանք տո՛ւր մեզ, ո՛վ փրկիչ, քու մօրդ աղաչանքով։

Ո՛վ Քրիստոս, վսեմ փառքով պատուեցիր քու եկեղեցիիդ զաւակները, քու խոնարհութեանդ օրինակով առաջնորդեցիր զանոնք հրեշտակներու երկնային վարմունքին. կ'աղաչենք, ո՛վ տէր, առաջնորդ եղիր, տա՛ր մեզ դէպ ի արդարութիւն։

Դառն պտուղը ուտելով արդարութեան համար մեռանք. բայց դուն քառասուն օր պահեցողութիւն ընելով նոյն դառն համը փոխեցիր քու օրէնքիդ աւելի քաղցր համին. կ'աղաչենք, ո՛վ տէր, խմցո՛ւր մեզ քու սիրոյդ ուրախացուցիչ բաժակը։

Ո՛վ Մարիամ, Աստուծոյ մայրը, քու անարատ ծը-

Digitized by Google

Ծնունդովդ Նախամօր Եւային ցաւերը փարատեցիր, բարեխօսէ միածին որդւոյն որ քաւէ մեր մեղքերուն կապերը, և աղաչէ՛ որ մեր անձերը փրկէ փորձութիւններէ։

Է Ո՛վ անպատմելի բանդ Աստուած, որմէ ըստեղծուեցան երկինքն ու երկիրը, բոլոր դարերէն առաջ առանց ժամանակի ծնար Աստուծմէ. կ'օրհնենք զքեզ ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Քու աստուածութեանդ պատկերով զարդարեցիր առաջին մարդը, որ պատուիրանը չպահելով հող դարձաւ և մահուան իշխանութեան տակ ինկաւ, կ'օրհ։

Իբրև արարիչ քու սէրդ և գութդ չվերցուցիր Ադամին զաւակներուն վրայէն, այլ շնորհեցիր դարձեալ կենդանանալու յոյսը, որով անմահութեան վերածեցիր Ենովքը, կ'օրհ։

Օրհնեցէք տէրը և իսպառ փառաւորեցէք զայն։

Կեանքի դրախտէն դուրս ելնելուն համար նախահայր Ադամին տրտմութեան փոխարէն՝ մենք ալ ապաշխարութեան տրտմութիւնը ընդունինք, որպէսզի Քրիստոսի յարութեամբ արժանի ըլլանք եկեղեցիին դրախտը մտնելու, ի սպառ։

Ենովք նահապետին հետ որ մասնաւոր յուսով տէր Աստուծոյ անունը կանչեց, մենք ալ յուսանք թէ Քրիստոսի յարութեամբ անոր հետ յաւիտենական կեանքին մէջ պիտի արթննանք, իսպառ։

Ս Ո՛վ սուրբ կոյս Մարիամ, քու մէջդ կրեցիր մեր մահկանացու բնութիւնը անմահացնող կեանքը, որով Ադամի սերունդէն եղողներս՝ որ մեռած էինք, կեանք առինք յարութեան յուսով. միշտ բարեխօսէ անոր մեր անձերուն համար։

Digitized by Google

Անպատմելի կերպով ծնար բոլոր արարածներուն արարիչը, բանն Աստուածը, որ ո՛չ մէկէն ստեղծուած է, և որ Մարիամին առաւ փրկելու համար զմեզ՝ արարածներս, միշտ բար։

Մեռած Ադամին նուիրեցիր քեզմէ ծնած կենսատու պտուղը, որ քառասնօրեայ պահեցողութեամբ քաւեց անոր յանցանքը՝ արգիլուած պտուղը ուտելուն հետեւանօք, և դարձ վերածեց անվախճան կեանքին, միշտ բար։

Ո *Հայրական ծոցէն զրկուեցար, ո՛վ ծածկուած խորհուրդ որ հայր Աստուծոյ հետ ես յաւիտեան, և անապական կոյսէն մեղանչող Ադամին մարմինը առիր անպատմելի միաւորութեամբ (աստուածութեանդ հետ). մեր փրկութեան համար գութ ունեցիր։*

Դառնահամ մահառիթ պտուղին փոխարէն քառասուն օր բերանդ բան չդնելով քու նոր օրէնքիդ լուծը (ծանրութիւնը) թեթեւցուցիր, (նոր կեանքի մը) յոյսը տալով մեզ, գութ ունե։

Աջակողմեան աւազակին առջև բացիր կեանքի դրախտին դուռը. գթալով բա՛ց նաև մեր՝ մեղաւորներուս առջև, որ անոր հետ կը խոստովանինք զքեզ տէր և թագաւոր. կ՚աղաչենք գութ ունեցիր մեր վրայ։

Տ *Ո՛վ Քրիստոս, անմարմին հոգեղէն հրեշտակներուն դասակից ըրիր սուրբ եկեղեցին (քու հաւատացեալներդ, զմեզ), որ անոնց հետ միաբերան կը փառաւորէ սուրբ երրորդութիւնդ, սերովբէներուն հետ սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ կը գոչէ, և կ՚երգէ քու փառքըդ երկնքին մէջ։*

Digitized by Google

Մեր բնութեամբ յաղթող եղար յամառ օձին (սատանային) փորձութեան պահուն, և հետեւաբար Ադամի զաւակներուն արտօնութիւն տուիր չար վիշապին գլուխը ճզմելու և երկնաբնակներուն հետ երգելու քու փառքդ երկնքին մէջ։

Քու գալուստդ շնորհիւ զմեզ վեր առիր մեղքի այս աշխարհային ծովէն, իբրև օրինակ ցոյց տալով հաւատոյ վէմին (Պետրոսի) ուռկանը զոր հրաշքով լեցուցիր ծովուն մէջ. կ'երգենք քու փառքդ երկնքին մէջ։

ԿԱՆՈՆ ԵՐՐՈՐԴՈՒՄ ԿԻՐԱԿԷԻՆ

Ա՛ Օրհնեմք զքեզ անսկիզբն հայր որդւոյդ միած-
ել նի զոր առաքեցեր ի դարձումն մոլորեալ ոչ-
ւ խարին, դարձո եւ զմեզ ի մեղաց որդւոյ քո
չարչարանօք:

Գովեմք զքեզ բան եւ լոյս որ զտիրական քո պատկեր լուսով ճրագի քո գտեալ վերականգնեցեր, կանգնեա զանկեալսս մեղօք քոյին սուրբ չարչարանօք:

Բարեբանեմք զփառակիցդ հօր զհոգին ճշմարիտ որ նորոգեցեր զհնացեալսս մեղօք հնոյն Ադամայ, նորոգեա եւ զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո շնորհաց:

Ուրախացիր բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ եւ բնակարան սուրբ հոգւոյն, որով ծնար զբանն Աստուած, բարեխօսեա վասն մեր աստուածածին Մարիամ:

Լոյս ի լուսոյ ծնունդ եւ ծագումն որ եկիր ի խընդիր մոլորեալ ոչխարի բնութեանս, զոր ընդ խաչին բարձեր ի վերայ ուսոյդ, մաքրեա զմեզ ի մեղաց մերոց:

Սուրբդ սրբոց էից մաքրութիւն, որ ածեր տան քո աւել ի մեղաց զաշխարհս մաքրելով, ի նմա գտեալ զպատկեր քո նորոգեցեր, նորոգեա զմեզ ի հնութենէ մեղաց:

Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ հայրդ գթած մեղաք յերկինս եւ առաջի քո քաւիչ յանցանաց, եւ ընդ առաջ սիրով գրկեա համբուրիւ, մաքրեա զմեզ:

Աղբիւր կենաց բղխեալ յԷդեմայ սուրբ աստուածածին, որով արբեցաւ երկիր ծարաւուտ հոգւոյն իմաստիւք, տալ մեզ մաղթեա աղբիւրս արտասուաց, մաքրել:

Digitized by Google

Հ Որ զտիրականդ կերպարան զգեցուցեր ծառա-
ԲԼ յին՝ եւ զարդարեալ փառօք եդիր ի դրախտին, օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց :

Որ ճաշակմամբ պտղոյն մահու անմահից կենաց մեռաք, իսկ գալստեամբ քո վերստին փակեալ դրախտին դուռն բացաւ, օրհ :

Որ փոխանակ մահաբերին, որով անէծքն տրտմագին, մեզ փայտ կենաց ետուր զխաչ քո, լուծեր նովաւ զկապ մահու, օրհ :

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան :

Որ ապրեցոյց զՆոյ տապանաւն պահելով հայր աշխարհի, եւ զհեղեղ մեղաց մարդկան հեղեղաւ ջուրց դադարեցոյց, եւ բարձր :

Որ ի ծով այս աշխարհի շինեաց տապան զեկեղեցի, եւ ի սմա զօժանդակեալ հոգիս փրկեաց ի ջուրց մեղաց, եւ բարձր :

Մ Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ երկիր բանաւոր արեգականն օթարան, լեր բարեխօս վասն անձանց մերոց :

Խնդա տաճար բանին Աստուծոյ, բարձող տրտմութեան նախամօրն Եւայի, լեր :

Ցնծա իմանալի արեւելք, քանզի քեւ ծագեաց մեզ լոյս երեսաց Քրիստոս, լեր :

Ո Որ խոնարհեցար ի բարձանց հովիւդ քաջ թողեալ յերկինս զհօտ քո անմոլար, վասն մոլորեալ ոչխարին ողորմեա մեզ Աստուած :

Որ լուսով աստուածութեան քո լուցեր զճրագ մարմնոյդ, ածեր աւել տան քո աշխարհի, վասն պատկերի քո զոր նորոգեցեր, ողոր :

Digitized by Google

Որ դարձմամբ անառակի մարդկութեանս եղեն պարարակ հօր հանութեամբ զենար պատարագ, վասն հաշտութեան երկնաւորաց եւ երկրաւորացս, ողոր:

Տ Ընդ լուսափայլ զուարթնոցն զյարուցեալն օրհ-նեսցուք եւ մաղթելով խնդրեսցուք մաքրել զմեզ ի մեղաց:

Ընդ խնկաբեր սուրբ կանանցն անմահ բուրմանն անուշից, խունկս աղօթից մատուցուք, մաք:

Ընդ իւղաբերիցն արտասուս զմարդկան բարձողն արտասուաց, պաղատեսցուք արտասուօք, մաք:

Ընդ Քրիստոսի պահելով յաղթող լիցուք փորձողին, եւ ընդ հրեշտակս երգեսցուք փառք ի բարձունս Աս-տուծոյ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Կ'օրհնենք զքեզ, ո՛վ անսկիզբն Հայր Աստուած, որ քու միածին որդիդ ղրկեցիր դարձի բերելու համար մոլորած ոչխարը. քու որդւոյդ չարչարանքներուն շը-նորհիւ զմեզ ալ մեղքերէն դարձի բեր:

Կը գովենք զքեզ, ո՛վ բանդ Աստուած և ո՛վ լոյս, որ քու ճրագիդ լուսով երեւան հանելով քու իսկական պատկերդ նորէն բարձրացուցիր զայն. քու սուրբ չար-չարանքներուդ շնորհիւ կանգնէ՛, վեր ա՛ռ զմեզ որ մեղքերով վար ինկած ենք:

Կը գրուատենք զքեզ, ո՛վ ճշմարիտ Հոգի, Հայր Աստուծոյ փառակից, որ վերանորոգեցիր հին Ադամին

Digitized by Google

մեղքով հինցածներս. զմեզ ալ մեղքերէն վերանորոգէ՛ քու նորագոյն շնորհներովդ ։

Ուրախ եղիր, ո՛վ աստուածածին Մարիամ, որուն հովանի է բարձրեալ Աստուծոյ զօրութիւնը եւ սուրբ հոգիին բնակարանն ես, որով ծնար բանն Աստուածը. բարեխօսէ՛ մեզի համար ։

Ո՛վ լոյս (Քրիստոս), լոյսէն (հայր Աստուծմէ) ծնար եւ ծագեցար եւ եկար փնտռելու մոլորած ոչխարը, այսինքն մեր բնութիւնը, զոր խաչափայտին հետ՛ կրեցիր ուսիդ վրայ. մաքրէ զմեզ մեր մեղքերէն ։

Ո՛վ սուրբերուն սուրբը եւ արարածներուն մաքրիչը, որ աւլեցիր քու տունդ՝ այս աշխարհը մեղքերէն մաքրելով, հոն գտնելով քու պատկերդ, նորոգեցիր զայն. զմեզ ալ նորոգէ՛ հին մեղքերէն ։

Անառակ որդիին հետ կ'աղաղակենք գթած հօրդ, մեղք գործեցինք երկնքի եւ քու առջեւդ որ յանցանքները կը քաւես. դիմաւորէ՛ սիրով, գիրկդ ա՛ռ համբուրէ՛, մաքրէ՛ զմեզ մեր մեղքերէն ։

Ո՛վ սուրբ Աստուածածին, Եդեմէն բխող կեանքին աղբիւրն ես դուն, որով անջրդի երկիրը ոռոգեցաւ հոգիին իմաստութեամբ. աղաչէ՛ որ տայ մեզ արցունքի աղբիւրներ, որպէսզի մաքրէ զմեզ մեր մեղքերէն ։

Հ Աստուածային կերպարանքդ հագցուցիր ծառային (մարդուն), եւ փառքով զարդարելով դրախտին մէջ դրիր. օրհնեալ ես ո՛վ մեր հայրերուն տէր Աստուածը ։

Մահարիթ պտուղը ճաշակելով մեռանք անմահ անքրոջդ կեանքին համար (կորսնցուցինք այդ կեանքը), իսկ քու գալուստիդ շնորհիւ դարձեալ բացուեցաւ գոցուած դրախտին դուռը, օրհ ։

Digitized by Google

Մահառիթ ծառին տեղ, որով այն ցաւալի անէծքը առաջ եկաւ, քու խաչդ տուիր մեզ իբրև կեանքի ծառ, և անով քակեցիր մահուան կապը, օրհ ։

Օրհնեցէ՛ք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն։

Տապանով ազատեց Նոյը պահելով զայն իբրև աշխարհի հայր, և մարդոց մեղքերուն հեղեղը ջրհեղեղով դադրեցուց, և ի սպառ ։

Այս աշխարհի ծովին մէջ եկեղեցին չինեց իբրև տապան, և անոր մէջ ապաստանած հոգիները փրկեց մեղքի ջուրերէն, և ի սպառ ։

Մ Ուրախացիր ո՛վ Մարիամ, լոյսին մայրը, ո՛վ բանական երկիր, արեւուն բնակարանը, բարեխօս եղիր մեր անձերուն համար ։

Հրճուէ՛, ո՛վ բանն Աստուծոյ տաճար, որ Նախամայր Եւային տրամութիւնը վերցուցիր, բարեխօս ։

Խայտա՛, հրճուէ՛, ո՛վ հոգեւոր արեւելք, որովհետև քու միջոցաւդ ծագեցաւ Քրիստոս որ մեր երեսը լուսաւորեց, բարեխօս ։

Ո Ո՛վ քաջ հովիւ, երկինքի մէջ թողլով քու անմոլար հօտդ (հրեշտակները), բարձունքէն վար իջար մոլորած ոչխարին համար. ողորմէ՛ մեզ ո՛վ Աստուած ։

Քու աստուածութեանդ լուսով վառեցիր մարմինիդ ճրագը, աւլեցիր քու տունդ՝ աշխարհը քու պատկերիդ համար զոր գտնելով նորոգեցիր, ողորմ ։

Ո՛վ պարարակ եզ, անառակ մարդկութեան դարձի գալուն վրայ իբրև զոհ մորթուեցար հայր Աստուծոյ հաւանութեամբ, երկնաւորները և երկրաւորները հաշտեցնելու համար, ողորմ ։

Տ Լուսափայլ հրեշտակին հետ օրհնենք զայն որ յարութիւն առաւ, և մաղթենք ու խնդրենք որ զմեզ մաքրէ մեղքերէն ։

Անոյշ խունկ բերող սուրբ կիներուն անապատ բուրումներուն հետ մենք ալ աղօթքի խունկեր մատուցանենք որպէսզի զմեզ մաքրէ մեղքերէն ։

Իւղ բերող կիներուն արցունքներուն հետ մենք ալ արցունքներով պաղատինք աղաչենք մարդոց արցունքները վերցնողին, որպէսզի զմեզ մաքրէ մեղքերէն ։

Քրիստոսի հետ պահք պահելով յաղթե՛նք փորձողին (սատանային), և հրեշտակներուն հետ երգենք, փառաւորեալ Թող ըլլա՛յ Աստուած որ երկինքը կը բընակի ։

ԿԱՆՈՆ ՉՈՐՐՈՐԴՈՒՄ ԿԻՐԱԿԷԻ

ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑՆ ՊԱՀՈՑ

ԱՀ Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշ-
եյ խարհի վերինն, եւ ի նմա հաստատեցեր տնտես
լր զպետս հրեղինացն, օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ :

Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի, եւ ի դրախտն որ յադենի տնտես եդեալ զմարդն առաջին, օրհ :

Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ, եւ ի սմա կարգեալ տնտես զքարոզս բանին ճշմարտութեան, օրհ :

Անտանելւոյն տաղաւար՝ բարձող էիցս բարձողին, որ ծնար զԱստուած մարմնով զանմարմնաբար ծնունդն հօր, բարեխօսեա վասն մեր աստուածածին Մարիամ :

Որ տիրականս առ ի քէն կարգեալ տնտես բնութեան մերոյ, իմաստութեամբ զպարտիս եթող քոյոց պարտապանաց, թո՛ղ եւ զմեր զյանցանս ողորմութեամբդ քո Քրիստոս :

Որ զպատմուճանն առաջին զոր զգեցուցեր օծմամբ հոգւոյն մերկացաք մեղօք ըստ նախահօրն պատրանաց, զգեցո զնոյն վերստին ողորմու :

Յաստուածային կայծակունն ի սրբէիցն անհպելին, անմաքրապէս մերձեցաք զոլ պարտապան քում խորհրդոյ, շնորհեա զնոյն մաքրութեամբ ի թողութիւն մեղաց մերոց :

Digitized by Google

Որ վառեցար ի յարփւոյն եւ ոչ կիզար ըստ մորենւոյն, այլ ետուր զհացն կենաց կերակուր բանաւորաց, բարեխօսեա առ Քրիստոս ջնջել զգիր մեղաց մերոց։

Հ
Եէ
Արարչակիցդ հօր համագոյ հոգւոյդ որդի եւ բան, որ զխորհուրդ տնօրէնութեանդ քո ծանուցեր տեսանողացն, զքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց։

Որ զփրկական քո օր զանճառաս պատարագիդ զենումն ցանկացաւ տեսանել Աբրահամ, ետես Սահակաւ եւ ցնծացաւ, զքեզ։

Որ զկենարար խաչ քո զուշակէր սանդուղքն Յակոբայ, որով հրեշտակք ի յերկիր իջեալ եւ մարդիկք յերկինս ելին, զքեզ։

Գ
Զտէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։

Նախանձաւորք ճգնութեան՝ մեծ նահատակին Յոբայ արդարոյ հոյլք ճգնաւորաց՝ բարձր արարէք զհայրն երկնաւոր։

Ընդ ողջախոհին Յովսեփայ որ յաղթեաց մեղաց ցանկութեան, մանկունք Սիօնի բարձր արարէք զՔրիստոս թագաւորն։

Ընդ օրինակին Քրիստոսի՝ Մելքիսեդեկի քահանայապետին, դասք քահանայից բարձր արարէք զհոգին ճշմարիտ։

Մ
Աստուածատունկ խնկաբեր ծառ յանուշահոտ բուրաստանէն, Տր ի գնացս հոգւոյն վտակաց տնկեցար եւ զանմահութեան պտուղն ի ժամու ետուր մեզ, վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։

Զանապական բողբոջն յաստուածային դրախտէն յորովայնի քո տնկեալ, բղխեցեր յարմատոյն յեսսեայ ծաղիկ վայելուչ կուսական ծննդեամբ, վասն։

Digitized by Google

Ցարփւոյն լուսոյ ծագումն ի քեզ վառեալ զճրագ մարմնոյն լոյս աշխարհի, որով զտեալ զպատկերն իւրական, զոր վերստին նորոգեաց յառաջին կերպարանն, վասն որոյ բա՛րեխօսեա նորոգել զմեզ ի հնութենէ մեղաց:

Ո Շնորհեա մեզ տէր ընդ աղքատաց օրինակին Ղազարու ժուժկալութիւն, զի կամաւոր աղքատութեամբ արքայութեանն երկնից ընդ նմին լիցուք արժանի, լուր մեզ եւ ողորմեա Քրիստոս Աստուած:

Որ փոխանակ հացին կարօտութեան զհացն անմահութեան նմա շնորհեցեր, եւ ընդ մեծատանն անգթութեան ի գոգն Աբրահամու զնա ընկալար, լո՛ւր:

Լուսաւորեա զաչս սրտից ստանալ մեզ ողորմութեամբ ի քէն տէր զողորմութիւն, զի մի՛ ընդ մեծատանն հայցեսցուք ի բոց հնոցին ծագիւ մատին ջուր ի զովացումն, լո՛ւր:

Տ Որ զլոյս աստուածային քո բանի ծագեցեր յաշխարհամած խաւարն անգիտութեան, լուսաւորեա եւ զմեզ հօր իմաստութիւն:

Որ զհամօրէն դատաստանին օրինակ նշանակեցեր առ մեծատունն եւ Ղազարոս, ներհակաբար տալով զոր-ատս ընկալան:

Վասն որոյ աղաչեսցուք զքեզ տէր փրկել զմեզ ի հրոյ մեղաց եւ տանջանաց, հանգչիլ ի գոգ նահապետին արդարոյ:

Որով եւ մեք ընդ հրեշտակացն դասուց անբաժանելի սուրբ երրորդութեանն համաձայնեալ երգեմք զփառս ի բարձունս:

Digitized by Google

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Զօրութեամբ, կարողութեամբ ստեղծեցիր իմանալի էակներուն (հրեշտակներուն) վերին աշխարհը, և անոր մէջ իբրև տնտես հաստատեցիր հրեղէն հրեշտակներուն գլխաւորները. կ'օրհնենք քու անըմբռնելի զօրութիւնդ։

Իսկապէս, ճշմարտապէս մեծատուն ըլլալով դուն ստեղծեցիր երկրորդ զգալի, այսինքն նիւթական աշխարհ մը, և Եդեմի մէջ հաստատուած դրախտին մէջ իբրև տնտես դրիր առաջին մարդը. կ'օրհ։

Աւելի բարձր խորհուրդով շինեցիր քու եկեղեցիդ, և ատոր մէջ տնտես կարգեցիր ճշմարիտ վարդապետութեան քարոզիչները, կ'օրհ.

Ո'վ աստուածածին Մարիամ, բարեխօսէ' մեզի համար դուն որ անբովանդակելի էակին (Քրիստոսի) խորան եղար, և կրեցիր զայն որ կը կրէ զմեզ՝ արարածներս, և մարմինով ծնար հայր Աստուծոյ անմարմին ծնունդն եղող Աստուածը։

Մեր ներսիդին քու կողմէն դրուած տիրական տնտեսը, այսինքն մեր բանականութիւնը, քեզի պարտական կամ մեզապարտ եղողներուն յանցանքները ներեց. դուն ևս, ո'վ Քրիստոս, քու ողորմութեամբդ մեր յանցանքները ներէ։

Նախահայր Ադամին խաբուելուն հետեւանքն եղող մեղքով հանեցինք այն առաջին պատմուճանը զոր Հոգիով օծելով հագցուցիր. ո'վ Քրիստոս քու ողորմութեամբդ վերստին հագցուր նոյն պատմուճանը։

Digitized by Google

Առանց մաքրուելու մօտեցանք այն աստուածային կայծերուն, որոնց սերովբէները իսկ չեն կրնար դպչիլ, և քու խորհուրդիդ դէմ յանցաւոր եղանք. շնորհ ըրէ՛ մաքրութեամբ նոյն խորհուրդին մօտենալ մեր մեղքերուն թողութիւն առնելու համար։

Ո՛վ Մարիամ, որ արեւէն բռնկեցար և չայրեցար մորենիին պէս, այլ կենսատու հացը իբրև կերակուր տուիր բանական արարածներուն. բարեխօսէ՛ Քրիստոսի որ ջնջէ մեր մեղքերուն մուրհակը։

Հ Որդի և Բանդ Աստուած, որ Հայր Աստուծոյ հետ ստեղծագործութեան մասնակցեցար, և Հոգի Աստուծոյ էակից ես, քու աստուածային կարգադրութեանդ՝ այսինքն մարդեղութեանդ խորհուրդը իմացուցիր մարգարէներուն. կ'օրհնենք զքեզ, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Աբրահամ փափաքեցաւ տեսնել քու փրկական օրդ, այսինքն քու մորթուիլդ իբրև անարատ զոհ մը. իր Իսահակ որդիին օրինակով տեսաւ և հրճուեցաւ, կ'օրհ։

Քու կենսատու խաչիդ նշանն էր Յակոբին սանդուխը, որով հրեշտակները երկիր իջան և մարդիկ երկինք ելան, կ'օրհ։

Գ Օրհնեցէք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն։

Ո՛վ ճգնաւորներու խումբեր, որ մեծ համբերողին՝ արդար Յոբին քաջածններուն վրայ բարի նախանձ ունիք, փառաւորեցէք երկնաւոր Հայրը։

Ո՛վ քրիստոնէական Եկեղեցւոյ (Սիոնի) զաւակներ, փառաւորեցէք Քրիստոս Թագաւորը՝ իր բարոյական մաքուր պահող Յովսէփին հետ, որ ցանկական մեղքին յաղթեց։

Digitized by Google

Ո՛վ քահանաներու խումբեր, փառաւորեցէք ճըշմարիտ հոգին Մելքիսեդեկ քահանայապետին հետ, որ Քրիստոսի օրինակն էր ։

Ս Ամենքս կը դրուատենք, կը գովաբանենք զքեզ, ո՛վ Մարիամ, որ անուշահոտ պարտէզէն բերուած քաղցրաբոյր ծառ մ'ես, զոր Աստուած տնկեց հոգիին գետակներուն ընթացքին վրայ, և ճիշդ իր ժամանակին մեզի տուիր անմահ պտուղը, Քրիստոս ։

Աստուածային դրախտէն մաքուր, անարատ բողբոջը որովայնիդ մէջ տնկելով, Յեսսէի արմատէն (Դաւիթի սերունդէն) վայելուչ ծաղիկ մը բուսցուցիր իբրև կոյս ծնելով. ուստի ամենքս կը դրուատ ։

Արեւուն լոյսէն (հայր Աստուծմէ) ծագողը քու մէջդ վառեց իր մարմինին ճրագը իբրև աշխարհի լոյս, որով իր սեփական պատկերը գտնելով դարձեալ նորոգեց, իր առաջին կերպարանքը տուաւ անոր. ուստի բարեխօսէ՛ որ զմեզ նորոգէ հին մեղքերէն ։

Ո Ո՛վ տէր, աղքատներուն տիպար եղող Ղազարոսին համբերութիւնը շնորհէ՛ մեզի, որպէսզի կամաւոր աղքատութեամբ անոր հետ արժանի ըլլանք երկնային արքայութեան. մտիկ ըրէ՛ գութ ունեցիր մեր վրայ, ո՛վ Քրիստոս Աստուած ։

Որ անմահ հացը անոր շնորհեցիր փոխանակ անօթեցնող հացին, և անգութ մեծատունին ըրածին փոխարէն Աբրահամու գրկին մէջ ընդունեցիր զայն. մտիկ։

Ո՛վ տէր, լուսաւորէ՛ մեր սրտերուն աչքերը որպէսզի (կարօտեալներուն) ողորմելով ողորմութիւն ստանանք քեզմէ, և հնոցին բոցին (դժոխքին) մէջ մեծատունին հետ մատի ծայրով ջուր չը խնդրենք զովանալու համար. մտիկ ։

Digitized by Google

Տ Լուսաւորէ՛ զմեզ, ո՛վ հայր Աստուծոյ իմաստութիւնն եղող բանդ Աստուած, որ քու աստուածային վարդապետութեանդ լոյսը ծագեցիր աշխարհը ծածկող տգիտութեան խաւարին մէջ։

Վերջին ընդհանուր դատաստանին օրինակը ցոյց տուիր մեծատունին և Ղազարոսին վրայ, այս աշխարհին մէջ իրենց ընդունածներուն հակառակը տալով։

Ուստի կ՚աղաչենք քեզի, ո՛վ Տէր, փրկէ զմեզ մեղքերու և տանջանքներու կրակէն, և հանգչեցուր զմեզ (Աբրահամ) արդար նահապետին գրկին մէջ։

Որպէսզի մենք ալ հրեշտակներուն խումբերուն հետ միաբերան՝ անբաժանելի սուրբ երրորդութեանդ փառքը երգենք բարձունքին մէջ։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻՆ

Ա: Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր
Բհ եկեղեցւոյ քո Քրիստոս, անսահման ժամանա-
իե կաւ աղօթել միշտ առ Աստուած հոգւով եւ մտօք:

Որ զբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ, հանելով զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ բնութեամբ մերով տնօրինաբար, որում կրկնի ծունր ամենայն:

Վասն որոյ եւ մեք պաղատեցուք առ քեզ Քրիստոս, շնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման մաքուր աղօթիւք ընդ անմարմնոցն որ յերկինս:

Աղաչանօք աստուածածնին անապական քում ծնողին զիմանալի աչս սրտից մերոց բացցես ողորմութեամբ հայիլ ի լոյս քո Քրիստոս:

Դատաւոր արդարութեան հաստատեցեր ի մեզ զմիտս մեր դատել զհոգի եւ զմարմին՝ արդարապէս դատմամբ ընդ օրինաց քոց Քրիստոս:

Իսկ անիրաւ դատաւորին որ ի քաղաք բնութեան մերոյ ոչ ունելով զերկիւղ քո սուրբ, եւ անպատկառ ի մարդկանէ ոչ առնելով դատ զրկելոյն:

Այլ անմահ սուրբ փեսայիդ այրի հոգի իմ պաղատի, ուսո՛ զիրաւունս քո իմում դատաւորիս առնել ինձ դատաստան արդար ընդ ոսոխի մարմնոյ իմոյ:

Մարիամ կոյս անարատ զանապական փեսայդ աղաչեա զի հաշտեսցի ընդ այրի եղեալ հոգիս եւ միաւորեսցի դարձեալ սիրով ընդ հեռացեալսն ի նմանէ:

Digitized by Google

Է ՏՁ Որ ի սկիզբն փրկութեան մերոյ օրհնակի երեւեցար մարգարէին Մովսիսի աստուածային վառեալ բոցով զմորենին անկիզելի ի նմանութիւն կուսական ծննդեանն, օրհնեալ տէր Աստուած հարցն մերոց:

Որ յօրհնակ քո զայտնեալն յաշխարհս առաքեցեր զմովսէս ի յեգիպտոս, ազատելով զհինն իսրայէլ արեամբ գառինն խորհրդոյ, որպէս եւ դու գառն Աստուծոյ քո կենարար արեամբդ զնորս իսրայէլ, օրհ:

Որ ի նմանութիւն կարմիր ծովուն բաժանեցեր խաչիւն զծով աշխարհական, խորտակելով զհմանայի բզգզուխ վիշապին ի վերայ ջուրց, եւ առաջնորդեցեր ամպով հոգւոյն ժողովրդեանն քո ի յերկինս, օրհ:

Գ Ամենայն գործք տեառն զտէր օրհնեցէք:

Այսօր մաքրիցուք պահօք քառասնօրեայ ընդ Մովսիսի, զի ելցուք ի լեառն իմանալի առ Աստուած, ամե:

Այսօր ընդ մեծին Եղիայի արքեայք պահօք, զի տեսլեան աստուածային լուսոյն արժանասցուք հոգւով, ամե:

Այսօր պահօք ճշմարտութեան ելցուք ի լեառն փորձութեան ընդ Քրիստոսի պատերազմեալք ընդ թշնամւոյն զի յաղթեսցուք նովաւ, ամե:

Մ Աստուածածին գերազոյն քերովբէից բանին բարձող որ զամենայն կրէ զօրութեամբ, բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան:

Մայր արքութեան բարձրագոյն սերոբէից զանտեսն յինքեանց ի քեզ կրելով ծագեցեր զլոյս աշխարհի, բար:

Ծառ կենաց որ զանմահութեան պտուղն ի քեն ետուր նախնոյ մօրն Եւայի՝ ի մահաբեր երկանցն ազատելով, բար:

Ո Դատաւոր արդար որ հաստատեցեր ի մեզ դատող բնութեան զմիտս մեր, շնորհեա սմա դատել զանձինս իրաւամբք եւ արդարութեամբ, խնայեա ի մեզ տէր ողորմութեամբ:

Փեսայ երկնաւոր հարսին քո եկեղեցւոյ, զայրի եղեալ ի քէն զհոգիս մեղօք մաքրեա գթութեամբ եւ յօդեա ի քեզ միութեամբ, խնա:

Որ մահուամբ մարմնոյ քո մեղուցեր զմեղս, եւ յարութեամբ քո յարուցեր ի մեզ զարդարութիւն, տուր զօրութիւն հոգւոյս կամաց հնազանդել զկամս մարմնոյս, խնա:

Տ Որ փառաբանիս ի հրեշտակաց ընդ հօր եւ հոգւոյն Քրիստոս որդի Աստուծոյ, խոնարհեցար ի հողեղէն բնութիւնս համբերելով խաչի վասն մեր, վասն որոյ գթա ի մեզ մարդասէր փրկիչ:

Որ զհին մարդն մեր մեղաց ի խաչին սպաներ, նորոգելով զնոր մարդն արդարութեամբ, յուսով կենացն անվախճանից ի նորոգումն նոր Ադամայ, վասն:

Կենդանարար քո յարութեամբդ անմահ թագաւոր կենդանացո զմեռեալս մեղօք կենդանական գործովք բարեաց ըստ լուսաւոր քոց պատուիրանաց, վասն:

Շնորհեա մեզ տէր զզաստութեամբ արթուն լինել ըստ դռնապանին, զի ի բաղխել սուրբ փեսայիդ բացցուք զսիրտս քոց մտից ընդ քեզ եւ հօր քո եւ հոգւոյդ լինել օթեվան, եւ երգեսցուք երրորդութեանդ զփառս ի բարձունս:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Քրիստոս, ճշմարիտ պատուիրան մը աւանդեցիր քու եկեղեցիիդ, այսինքն՝ հոգիով և մտքով միշտ անվերջանալի կերպով աղօթել Աստուծոյ։

Քու այս օրէնքիդ խօսքը գործով ալ իբրև օրինակ հաստատեցիր մեզի, ամբողջ գիշերը աղօթելով Աստուծոյ, երկնաւոր կարգադրութեամբ մեր բնութիւնն առնելով դուն՝ որու առջև բոլոր արարածները ի ծունր կը խոնարհին։

Ուստի մենք ալ քեզի կը պաղատինք, ո՛վ Քրիստոս, շնորհ ըրէ՛ մեզի որ ամէն ժամ քու դիմացդ ելնենք մաքուր աղօթքով երկնային անմարմին հրեշտակներուն նման։

Ո՛վ Քրիստոս, գութ ունեցի՛ր և բա՛ց մեր սրտերուն հոգեւոր աչքերը քու անսպառ ծնողիդ՝ Աստուածածնին աղաչանքով, որպէսզի քու լոյսիդ նայինք։

Ո՛վ Քրիստոս, մեր միտքը մեր մէջ իբրև արդար դատաւոր մը հաստատեցիր, որպէսզի արդար դատաստանով դատէ մեր հոգին ու մարմինը։

Իսկ մեր բնութեան ներքին մասին մէջ դրուած այդ անիրաւ դատաւորը, քու սուրբ երկիւղդ չունենալով և մարդոցմէ ալ չամչնալով, զրկուածին դատաստանը չի տեսներ։

Բայց իմ այրիացած հոգիս կը պաղատի կ'աղաչէ քեզի՝ անմահ սուրբ փեսայիդ, իրաւունքը սորվեցո՛ւր իմ դատաւորիս՝ մտքիս, որպէսզի իմ հակառակորդիս (մարմինիս) հետ ունեցած դատս արդար կերպով տեսնէ։

Digitized by Google

Ո՛վ անարատ կոյս Մարիամ, աղաչէ՛ քու մաքուր փեսայիդ՝ Քրիստոսի, որպէսզի հաշտուի այրիացած հոգիներուն հետ, և դարձեալ սիրով միանայ իրմէ հեռացածներուն հետ։

Հ. Հրէից եգիպտական գերութենէն ազատուելուն ժամանակ, որ մեր փրկութեան (Քրիստոսի միջոցաւ) օրինակն էր, Մովսէս մարգարէին երեւցար, աստուածային բոցով բռնկցնելով մորենին որ չէր այրեր իբրև նշան կոյսէն ծնելուն. օրհնեալ ըլլայ մեր հայրերուն տէր Աստուածը։

Իբրև օրինակ այս աշխարհս գալուդ Մովսէսը Եգիպտոս ղրկեցիր, հին Իսրայէլացիները փրկելով խորհրդաւոր գառան արիւնով, ինչպէս որ դուն, որ Աստուծոյ գառնուկն ես, նոր Իսրայէլացիները՝ այսինքն քեզի հաւատացողները փրկեցիր քու կենսատու արիւնովդ. օրհնեալ։

Խաչով ճեղքեցիր այս աշխարհիս ծովը Կարմիր ծովուն նմանութեամբ, ջուրերուն վրայ խորտակեցիր բանական վիշապին (սատանային) գլուխը, և հոգեւոր ամպով մը առաջնորդ եղար քու ժողովուրդիդ դէպ ի երկինք. օրհ։

Գ Ո՛վ տիրոջ բոլոր արարածները, օրհնեցէք տէրը։

Այսօր Մովսէսին նման քառասուն օր պահեցողութիւն ընելով սրբուինք, որպէսզի հոգեւոր լեռը ելնենք Աստուծոյ քով (ինչպէս Մովսէս ելաւ Սինա լերան վրայ), ո՛վ տիրոջ։

Այսօր Եղիա մեծ մարգարէին հետ պահեցողութիւն ընելով մաքրուինք, որպէսզի արժանի ըլլանք հոգիով

Digitized by Google

տեսնել աստուածային լոյսը, (ինչպէս Եղիա Քորէբի վրայ), ո՛վ։

Այսօր ճշմարիտ պահեցողութիւն ընելով Քրիստոսի հետ փորձութեան լեռը՝ ելնենք թշնամիին դէմ պատերազմելու, որպէսզի անով յաղթենք, ո՛վ։

Մ *Ո՛վ աստուածածին, սերովբէներէն բարձր ես, և կրեցիր բանն Աստուածը՝ որ իրեն վրայ կը կրէ ամէն արարածները կարողութեամբ. բարեխօսէ՛ տէրոջը մեր փրկութեան համար։*

Ո՛վ սուրբ մայր, սերովբէներէն վեր ես, անոնց անտեսանելի եղողը քու մէջդ կրելով իբրև աշխարհի լոյս ծագեցիր. բար։

Ո՛վ կենսատու ծառ, անմահ պտուղը քեզմէ առ-ւիր նախամայր Եւային, ազատելով զայն մահառիթ ցաւերէն. բար։

Ռ *Ո՛վ արդար դատաւոր, որ մեր միտքը մեր մէջ հաստատեցիր որպէսզի դատէ մեր բնութիւնը. շը-նորհ ըրէ՛ ասոր որ իրաւունքով և արդարութեամբ դատէ մեր անձերը. ո՛վ տէր, ողորմէ և խնայէ՛ մեզի։*

Դուն երկնաւոր ամուսինն ես քու հարսիդ՝ եկե-ղեցիին. գթալով մաքրէ՛ և քեզի միացո՛ւր, կապէ մեր հոգիները, որ մեղքերով այլիացած են քեզմէ. ո՛վ տէր։

Քու մարմինիդ մահով մեղքերը մեռցուցիր, և քու յարութեամբդ մեր մէջ արթնցուցիր արդարութիւնը, այժ տո՛ւր իմ հոգիիս կամքին որպէսզի հնազանդեցնէ իմ մարմինիս կամքը. ո՛վ։

Տ *Ո՛վ Քրիստոս, Աստուծոյ որդին, որ հրեշ-տակներէն կը փառաւորուիս հայր Աստուծոյ և հոգի*

Digitized by Google

Աստուծոյ հետ, մեր հողային բնութիւնը առնելու գիջում ըրիր, մեզի համար համբերելով, համակերպելով խաչին. ուստի գութ ունեցի՛ր մեր վրայ, ո՛վ մարդասէր փրկիչ։

Մեղքերով թաթախուած մեր հին մարդը մեռցուցիր խաչին վրայ, և նոր Ադամը (քրիստոնեայ մարդկութիւնը) նորոգելով նոր մարդը արդարութեամբ նորոգեցիր, անվախճան կեանքին յոյսը տալով անոր. ուստի։

Ո՛վ անմահ թագաւոր, քու կենսատու յարութեամբդ ողջացո՛ւր մեղքերով մեռածները՝ կենդանի բարեգործութիւններով՝ քու լուսաւոր պատուիրաններուդ համեմատ. ուստի։

Ո՛վ տէր, շնորհ ըրէ՛ մեզի որ դռնապանին պէս արթուն մնանք և զգաստ ըլլանք, որպէսզի երբ դուն՝ սուրբ փեսադ՝ դուռը զարնես, բանանք մեր սիրտերը բնակարան ըլլալու քեզի, հայր Աստուծոյ և հոգի Աստուծոյ, և երրորդութեանդ երգենք փառք բարձունքին մէջ։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ

Ա։ Որ զխորհուրդ քո զգալստեանդ յառաջագոյն
Բյ գուշակեցեր մարգարէիւքն Իսրայելի զորս ընտ-
Ե— րեցեր յետ Մովսիսի, որք խօսեցան հոգւով սրբով բազմապատիկ օրինակօք, տուր մեզ փրկիչ ողորմութիւն, եւ զմեղաց զթողութիւն:

Ի մերձենալ ամաց վերջին զոր տեսանողքն ծանուցին զհասանիլ մեր փրկողիդ տէր ի վախճան ժամանակին, երեւեցար ի մէջ մարդկան զգեցեալ զկերպ ծառայական, տո՛ւր:

Ի վեցերորդ աւուր զԱդամ ստեղծեր ի տիպ քո տիրական, որ ոչ պահեալ զպատուիրանն մերկացաւ զպատմուճանն, իսկ նոր Ադամդ ի վեց դարուն այց արարեր կորուսելոյն, տո՛ւր:

Տաճար լուսոյ անստուերին եւ առագաստ անճառ բանին, որ զնախնոյ մօրն Եւայի բարձեր զանէծսն տրտմալի, հայցեա յորդւոյ քո միածնի նոր հաստութեանն միջնորդի, բառնալ ի մէնջ զխռովութիւն եւ տալ զոգւոց զխաղաղութիւն:

Ըստ աւետեաց մարգարէին որ առ փրկեալքս արեամբ գառինդ, ցնծամք եւ մեք ծառք անտառի ընդ գալուստ տեառնդ կրկնակի, օրհնեա մեզ տէր ընդ արդարոցն ընդ առ ի քէն տնկեալ ծառոցն, այժմ յուսով զուարճանալ եւ յերկրորդին ընդ քեզ ցնծալ:

Սմին նման տայ աւետիս Զաքարիաս նոր Սիոնի, եթէ ուրախ լեր ահա գայ առ քեզ խոնարհ եւ հեզ արքայ նստեալ ի յէշ եւ յաւանակ կրկին ազանց զոլ օրի-

Digitized by Google

նակ, նստեալդ յաթոռ քերովբէից նիստ գթութեամբ ի մեր հոգիս :

Զահեղ փառաց քոց երեւումն որ լինելոց է յերկ-րորդումն, ետես Դաւիթ յառաջագոյն ծանոյց կանխաւ ազդմամբ հոգւոյն. թէ յայտնապէս Աստուած գայցէ հուր առաջի իւր բորբոքէ, յայնժամ Յիսուս ի մեզ խնայեա գթա Քրիստոս եւ ողորմեա :

Աստուածածին անհարսնացեալ յերկրէ յերկինս հարս ընծայեալ, յորժամ բազմիս լուսոյ նման քո միածնիդ յաջակողման, յայնժամ մաղթեա ընդ մեր զնոյն փրկել զմեզ յահեղ բոցոյն, համադասիլ ընդ արդարոցն եր-գել զփառս ընդ երկնայնոցն :

Հ Որ յանճառելի ծոց հօր ծածկեալ անքննին ծնունդ եւ բան, եւ ի հրեշտակաց երկրպագեալ փառա-բանէիր, զքեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց :

Որ խոնարհութեամբ իջեալ յաշխարհ շիջուցեր ըզ-բոց մեղաց որպէս երբեմն ի Բաբելոն ի մէջ հնոցին, զքեզ :

Որ ըստ նախաձայն մարգարէիցն եկիր ի լրումն խորհրդոյ զոր տնօրինաբար կատարեցեր վասն մերոյ փրկութեան, զքեզ :

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յա-ւիտեան :

Որ յայտնեաց հոգին տեսլեամբ Դանիէլի մարգարէին զմիւսանգամ գալստեանն Քրիստոսի զխորհուրդ, բարձր:

Որ զչորրորդ գազանն ահեղ զապստամբեալն յԱս-տուծոյ ծանոյց բարձեալ զօրութեամբ աստուածորդւոյն, բարձր :

Որ զհինաւուրցն Աստուած ետես նստեալ յաթոռ

քերօբէական , եւ զորդի ընդ ամպս երկնից եկեալ ․ բարձր :

Ս Աստուածածին պայծառ քան զերկինս , որ ի մեզ ծագեցեր զլոյսն մեծ եւ զերազանց , որով խաւարն անգիտութեան հալածեցաւ , սրօբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք :

Ամպ թեթեւ եւ լուսաւոր որ զանձրեւն կենաց ի քեզ հեղեալ ի յերկնայինն ծովէն զոր հոսեցեր ի յերկիր ծարաւուտ , սրօ :

Պարտէզ փակեալ աստուածատունկ Եդեմ, որ եւ ծառն կենաց ի մէջ դրախտի քո ի հոգւոյն տնկեալ անմահական պտղովն ելից զտիեզերս , սրօ :

Ո Որ ողորմութեամբ զգեցար մարմին եւ նորոգեցեր զհնացեալսս , նորոգեա եւ զմեզ հոգւով Քրիստոս եւ ողորմեա :

Որ ի խաչին մեռար մարմնով եւ զմեռեալսս դարձուցեր ի կեանս , կեցո եւ զմեզ հոգւով Քրիստոս , եւ ողոր :

Որ յարեար ի մեռելոց եւ յարուցեր զբնութիւնս մեր յուսով , յարո եւ զմեզ հոգւով Քրիստոս եւ ողոր :

Որ զսիրելին քո զՂազարոս կոչեցեր ի գերեզմանէն կոչեա եւ զմեզ հոգւով ի կեանս եւ ողորմ :

Տ Նորահրաշ տեսլեամբ յարութեան քո Տէր ահեղակերպ փայլմամբ զարհուրեցան դժոխք , եւ մեռեալք ընդ կենդանւոյդ յարեան ի հաւատս համօրէն յարութեան:

Յորժամ փառօք հայրենի Քրիստոս ծագիս ի յերկնից եւ յարուցանես զմեռեալսն , յայնժամ դասեա ընդ աջմէ քումմէ եւ կոչեա զմեզ ի փառս քո :

Յորժամ հեծանոցաւ դատողութեան քո Տէր սրբեա

զկայ աշխարհի յշտեմարանս արքայութեանդ, ժողովեա զմեզ ընդ արդարոցն :

Յորժամ եկեղեցի հարսնացեալ միանայ ընդ փեսայիդ ընդ իմաստուն կուսանացն, արժանացո առագաստին զմեզ ընդ նոսին երգել զփառս ի բարձունս :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Աշխարհ գալուդ (մարդեղութեանդ) խորհուրդը առաջուընէ գուշակեցիր հրէական մարգարէներով զորս Մովսէսէն վերջ ընտրեցիր, որք զանազան օրինակներով խօսեցան հոգւով լեցուած. ո՛վ փրկիչ, ողորմէ՛ մեզի և ներէ՛ մեր մեղքերը :

Երբ մօտեցան մարգարէներուն գուշակած վերջին տարիները, երբ մեր փրկիչը պիտի հասնէր ժամանակը լրացած ըլլալով, ծառայի կերպարանք հագած՝ մարդոց մէջ երեւցար. ո՛վ :

Վեցերորդ օրը Ադամը ստեղծեցիր քու տիրական, սեփական կերպարանքով, բայց պատուիրանը չպահելով պատմուճանը հանեց, իսկ դու՝ որ Նոր Ադամն ես, վեցերորդ դարուն մէջ կորսուածը փնտռելու եկար, ո՛վ:

Ո՛վ Մարիամ, անխաւար լոյսին տաճար և անպատմելի բանին Աստուծոյ առագաստ կամ ներքին սենեակ, որ նախամայր Եւային ցաւալի անէծքը վերցուցիր. խնդրէ՛ քու միածին որդիէդ որ հայր Աստուծոյ ետեւ մեր հաշտուելուն միջնորդն է, նեղութիւնները վերցնէ մեզմէ և հոգիներու խաղաղութիւն տայ :

Digitized by Google

Աստուծոյ գառնուկին արիւնով մեզ՝ փրկուածներուս մարգարէին տուած բարի լուրին համեմատ, մենք՝ անտառի ծառերս կը հրճուինք, կը խայտանք ամբողջ երկրորդ գալուստին վրայ. շնորհ ըրէ՛ մեզի, ո՛վ Տէր, որպէսզի քեզմէ տնկուած ծառերուն՝ այսինքն արդարներուն հետ հիմա, այս աշխարհիս մէջ յուսով մը ուրախանանք, և երկրորդ գալուստիդ (վերջին դատաստանին) ժամանակ ալ քեզի հետ հրճուինք, խայտանք։

Զաքարիա մարգարէն աստղ նման բարի լուր մը կուտայ Նոր Սիոնի (քրիստոնեաներուն), թէ ուրախ եղիր, ահա խոնարհ և հեզ թագաւորը քեզի կուգայ իշու և աւանակի վրայ նստած, իբրև օրինակ երկու ցեղերուն (հրէից և հեթանոսաց). դուն որ քերովբէներէ ձեւացած աթոռի վրայ նստած ես, գութ ունեցի՛ր և նստէ՛ մեր հոգիներուն վրայ։

Դաւիթ առաջուընէ տեսաւ և սուրբ հոգիին ազդեցութեամբ գուշակեց քու ահաւոր, անպատմելի փառքդ, որ պիտի երեւի երկրորդ գալուդ (վերջին դատաստանին), թէ Աստուած պիտի գայ ամէնուն աչքին առջեւ, իր առջեւէն կրակ ցայտեցնելով. ո՛վ Յիսուս, այն միջոցին խնայէ՛ մեզի. ո՛վ Քրիստոս, գութ ունեցիր և ողորմէ՛։

Ո՛վ աստուածածին որ ամուսին չճանչցար, և այս աշխարհէն երկինքի նուիրուեցար իբրև հարս, երբ լոյսի պէս նստիս քու միածին որդիիդ աջ կողմը, այն միջոցին մեր տեղը խնդրէ՛ որ փրկէ զմեզ անհունի բոցէն, դատակից ընէ արդարներուն, և երկնաբնակներուն հետ Աստուծոյ փառքը երգենք։

Հ Հրեշտակները երկրպագութիւն ընելով կը

փառաւորէին զքեզ որ անքննելի ծնունդ և բանն Աստուածն ես, հայր Աստուծոյ անպատմելի ծոցին մէջ ծածկուած. կը գովաբանենք զքեզ ո՛վ մեր հայրերուն Աստուածը ։

Խոնարհութեամբ աշխարհ իջնելով մարեցիր մեղքերուն բոցը, ինչպէս երբեմն Բաբելոնի հնոցին մէջ, կը գովաբար ։

Նախագուշակ մարգարէներուն ըսածին համեմատ եկար կատարելու (մարդեղութեան) խորհուրդը, աստուածային կարգադրութեամբ մեր փրկութեանը համար, կը գովաբար ։

Գ *Օրհնեցէք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն ։*

Սուրբ հոգին տեսիլքով Դանիէլ մարգարէին յայտնեց Քրիստոսի երկրորդ գալուստին խորհուրդը, և ի սպառ փառս ։

Դանիէլ իմացուց նաև թէ աստուածորդին իր զօրութեամբ ջնջեց Աստուծմէ ապստամբող չորրորդ ահաւոր գազանը, և ի սպառ ։

Եւ հինաւուրց Աստուածը տեսաւ նստած քերովբէական աթոռի վրայ, և որդին՝ որ պիտի գայ երկինքի ամպերուն վրայ, և ։

Մ - *Ո՛վ աստուածածին, երկինքէն աւելի պայծառ, մեր վրայ ծագեցիր մեծ և հրաշալի լոյսը, որով ցրուեցաւ տգիտութեան խաւարը. սերովբէներու յատուկ ձայնով կը գովաբանենք զքեզ և հոգեւոր երգով կը փառաւորենք ։*

Թեթեւ և լուսափայլ ամպ, որ անջրդի երկրին վրայ թափեցիր կենսատու անձրեւը երկնային ծովէն, ահրօբէ ։

Եդեմական պարտէզ, չորս կողմէն գոցուած և Աստուծոյ կողմէն տնկուած, քու դրախտիդ մէջ սուրբ հոգիին տնկած կեանքին ծառը իր անմահ պտուղով լեցուց, կշտացուց տիեզերքը, սերօրէա ։

Ո Գթալով մեզի մարմին հագար, և նորոգեցիր հինցածները, ո՛վ Քրիստոս, նորոգէ՛ մեզ հոգիով, և ողորմէ՛ ։

Խաչին վրայ մեռար մարմինով և զմեզ մեռածները կենդանացուցիր, ո՛վ Քրիստոս, զմեզ ալ ապրեցո՛ւր հոգիով և ողոր։

Մեռելներէն յարութիւն առիր և մեր բնութիւնը արթնցուցիր յարութեան յուսով, ո՛վ Քրիստոս, զմեզ ալ հոգիով արթնցուր և ողոր ։

Քու սիրելի Ղազարոսդ գերեզմանէն դուրս կանչեցիր, զմեզ ալ հոգիով դէպ ի քու կեանքդ հանչէ և ողորմէ ։

Տ Ո՛վ տէր, դժոխքը սոսկաց քու յարութեանդ հրաշալի տեսիլքէն և սարսափելի փայլումէն, և մեռելները ընդհանուր յարութեան հաւատքով արթնցան քեզի հետ, որ ողջ ես յաւէտ ։

Ո՛վ Քրիստոս, երբ հայրական փառքովդ երկնքէն ծագիս և մեռելները արթնցնես, այն միջոցին քու աջ կողմդ դիր և զմեզ կանչէ քու փառքիդ մէջ ։

Երբ քու դատաւորութեանդ երկմատնիով այս աշխարհիս կալը քու արքայութեանդ շտեմարաններուն մէջ հաւաքես, ո՛վ տէր, արդարներուն հետ ժողուէ՛ զմեզ ։

Երբ հարս եղած եկեղեցին իմաստուն սուրբ կոյսերուն հետ քեզի՝ փեսայիդ հետ միանայ, արժանի ըրէ՛ որ մենք ալ անոնց հետ ներքին սենեակը մտնենք և երգենք քու փառքդ բարձունքին մէջ ։

ԿԱՆՈՆ ՄԵԾԻ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻՆ

ԱՀ Անեղն ի հօրէ ծնեալ որդի յանէից գոյացուցեր
ԲՅ զեղեալքս՝ զերկնայինս եւ զերկրաւորս էութիւն, արարածք ամենայն տուք փառս արարչին յաւիտենից :

Պատկեր աներեւոյթ փառացն հօր ի պատկեր բարերարութեան իւրոյ արար զմարդկայինն բնութիւնս, արարածք :

Լոյսն ի հօրէ լուսոյ ծագեալ լուսափայլ զարդարեաց զԱդամ, Ի դրախտին եդեալ անմահ տնկոցն երկրագործ, արա :

Եկայք որդիք մարդկան այսօր ողբասցուք զհօրն զվտանգ, որ մերկացաւ մեղօք զփառս արարչին, եւ զգեցաւ զթզենւոյն ծածկոյթ փոխանակ անճառ լուսոյն:

Գովեսցուք զորդին Աստուծոյ այսօր ցնծութեամբ որդիք Ադամայ, որ եկն ի խնդիր եղծեալ պատկերին, եւ զտեալ նորոգեաց ի փառս առաջին պատմուճանին :

Նոր նորոգող բնութեան մերոյ Յիսուս, որ ի խորհուրդ հնութեան մարդոյն զանպտուղն այսօր չորացուցեր զթզենին, եւ զմեզ ի հնացեալ մեղաց նորոգեա ի կեանս անմահս :

Հ Որ արարիչդ ես յաւիտենից, եւ ստեղծեր զարարածս ամենայն յոչնչէ, զքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց :

Որ թագաւորդ ես թագաւորաց, եւ շնորհես բանաւոր կենդանի մարդ ի հողոյ, զքեզ :

Որ ապաւէնդ ես մոլորելոց, եւ խնամես զյուսացեալսն ի քեզ քո տեսչութեամբ, զքեզ :

Digitized by Google

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւի-
տեան :

Օրհնեցէք զթագաւորն եւ զԱստուածն, որ նմա մի-
այնոյ վայելէ օրհնութիւն, եւ բարձր :

Զի ծանոյց մեզ զսքանչելի խորհուրդ սուրբ Երրոր-
դութեանն եւ զմի աստուածութեանն Քրիստոս եւ բարձր:

Ո Առ ամենեսեան զբած Քրիստոս թագաւոր
խաղաղութեան, զքեզ աղաչեմք միայն մարդասէր :

Որում այսօր փափաքեալ ցանկայր հոգւով եւ մարմ-
նով մայր որդւովք իւրովք խնդրէր զբարձրագոյն զփառս
յերկրին կենդանեաց :

Տուողդ զկեանս անմահ առ քեզ աղաղակեմք եւ
միաբան հայցեմք, շնորհեա եւ մեզ տէր կալ ի յաջմէ
քումմէ :

Տ Զքեզ օրհնեմք որ բաշխողդ ես բարութեանց
եւ հայցեմք որպէս ի մարդասիրէ ընդ մօր՝ քո ընտրե-
լոցն զիմանալի աշխարհն :

Զի դու ես տէր յորմէ հայցէր մայրն հաւատով հան-
դերձ որդւովք սրբեցելովք ընդ աջմէ քո զփառս եւ յա-
ւիտեան, ընդ որս եւ մեք աղաչեմք զի դասեսցես ընդ
սուրբս քո :

Այլ դու բարձրեալ փրկիչ որ վասն մեր խոնարհե-
ցար արժանի արա զմեզ ըմպել զբաժակ պատուիրանին
կենաց քոց տէր, որով կացցուք յաջմէ քումմէ ի հան-
դերձեալ քում գալստեանն :

ՍԿ Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա :

Այսօր ընդ զօրս երկնից համաձայնեալ, միաբա-
նական ձայնիւ երգեմք ասելով, ալէլ :

Երկրաւորք ընդ երկնայինսն, հողեղէնքս ընդ հրե-
ղէնսն միաբա :

ՀԲ Որ յանէից գոյացուցեր զքո զարարածս ի ըս-կըզբանէ, ի պատկեր աստուածութեանդ քո ստեղծեր զմարդ ի հողոյ, ժառանգել նմա զանապական կեանսն :

Իսկ պատրանօք բանսարկուին ի դրախտէն արտաքս անկեալ, ի յաւէժ կենդանութեանն մահառիթ պտղով մեռեալ մերկացաւ զփառս անստուեր լուսոյն :

Այլ դու փրկիչ բարերար որ մարմնացար ի սուրբ կուսէն, եւ հեղմամբ արեանդ քո բարձեր զյանցանս նախաստեղծին, փրկելով զմեզ յանիծից նորա :

Որ ըստ պատրեաց նախահօրն յանձն առիր յօժա-րութեամբ ըմպել զբաժակ չարչարանաց ընդ մեզ որ-դիքն Զեբեդեայ, շնորհեա մեզ տէր զբաժակ քո փրկու-թեան :

Ի միւսանգամ քո գալստեանն յորժամ գաս դատել զերկիր, ընդ նոսին դասաւորեա զմեզ ի փառս յաջա-կողմանն, որով հանգուք մեզ զօրհնութիւն յանսպառ-յաւիտենին :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հայր Աստուծմէ ծնած և մէկէ մը չստեղծուած որ-դին չեղածէն ստեղծեց բոլոր երկնային ու երկրաւոր արարածները, յաւիտենական արարիչին փառք տուէք, ո՛վ բոլոր արարածներ :

Հայր Աստուծոյ փառքին անտեսանելի պատկերը (Քրիստոս) իր բարերարութեան կամ բարերար պատկե-րով ստեղծեց մեր մարդկային բնութիւնը, կամ բոլոր մարդկային արարածները. յաւիտեան արարչին փառք

Digitized by Google

Լոյս Քրիստոս լոյս հայր Աստուածմէ ծագելով լուսափայլ կերպով զարդարեց Ադամը, և դրախտին մէջ դրաւ զայն իբրև երկրագործ անմահ տունկերուն, յաւիտենական արար:

Ո՛վ մարդիկ, եկէք այսօր լանք մեր հօրը (Ադամին) վտանգին վրայ, որ Աստուծոյ փառքը կորսնցուց մեղքով; և անպատմելի լոյսին տեղ թզենիին ծածկոյթը հագաւ:

Ո՛վ Ադամի զաւակներ, այսօր բերկրութեամբ գովեցէք Աստուծոյ որդին, որ իջաւ փնտռելու իր աւրուած պատկերը, և գտնելով նորոգեց առաջին պատմուճանին փառքով:

Ո՛վ Յիսուս, որ մեր բնութիւնը նորոգեցիր և մարդուն հնութիւնը նշանակող անպտուղ թզենին այսօր չորցուցիր, զմեզ ալ հինցած մեղքերէն նորոգէ՛ անմահ կեանքով:

Հ Յաւիտենական արարիչն ես դուն և բոլոր արարածները ոչինչէն ստեղծեցիր, ո՛վ մեր հայրերուն Աստուածը:

Թագաւորներուն թագաւորն ես դուն, և հողէն շնորհեցիր մարդը իբրև բանական կենդանի, կ՚օրհնենք:

Մոլորածներուն ապաստանարանն ես դուն, և քու նախախնամութեամբդ կը խնամես քեզի յուսացողները, կ՚օրհնենք:

Գ Օրհնեցէք Տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն:

Թագաւորը և Աստուածը, որուն միայն կը վայելէ օրհնութիւնը:

Որովհետև Քրիստոս իմացուց մեզի սուրբ Երրոր-

Digitized by Google

դութեան և մէկ աստուածութեան զարմանալի խոր-հուրդը ։

Ո Խաղաղութեան Թագաւոր Քրիստոս, որ ամէնուն վրայ գութ ունիս, քեզի կ'աղաչենք, որովհետև միակ մարդասէրը դուն ես ։

Որուն այսօր հոգիով ու մարմինով կը փափաքէր և կը ցանկար մայրը իր որդիներով մէկտեղ, և կենդանիներուն երկրին (արքայութեան) մէջ ամենէն բարձր փառքը կը խնդրէր ։

Քեզի կ'աղաղակենք և միաբերան կը խնդրենք շնորհ ըրէ՛ մեզի ալ քու աջ կողմդ կենալ, ո՛վ տէր, որ անմահ կեանք կուտաս ։

Տ Կ'օրհնենք զքեզ որ բարիք կը բաշխես, և քու ընտրեալներուդ (Զեբեդեայ որդիներուն) մօրը հետ հոգևոր աշխարհը կը խնդրենք քեզմէ որ մարդասէր ես։

Որովհետև իր սրբուած զաւակներուն հետ մէկտեղ մայրը հաւատքով կը խնդրէր աջ կողմդ և ձախ կողմդ կենալու փառքը, որոնց հետ մենք ալ կ'աղաչենք որ քու սուրբերուդ դասին մէջ դնես զմեզ ։

Ո՛վ բարձրեալ փրկիչ, որ մեզի համար խոնարհեցար, արժանի ըրէ՛ զմեզ, տէր, քու կենսատու պատուիրանիդ բաժակը խմելու, որպէս զի քու ապագայ գալուստիդ ժամանակ քու աջ կողմդ կենանք ։

ՍԿ Օրհնութի՜ւն, օրհնութի՜ւն, օրհնութիւն քեզ տիրոջդ ։

Այսօր երկնային զօրքերուն հետ միաբերան կ'երգենք ու կ'ըսենք, օրհնութի՜ւն, օրհն ։

Մենք՝ երկրաւորներս երկնայիններուն հետ, մենք

Digitized by Google

հողեղէններս հրեղէններուն հետ միաբերան կ'երգենք ու կ'ըսենք ։

ՀԲ Ի սկզբան ոչնչէն առաջ բերիր քու արարածները, և մարդը հողէն ստեղծեցիր քու աստուածութեանդ պատկերով, որպէս զի անպատմելի կեանքը ժառանգէ ։

Իսկ քուկին (սատանային) խաբէութեամբ դրախտէն մերժուեցաւ, մահառիթ պտուղով մեռաւ իր մըշտընջենաւոր կենդանութեան մէջ, և անխաւար լոյսին փառքը կորսնցուց ։

Բայց դուն, ո՛վ բարերար փրկիչ, սուրբ կոյսէն մարմին առիր և քու արիւնդ թափելով նախաստեղծ մարդուն յանցանքը վերցուցիր, անոր տրուած անէծքէն ազատելով զմեզ ։

Նախահայր Ադամին յանցանքին համեմատ Զեբեթեայ որդիները (Յովհաննէս և Յակոբոս առաքեալները) յանձն առին չարչարանքի բաժակը ձեզի հետ խմել. ո՛վ տէր, քու փրկութեանդ բաժակը մեզի շնորհէ՛ ։

Երբ երկրորդ գալուդ երկիրը դատես, անոնց հետ զմեզ աջակողմդ փառքին մէջ տեղաւորէ՛, որպէս զի յաւիտեանս յաւիտենից օրհնենք զքեզ ։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ՄԵԾԻ ԵՐԵՔՇԱԲԱԹԻՆ

Ա. Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւղ լապ-
Բձ տերաց, ելին ընդ առաջ երկնաւոր փեսային
Եւ վառեալ լապտերօք:

Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք ի յիւղոյն անպատրաստ գտան գալստեան փեսային շիջեալ լապտերօք:

Վասն որոյ եւ մեք պատրաստեսցուք իւղ հոգեւոր, զի մտցուք ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք:

Յորժամ յերկնից փառօք գաս Քրիստոս նստիս յաթոռ դատողական, եւ բաժանես զազգս ամենայն, յաջակողմանն քում դասեա զմեզ ընդ օդեացն:

Յորժամ զտաղանդ պատուիրանին պահանջեսցես ի ծառայիցն ընդ կրկնաշահ քանքարացն, արժանացո զմեզ Քրիստոս ուրախութեան քո յերկինս:

Յորժամ կոչես զհրաւիրեալսն ի սկզբանէ աշխարհի ժառանգել զպատրաստեալն, շնորհեա մեզ ընդ նոսին զարքայութիւն քո Քրիստոս:

Հ. Որ սքանչելիդ ես ի բարձունս տէր եւ ահաւոր
Բձ ի մէջ երկրի անուն քո սուրբ, օրհնեալ ես
Աստուած հարցն մերոց:

Որ զհաւատացեալսն ի քեզ պահեալ եւ զչարսն պատժեալ, զործակցօք շրովք սուզմամբ յանդունդս, օրհ:

Որ հաստատեցեր ազգի մարդկան հրով փորձիլ ի յերկրորդումն, պահեա անարատս զքո փրկեալքս, օրհ:

Գ. Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Զթագաւորն յաւիտենից Քրիստոս որ եկն եւ փրկեաց զանձնային արարածս, եւ բարձր :

Որ արար գալստեամբն իւրով զփրկութիւն որդւոց մարդկան, եւ բարձր :

Նոր արարածք պատուեալք ի հրեշտակաց զերծեալք ի խաւարէ առ լոյսն, եւ բարձր :

Ո Թագաւոր փառաց քեզ սպասեսցուք պատրաստեալք արթնութեամբ, ընդառաջել որ գաս ի դատել զերկիր :

Անառակ վառեալ լապտերք հաւատոյ ընդ դասս իմաստուն կուսանացն, մտանել ի յառագաստ ընդ երկնաւոր փեսային :

Փութասցուք կանխել յառաջ քան զձայն աստուածային բարբառոյն, զի մի՛ մնասցուք արտաքս ընդ ճիչման հինգ կուսանացն :

Տ Որ նստիս ի քրոբէս Աստուած բանդ, այսօր վասն մեր խոնարհութեամբ նստար ի լերինն ձիթենեաց, օրհնեմք զքեզ անդադար երգով :

Որ համագոյդ ես խորհրդոցդ հայրենի, աշակերտաց քոց ծանուցեր զխորհուրդ քո գալստեանդ, օրհ :

Որ ամենայնից ես արարիչ եւ ստեղծիչ կենդանութեան, այսօր զծածկեալ խորհուրդ երրորդութեանդ յայտնեցեր եկեղեցւոյ սրբոյ քոյ, օրհ :

ՄԿ Ահաւոր ես թագաւոր քրոբէական ձայնիւ օրհ-
ԵՅ նեալ, ի յերկինս ի յերկրի եւ յամենայն ժամանակի :

Ահաւոր ես թագաւոր որ նորոգես զքո զարարածս, հաստատես ի հաւատս ի գիտութիւն ճշմարտութեան :

Լուսաւորեա զմեզ Քրիստոս ի միաւանգամ քո գա-

Digitized by Google

լուսեղէն, յորժամ ծագիս ի յերկնից եւ նորոգես զքո զարարածս ։

ՀԲ Շնորհեա մեզ տէր արքայութիւն ընդ իմաստուն
ԲՅ կուսանացն, եւ զհոգւոց մերոց լապտերս պայծառացո ։

Երկնչիմք ի քէն տէր զարհուրեալք ի պատասխանւոյն, զամէնն ասելով եթէ ոչ գիտեմ զձեզ ։

Յորժամ գաս փառօք հօր դատել զտիեզերս ամենայն, շնորհեա եւ մեզ տէր կալ ի յաջմէ քումմէ ։

Բացցի մեզ դուռն ողորմութեան երկնաւոր փեսային, եւ մտցուք ի յառագաստ ընդ իմաստուն կուսանսն ։

Ժամանեսցուք ընդ առաջ փեսային եւ մտցուք ի յառագաստ նորա, զի մի՛ մնասցուք արտաքս որպէս զյիմար կուսանսն ։

Պայծառասցին լապտերք հոգւոց մերոց, եւ բազմեցուսցես զմեզ ընդ նահապետսն ի կոչումն արքայութեան երկնից ։

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Իմաստուն կոյսերը իրենց լապտերներուն իւղ պատրաստելով, երկնաւոր փեսան ընդունեցին վառուած լապտերներով ։

Իսկ յիմար կոյսերը իւղի պակասութենէն նեղուելով, փեսային գալու միջոցին անպատրաստ գտնուեցան մարած լապտերներով ։

Digitized by Google

Ուստի մենք ալ հոգեւոր խաղ պատրաստենք, որպէսզի անմահ փեսային ներքին սենեակը մտնենք վառուած լապտերներով։

Ո՛վ Քրիստոս, երբ երկինքէն փառքով գաս եւ դատաւորական աթոռին վրայ նստիս, եւ բոլոր ցեղերը բաժնես, զմեզ քու աջ կողմդ տեղաւորէ ոչխարներուն (արդարներուն) հետ։

Երբ ծառաներէն (մարդոցմէ) պահանջես քու հրամաններուդ տաղանդը (դրամը), կրկինը շահուած քանքարներուն փոխարէն արժանի ըրէ զմեզ երկինքին մէջ քու ուրախութեանդ, ո՛վ Քրիստոս։

Երբ աշխարհի սկսելէն ի վեր հրաւիրուածները կանչես պատրաստուածը ժառանգելու համար, ո՛վ Քրիստոս, քու արքայութիւնդ շնորհէ՛ մեզի անոնց հետ։

Հ Ո՛վ տէր, անքննելի ես երկինքին մէջ, եւ երկրի վրայ ալ ահաւոր է քու սուրբ անունդ, օրհնեալ ես, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Քեզի հաւատացողները պահեցիր (Ջրհեղեղին ժամանակ), չարերը պատժեցիր եւ իրենց գործակիցներով ծովուն ջուրերուն տակ ընկղմեցիր, օրհ։

Եւ որոշեցիր կրակով փորձի ենթարկել մարդկային ազգը քու երկրորդ գալուդ. անվնաս պահէ՛ զմեզ որ քեզմով փրկուած ենք, օրհ։

Գ Օրհնեցէք տէրը եւ ի սպառ փառաւորեցէք զայն։

Քրիստոս յաւիտենական Թագաւորը որ եկաւ եւ բոլոր արարածները փրկեց, եւ ի սպառ։

Որ իր գալովը փրկեց մարդիկը, եւ ի սպառ։

Նոր արարածներ, որ հրեշտակներէն պատուուեցաք եւ խաւարէն ազատուելով դէպ ի լոյս գացիք, ի սպառ։

Digitized by Google

Ո : *Փառաւոր Թագաւոր, արթուն և պատրաստ քեզի պիտի սպասենք, զքեզ դիմաւորելու համար որ երկիրը դատել կուգաս :*

Իմաստուն կոյսերուն խումբին հետ հաւատքին լապտերները պայծառօրէն վառած ենք՝ երկնաւոր փեսային հետ ներքին սենեակը մտնելու համար :

Աստուածային ձայնէն առաջ կանխենք և փութանք որպէս զի դուրսը չմնանք հինգ կոյսերուն պէս, որոց լապտերները մարեցան :

Տ *Ո՛վ բանդ Աստուած, որ քերոբէներուն վրայ կը նստիս, այսօր մեզի համար խոնարհութիւն ըրիր, և ձիթենեաց լերան վրայ նստար, կ'օրհնենք զքեզ անդադար երգով :*

Քու աշակերտներուդ իմացուցիր (երկրորդ) գալուստիդ գաղտնիքը, դուն որ գիտես բոլոր հայրենի խորհուրդները, հօր Աստուծոյ էակից ըլլալով, կ'օրհ :

Դուն որ զամենքը ստեղծեցիր և բոլոր կենդանի արարածները առաջ բերիր, այսօր քու սուրբ եկեղեցիիդ յայտնեցիր երրորդութեան թաքուն խորհուրդը, կ'օրհ :

ՄԿ *Անհաւոր Թագաւոր ես դուն որ քերոբէներուն ձայնով կ'օրհնուիս երկնքի և երկրի մէջ և ամեն ժամանակի մէջ :*

Անհաւոր Թագաւոր ես դուն որ քու արարածներդ կը նորոգես և կը հաստատես հաւատքին մէջ, ճշմարտութեան գիտութեան մէջ :

Ո՛վ Քրիստոս, լուսաւորէ զմեզ քու երկրորդ գալուդ, երբ երկինքէն ծագիս և քու արարածներդ նորոգես :

Digitized by Google

ՀԲ Ո՛վ Տէր, շնորհ ըրէ՛ որ մենք ալ արթուն ըլլանք իմաստուն կոյսերուն հետ, և մեր հոգիներուն լապտերները պայծառ պահէ՛ ։

Ո՛վ Տէր, կը վախնանք քեզմէ, կը զարհուրինք այն պատասխանէն թէ՝ իրա՛ւ իրա՛ւ կ՚ըսեմ որ զձեզ չեմ ճանչնար ։

Երբ հօր Աստուծոյ փառքով գաս ամբողջ աշխարհը դատելու, շնորհ ըրէ՛, ո՛վ Տէր, որ մենք ալ քու աջ կողմդ կենանք ։

Թո՛ղ բացուի մեր առջև երկնաւոր փեսային ուրախութեան դուռը, և իմաստուն կոյսերուն հետ ներքին սենեակը մտնենք ։

Հանդիպինք փեսային առջևը, և անոր ներքին սենեակը մտնենք, որպէս զի յիմար կոյսերուն պէս դուրսը չմնանք ։

Թո՛ղ պայծառանան մեր հոգիներուն լապտերները, և բազմեցո՛ւր զմեզ անոնց հետ որք երկնային արքայութեան հրաւիրուած են ։

ԿԱՆՈՆ ՄԵԾԻ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻՆ

ԱՀ Որ յաթոռ փառաց բազմեալ ընդ Հօր անըս-
ԳՅ կզբնակից Բանդ, այսօր բազմիլ ընդ հողե-
ԻԵ ղէնս յանձն առեր, օրհնեմք զենեալդ ի փրկութիւն աշխարհի:

Որ անճառ աստուածութեամբդ օծեալ զքո ծառայական կերպ, այսօր հանեցար օծանիլ իւղով ի մեղաւորաց, օրհ:

Որ կենարար թաղման քո զուշակ զիւղոյն ծանուցեր զօծումն, այսօր Յուդային յայտնեցաւ խորհուրդ արծաթսիրութեանն, օրհ:

Որ խորհրդեամբ ընդ Հօր եւ Հոգւոյն, արար ի պատկեր իւր զմարդն առաջին, այսօր որդիք մարդկան ժողովեալ խորհին մատնել ի մահ զորդին Աստուծոյ:

Յուդայ սիրոյն աշակերտ փոխանակեաց զատելութիւն առ վարդապետին, մատնելով քահանայիցն ընդ երեսուն արծաթոյ:

Որ զամենայն տնօրինաբար կամաւ յանձն առեր փրկիչ ընդ մեղաւորացս, վասն անճառ խոնարհութեանդ քո եւ մեզ ողորմեաց:

Հ Որ խորհրդոց ես տէր Աստուած անմահ, ըզծածկեալ խորհուրդ չարին ապականեալ վանեա՛, զքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց:

Որ զնախնոյն Աբրահամու զհանդէս խորագոյնս ծանուցեր աւետեօք որդւոյն պատուեալ, զքեզ:

Որ շնորհես ծածկելոց յայտնի զոլ, յուդաս արծաթոյ զանհասանելին մատներ, զքեզ:

Digitized by Google

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեանս :

Զընծայեալն ի վերին զօրսն ծածկապակս խորհուրդ, քահանայքն հոլոնեալ վաճառէին զԱստուած, եւ բարձր:

Որ վասն մեր համբերեաց բանսարկուին, կամաւ վաճառի Աստուած բանն, եւ բարձր :

Ո Զքէն խորհեցան ի չարութիւն Աստուած յաւիտենից, որ բանիւ զարարածս խորհրդով հիմնեցուցեր :

Զքեզ որ արարիչդ ես մեծութեան արծաթոյ վաճառէին, յանձն առեր զամենայն համբերելով վասն մեր :

Զքեզ որ թագաւորդ թագաւորաց ի ծառայէ դատապարտեալ, զի զմեզ փրկեսցես ի յանիծիցն Ադամայ:

Տ Այսօր եկեալ կամաւ փրկիչն առ ի մատնիլ յանօրէն ժողովրդեն, վասն փրկութեան հեթանոսաց :

Այսօր բանն մատնի ի բանաւոր հօտէ եւ յառաջնոց դատապարտի յանօրինաց ժողովրդեն, վասն :

Այսօր հողն զՏէրն դատապարտէ, եւ արծաթոյ վաճառի արարիչն արարածոց, վասն փր :

ՄԿ Նոր սքանչելիք այսօր տեսանեմք յաշխարհի ի
ՀՔ մէջ հողեղինաց, արարածք արարչին սպանութեան խորհին զխորհուրդ :

Որ բանիւն իւրով զերկինս եւ զերկիրս հաստատեաց յոչնչէ գոյացուցեալ, վաճառի այսօր դիւրագին ընդ երեսուն արծաթոյ:

Ո՛վ յուդաս արտասունելի, երկնաւոր վարդապետին սպանութեան խորհիս զխորհուրդ, մատնելով անօրինաց զի խաչեսցի ի մէջ երկրի :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ բանդ Աստուած, որ սկիզբ չունենալով հայր Աստուծոյ հետ փառքի աթոռին վրայ կը նստիս, այսօր յանձն առիր հողային մարդոց հետ նստիլ, կ'օրհնենք զքեզ որ աշխարհը փրկելու եկար ։

Քու անպատմելի աստուածութեամբ օծուած մարդկային կերպարանքդ մեղաւորներէն իւղով օծել հաւանեցար այսօր, կ'օրհ ։

Իւղին օծումը իբրև քու թաղմանդ նշան ցոյց տուիր. այսօր յայտնուեցաւ նաև Յուդային արծաթասիրութեան գաղտնիքը, կ'օրհ ։

Այսօր մարդիկ ժողով գումարելով կը խորհին մահուան մատնել Աստուծոյ որդին, որ հայր Աստուծոյ և հոգի Աստուծոյ հետ խորհրդակցելով՝ իր պատկերին համեմատ ստեղծեց առաջին մարդը ։

Սիրելի աշակերտ Յուդան սիրոյ տեղ ատելութիւն փոխարինեց իր վարդապետին, երեսուն արծաթին փոխարէն քահանաներուն մատնելով ։

Ո՛վ փրկիչ, որ ամէն բան կամքովդ յանձն առիր աստուածային կարգադրութեամբ, մեղաւորներուս տեղ, մեզի ալ գթա՛ քու անպատմելի խոնարհութեանդ համար ։

<u>Հ</u> Ո՛վ անմահ Աստուած, դուն որ բոլոր խորհուրդներուն, գաղտնիքներուն տէրն ես, չար սատանային թագուն խորհուրդը ի դերև հանէ՛ և հալածէ՛, կ'օրհնենք զքեզ, ո՛վ մեր հայրերուն Աստուածը ։

Աբրահամ նահապետին հաւատքին փորձը աւելի խոր

Digitized by Google

կերպով յայտնեցիր, զայն պատուելով զաւակ մը ունենալու բարի լուրով, կ'օրհ։

Յուդա սատակ առնելով կը մատնէր զքեզ որ անըմբռնելի ես, և երեւան կը հանես բոլոր գաղտնիքները, կ'օրհ։

Գ Օրհնեցէք տէրը և բարձր փառաւորեցէք զայն

Քահանաները ժողով գումարելով կը ծախէին Աստուածը, որ երկնային զօրքերուն մէջ կը բնակի և թագուն խորհուրդ մ'է անոնց մէջ։

Բանն Աստուած իր կամքովը կը ծախուի, նա որ սատանային փորձութեան համբերեց։

Ո Ո՛վ յաւիտենական Աստուած, չարիք խորհեցան քու վրադ, որ խօսքովդ և խորհրդով հիմնեցիր արարածները։

Սատակով կը ծախէին զքեզ որ հարստութիւնը ստեղծեցիր, ամէն բանի յանձնառու եղար և համբերեցիր մեզի համար։

Ծառայէն (մարդոցմէ) դատապարտուեցար դուն որ թագաւորներուն թագաւորն ես, որպէսզի զմեզ ազատես Ադամին տրուած անէծքէն։

Տ Այսօր փրկիչը իր կամքով եկաւ մատնուիլ անօրէն ժողովուրդէն, հեթանոսները փրկելու համար։

Այսօր բանն Աստուած կը մատնուի բանական հօտէն (մարդոցմէ), և կը դատապարտուի ժողովուրդին անօրէն գլխաւորներէն, հեթանոսն։

Այսօր հողը (մարդիկ) կը դատապարտէ տէրը, և արարածներուն արարիչը սատակով կը ծախուի, հեթանոսն։

Digitized by Google

ՄԿ Նոր հրաշք մը կը տեսնենք այսօր աշխարհի
ՀԷ վրայ հողեղէն մարդոց մէջտեղ . արարածները կը խորհին մեռցնել իրենց արարիչը ։

Այսօր երեսուն արծաթի տեղ չար ազգն կը ծախուի նա որ իր խօսքով ոչինչէն հաստատեց երկինքն ու երկիրը ։

Ո՛վ ցաւալի և արգահատելի Յուդա , կը խորհիս մեռցնել երկնաւոր վարդապետը , մատնելով զայն անօրէններուն , որպէս զի երկրին մէջտեղ խաչուի ։

ԿԱՆՈՆ ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ

Վերաձգողն երկնից մօտնչենաւոր հօր որդին, ներգործեալ իմովս ի վեր քան զիրաւս, ծառայի առեալ զկերպ անկողոպտելի աստուածութեամբն :

Բանին զմաքրեցելոցն ջրով զոտս լուանայ, զի զխոնարհութիւն ի նոսա տպաւորեսցէ, երրորդութեանն զոյ օթեվան :

Բաշխէ զմարմին իւր եւ զարիւնն նոր ուխտ անուանեալ եւ յիշատակ կամաւոր մահուանն, մերձեցելոցն ի նա սրբութեամբ :

Աղբիւր լուսոյ եւ ճառագայթ անէջանելի լոյս, որ լուանալ յանձն առեր զոտս աշակերտացն, մաքրեա ի մէնջ զմեզ խաւարին խորհրդոյ եւ լուսաւորեա զմեզ:

Որ մարմնով եւ արեամբ քո ցուցեր զթողութիւն մեղաց, որ միշտ պատարագիս ի մեզ անծախապէս, մաքրեա :

Որ քաւիչ զայս նոր ուխտ ցուցեր յետ առաջնոյ քոյ մահացելոցս ի ճաշակմանէ նախահօրն, մաքր :

Որ եսդ ի յերկինս եւ ի վերայ երկրի, այսօր յանձն առեր լուանալ զոտս աշակերտացն, եւ զիս լուա Քրիստոս ի մեղաց իմոց :

Որ քարեքանիս յիմանալի զուարթնոցն, հաճեցար մարմնով պատարագիլ, առա եւ զիս արժանի աստուածային շնորհիդ :

Որոյ աթոռ քերոբէ՝ ի վերնատունն բազմեցար, կենարար բաժակաւդ զմեզ փրկեցեր, փրկեա եւ զիս յաւիտենից ի հրոյն :

Digitized by Google

Քրիստոս Աստուած որ վասն մեր խոնարհեցար ի կամաւոր չարչարանս, լուացեր զոտս աշակերտացն այսօր ի սուրբ վերնատունն, աղաչեմք՝ փրկիչ ողորմեա՛:

Որ կազմեցեր սեղան խորհրդոյ եւ արբուցեր յանմահական բաժակէն սրբոց քոց առաքելոցն այսօր ի սուրբ վերնատանն, աղաչ:

Մաքրեա զմիտս եւ զխորհուրդս զի եւ մեք հաղորդիցուք սրբութեամբ, ընդ սրբոց քոց առա:

Որ վասն մեր յերկրի երեւեալ զամենայնն կատարեցեր ըստ օրինացն այսօր ի կատարումն ստուերական տօնիցն, որդի Աստուծոյ ողորմեա:

Մարդ ճշմարիտ եւ գառն անարատ որ դատապարտեցեր զմեղս ի մարմնի, այսօր խոնարհեցար ի լուանալ զոտս աշակերտացն, որդի:

Բան հօր եւ քահանայապետ ճշմարիտ, որ զաշխարհակեցոյց զմարմին եւ զարիւնդ քո բաշխեցեր յառաքեալսն, այսօր հաղորդին հողեղէնքս աստուածային խորհրդոյդ, որդի:

Յորմէ սարսեալ սերոբէքն ոչ իշխէին նայիլ, այսօր ի ծառայի կերպարանս եղեալ նախայաւիտեան բանն, օրհնեցէք զնա հոգեւոր երգով:

Որ զստուերակերպն այսօր ճշմարտապէս կատարեաց, լուանալով զոտս աշակերտացն ի պատրանաց թշնամւոյն, օրհնեցէք:

Այսօր վերստին նորոգեցաք ի յանիծից նախահօրն, ճաշակելով զմարմին եւ զարիւն որդւոյն Աստուծոյ, օրհ:

Հ Լոյսդ ի հայրական ծոցոյ ծագեալ հալածելով
ՔՅ զխաւար մեղաց, կենարարդ յայտնեցեր այսօր զխորհուրդ ընտրեալ քո աշակերտացն, օրհնեալ եկեալդ ի փրկութիւն մեզ Աստուած հարցն մերոց:

Digitized by Google

Զոր օրհնեն դասք լուսեղէնք՝ զոտս տաժանեալս լուացեր զանիծիցն մերկացեալ ի մէնջ ծածկոյթ, զգեստ ծառայի սփածար, օրհ:

Անապականութեան աղբիւր զկենդանարար բաշխեցեր զմարմինդ քո, նորոգելով զմահացեալսն յանցանօք ի պատրանաց թշնամւոյն, օրհ:

Գ Ծառազայթ փառաց հօր եւ պատկեր բարերարութեան, որ զգեցաւն այսօր զգեստ ծառայական կերպի, զնա ամենայն ազինք օրհնեցէք հոգեւոր երգով:

Որ անճառ խոնարհութեամբ ի մաքրումն ոտից աշակերտացն զմարդկայինն ազգի զնացս ուղղեաց ի յերկինս, զնա:

Որ բաշխմամբ կենդանարար խորհրդոյ անապական ճաշակմամբն, հրաւիրեաց զմեզ յերկնից արքայութիւնն, զնա:

Ո ԿՁ Արկողդ զլոյս որպէս զօթոց այսօր անճառ խոնարհութեամբ ի վերնատունն խորհրդոյ ընդ զգեստ ծառայի սփածանիլ յանձն առեր, օրհնեմք զեկեալդ ի կամաւոր չարչարանս:

Որում երկրպագեն դասք հրեշտակաց՝ խոնարհեցար ի լուանալ զոտս հողեղէնս, բժշկել սոքօք զգարշապարս նախահօրն, բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնս:

Որ ի խորհուրդս փրկականս եկեղեցւոյ բաշխեցեր աշակերտացն զմարմինդ քո, նորոգելով զմահացեալսն ի ճաշակմանէ, հաղորդս այսմ ընկալ զմեզ միայն մարդասէր:

Տ Որ անսկիզբն էութեանդ ես Աստուած այսօր զգեցար զգեստ հողեղէն ծառայի, ծածկելով զմերկութիւն նախահօրն, օրհնեալ եկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան:

Digitized by Google

Որ ի վեր օրհնիս ի հրեղէն քերովբէից, այսօր եկիր կամաւ ի վերնատունն խորհրդոյ լուացեր զառաքելոցն յօրինակ վասն մեր, օրհն:

Որ յաթոռ փառաց նստիս ընդ հօր, այսօր բազմիլ ընդ առաքելոցն յանձն առեր բաշխելով զմարմին եւ զարիւն քո սուրբ, օրհն:

Մե Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան, ի քաւութիւն մեղաց մերոց:

Այսօր տէրն մեր լուանայր զոտս առաքելոցն, եւ պատուիրէր զայս առնել:

Մի ոմն ի ձէնջ եղբարք մատնելոց է զիս ի մահ, եւ որոշի յառաքելոցդ:

Ձայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս, հարցանել թէ ո՛վ իցէ:

Բանն զոր ասաց Յիսուս տրտմեցոյց զիւր առաքեալսն եւ խռովեցան ամենեքեան:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հայր Աստուծոյ միշտնջենաւոր որդին, որ երկինքը կամարի մը պէս տարածեց, ստեղծեց, իմ (մարդկային) բնութիւնս առնելով սքանչելի գործեր կատարեց, ծառայի (մարդու) կերպարանք առաւ՝ առանց սակայն կորսնցնելու իր աստուածութիւնը:

Ջրով կը լուայ ոտքերն անոնց որք մաքրուած էին իր վարդապետութեամբ, որպէս զի անոնց վրայ տպա-

ւորէ խոնարհութիւնը ; և անոնք երրորդութեան բնակարան ըլլան ։

Իր մարմինը և արիւնը կը բաշխէ իբրև Նոր ուխտ և իբրև յիշատակ իր կամաւոր մահուան մեզի համար որ սրբութեամբ անոր մօտենանք ։

Ո՛վ լոյսի աղբիւր և ո՛վ անմարմնի լոյսին ճառագայթը, որ յանձնառու եղար աշակերտներուն ոտքերը լուալու, սրբէ՛ մեր վրայէն խաւարային խորհուրդներուն. մշուշը և լուսաւորէ՛ զմեզ ։

Քու մարմինով և արիւնով մեղքերու թողութիւն ըրիր, և միշտ կը պատարագուիս առանց երբէք սպառելու, սրբէ՛ մեր ։

Քու առաջին ուխտէդ վերջ այս Նոր ուխտը ցոյց տուիր իբրև մեղքի թողութիւն մեզի՝ որ մեռանք նախահայր Ադամին (արգիլուած պտուղը) ուտելէն, սրբէ՛ ։

Այսօր յանձն առիր լուալ աշակերտներուն ոտքերը դուն որ երկինքին մէջ և երկրի վրայ ես. ո՛վ Քրիստոս, զիս ալ լուա՛ իմ մեղքերէս ։

Դուն որ հրեշտակներէն կը գովաբանուիս, հաճեցար մեր բնութիւնը առնելով իբրև պատարագ մատուցուիլ, զիս ալ քու աստուածային շնորհքիդ արժանի ըրէ՛ ։

Վերնատան մէջ նստեցար դուն որուն աթոռ են քերովբէները, կեանք տուող բաժակովդ զմեզ փրկեցիր, զիս ալ փրկէ՛ յաւիտենական կրակէն ։

Քրիստոս Աստուած, որ մեզի համար քու ազատ կամքովդ զիջում ըրիր չարչարուելու, այսօր վերնատան մէջ լուացիր աշակերտներուն ոտքերը, կ՚աղաչենք ողորմէ՛ մեզի, ով փրկիչ ։

Digitized by Google

Խորհրդաւոր սեղան մը պատրաստեցիր այսօր, և սուրբ վերնատան մէջ քու առաքեալներուն խմցուցիր անապականելի կենաց տուող բաժակէն. կ'աղաչ ։

Մեր միտքն ու խորհուրդները մաքրէ՛ որպէսզի մենք ալ սրբութեամբ հաղորդ ըլլանք քու սուրբ առաքեալներուդ հետ ։

Մեզի համար երկրի վրայ երեւելով, այսօր ամէն բան գործադրեցիր Մովսիսական օրէնքին համեմատ ստուերական (իբրեւ օրինակ ծառայող) տօները կատարելով. ողորմէ՛ ։

Ճշմարիտ մարդ և անարատ գառնուկ, որ մեղքերը դատապարտեցիր քու մարմինիդ վրայ, այսօր զիջում ըրիր աշակերտներուն ոտքերը լուալու. ո՛վ աստուածորդի, ողորմէ՛ ։

Ո՛վ հայր Աստուծոյ որդին, և ճշմարիտ քահանայապետ, որ առաքեալներուն բաշխեցիր քու մարմինդ և արիւնդ, այսօր հոգեղէն մարդիկ կը մասնակցին քու աստուածային խորհուրդիդ. ո՛վ աստուածորդի, ողորմէ՛ ։

Հոգեւոր երգերով օրհնեցէք բանն Աստուածը, որ ամէն ժամանակներէ կանուխ կար. որմէ սոսկալով սերոբէները չէին համարձակեր նայիլ, այսօր ծառայի կերպարանք առած է ։

Եւ այսօր ճշմարիտ կերպով կատարեց ինչ որ (ատենօք) ստուեր կամ օրինակ էր միայն, աշակերտներուն ոտքերը լուալով թշնամիին (սատանային) խաբէութիւններէն ։

Այսօր դարձեալ նորոգուեցանք նախահայր Ադամին անէծքէն, Աստուծոյ զաւկին մարմինն ու արիւնը ճաշակելով ։

Digitized by Google

Է Ո՛վ լոյս Քրիստոս, հայրական ծոցէն ծագելով հալածեցիր մեղքին խաւարը, և դուն որ կեանք կուտաս, այսօր քու ընտրեալ աշակերտներուդ յայտնեցիր խորհուրդը. օրհնեալ ըլլաս դուն որ եկար զմեզ փրկելու, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Անէծքին վերարկուն մեր վրայէն հանելով լուացիր յոգնած ոտքերը դուն՝ որ կ՚օրհնուիս հրեշտակներուն լուսեղէն խումբերէն, սպասաւորի զգեստ հագար, օրհ։

Դուն որ անապականութեան աղբիւր ես՝ բաշխեցիր քու կենդանարար մարմինդ, թշնամիին (սատանային) խաբէութեան հետեւանքն եղող յանցանքով մեռնողները նորոգելով, օրհ։

Գ Հայր Աստուծոյ փառքին ճառագայթը և անոր բարերարութեան պատկերը այսօր ծառայական կերպարանք ցոյց տուող զգեստ հագաւ. ո՛վ դուք բոլոր ազգեր, օրհնեցէք զայն հոգեւոր երգերով։

Աշակերտներուն ոտքերը լուալով անպատմելի խոնարհութեամբ, մարդկային ազգին ընթացքը դէպ ի երկինք ուղղեց. ո՛վ դուք։

Կենդանարար խորհուրդը բաշխելով և (իր մարմինն ու արիւնն) անապական ճաշակումով հրաւիրեց զմեզ երկնային արքայութեան. ո՛վ դուք։

Ո Դուն որ լոյսը կը հագնիս զգեստի պէս մարմնոյդ ամէն կողմը, այսօր յանձնառու եղար սպասաւորի զգեստ հագնելու խորհրդաւոր վերնատունին մէջ անպատմելի խոնարհութեամբ. կ՚օրհնենք զքեզ որ քու ազատ կամքովդ եկար չարչարուելու։

Հոգեղէն ոտքերը լուալու զիջում ըրիր դուն որուն

երկրպագութիւն կ'ընեն հրեշտակներուն դասերը, առնցմով (աշակերտներուն ոտքերով) բժշկելու համար Նախահայր Ադամին (դէպ ի ծառը գացող) ոտքերը. բժշկէ՛ իմ հոգւոյս հիւանդութիւնները։

Քու մարմինդ բաշխեցիր աշակերտներուն իբրև փրկութեան խորհուրդ մը (քրիստոնէական) եկեղեցիին համար, (Ադամին կերած) պտուղէն մեռնողները նորոգելով. ո՛վ դուն որ միակ մարդասէրն ես, զմեզ այդ խորհուրդին հաղորդեցո՛ւր։

Տ Ո՛վ Աստուած, որ էութեամբ անմեկնելի ես, այսօր հողեղէն սպասաւորի զգեստ հագար Ադամին մերկութիւնը ծածկելով. օրհնեալ ըլլաս, որ եկար մարդկային ազգը փրկելու։

Դուն որ երկինքին մէջ կ'օրհնուիս հրեղէն քերովբէներէն, այսօր ազատ կամքովդ խոնարհդաւոր վերնատունը եկար և մեզի օրինակ ըլլալու համար աշակերտները լուացիր, օրհնեալ։

Դուն որ փառքի աթոռին վրայ կը նստիս հայր Աստուծոյ հետ, այսօր յանձն առիր աշակերտներուն հետ նստիլ, քու սուրբ մարմինդ և արիւնդ բաշխելով, օրհ։

ՄԿ Այսօր մկրտութեան աւազանը բարձրացաւ մեր մեղքերուն թողութիւն ըլլալու համար։

Այսօր մեր տէրը աշակերտներուն ոտքերը կը լուար, և այս պատուէրը կուտար ըսելով.

Ո՛վ եղբայրներ, ձեզմէ մէկը զիս մահուան պիտի մատնէ, և անիկա (մատնիչը) կը բաժնուի քու աշակերտներէդ։

Պետրոս զայն լսելով Յովհաննէսին աչք ըրաւ հարցնելու համար թէ ո՛վ է։

Յիսուսի ըսած խօսքը տրտմեցուց իր աշակերտները, և ամենքը շփոթեցան։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒՆ

ԱՀ Այսօր ի կատարումն աստուածայինն ընթրեաց
ՏԾ նոր ուխտի ճշմարտութեան քո, ի վերնատունն
ԽԲ խորհրդոյ տարամերժեալ Յուդաս ի հօտէն փո-քու, ուստի եւ դու զառն Աստուծոյ դիմեալ կամաւ ի մահ խաչին առ ի բառնալ զմեղս աշխարհի. վասն որոյ խնայեա ի մեզ Քրիստոս կամաւոր քո չարչարանօք:

Այսօր որ ի հրեղէն զօրաց երկնից մհօտ փառաբանեալ երկրպագիս բանդ, աղօթէիր առ հայր մարմնով ընկալեալ ընդ հօր զքո վասն իմ զպաղատանս, ուստի կամաւ կրելով զերկիւղ ի հրեշտակաց զօրանայիր զօրացուցիչդ երկնաւորաց եւ երկրաւորաց, վասն որոյ:

Այսօր յառաջ նշանակեալ հրամանն քո կատարիւր յաշակերտաց դասն, քանզի զհովիւդ քաջ հարեալ ցրուեցաւ հօտն ըստ մարգարէին, որ եւ կապեցար անկապելիդ; ի յաննայէ եւ ի կայիափայ դատապարտեալ, ի ծառայէ ապտակեցար եւ նախատանաց թուք կերպարանդ հօր ընկալար, վասն:

Այսօր զվէմն հաւատոյ շարժեալ փորձողին խաբէութեան մարտ, առ ի քէն թողացուցեալ զմարդկային տկարութիւնս յանդիմանելով, եւ առ յոյս դարձի մեղաւորաց որ դառնապէս արտասուելովն ընկալաւ ի քէն երիւք հարցմամբ սիրոյն զերից ուրացութեանցն զբժըշ-կութիւն. ընդ նմին բժշկեա զմեզ Քրիստոս եւ շնորհեա մեզ արտասուս ապաշխարութեան:

Այսօր զոր յերկնային լուսեղինացն անհիւ պատեալ բանդ Աստուած, նսեմացեալ դասք եբրայեցւոցն զիմանայի

Digitized by Google

լոյսդ ի գիշերին ջահիւք եւ սուսերօք եկեալ ըմբռնել զանըմբռնելիդ · վասն որոյ երկրպագեմք անհասանելի քո խոնարհութեանդ :

Այսօր զոր սերովբէքն ծածկէին զդէմս յահէ փառաց աստուածութեանդ , իսկ կորստեան որդին յուդաս ի համբոյր մերձեալ նենգութեամբ , նշանակ եւ առիթ մահու անմահիդ , վասն որոյ :

Այսօր ընդ զերազոյն տնօրէնութեանդ քո որդի Աստուծոյ , հոյլք անմարմնոցն հրաքուն սեռիցն պակուցեալ զարմանային տեսանելով զանտեսանելիդ մատնեալ կամաւ ի ձեռս մեղաւորաց , վասն որոյ :

Այսօր բարեկամք եւ մերձաւորք քո հեռի եղեն ի քէն Քրիստոս , օտարացան եւ եղբարք քո, եւ ցուլք գէրք պաշարեցին որք ի դպրաց եւ ի փարիսեցւոց, եւ շուրջ եղեն շունք բազում պիղատոսի եւ հերովդէի , վասն :

ԲՁ Արծաթասիրութեամբն մոլեալ Յուդա , զիւր զմեծ զվարդապետն ընդ երեսուն արծաթոյ հրէիցն մատնէր :

Ընդ որում ես համբուրեցից ասէ՝ զնա կալարուք , ո՛վ համբոյր նենգութեան նշան եւ առիթ մահու :

Մերկացաւ յինքենէ զաստուածային սուրբ հոգին , եւ զգեցաւ զսատանայ՝ որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ :

Ի գիշերին յորում մատնիւր փրկիչն մեր ի մահ խաչին , եւ ի լեառն ձիթենեաց , աղօթելով զայս ասէր . հա՛յր , անցո՛ յինէն զբաժակս :

Իսկ անօրէն աշակերտին թողեալ զգութ սիրոյ նորա եւ փութայր առ քահանայսն , ասէր ինձ զինչ կամիք տալ զի մատնեցից զվարդապետն :

Digitized by Google

Ժողովեալ հրէիցն կշռեցին արծաթ բազում, առ-եալ տարան առ պիղատոս, ասեն ի խաչ հան ի խաչ, զի հայհոյիչ է օրինաց:

Հ Իջեր ի յերկնից անսկիզբն որդի, ի հողեղէն ի
Եշ բնութենէ մարդկան զչարչարանս յանձն առեր; օրհնեմք զքեզ որ էիր յառաջ քան զամենայն յաւիտեանս:

Որ ասացեր բանիւ լինել ամենայն երկրի, ի յերկրի յատենի կացեալ տնանկին արարածք, օրհ:

Յորմէ դողան զուարթունք երկնից, այսօր եկիր կամաւ ի խաչ զեղարդեամբն խոցեցար, օրհ:

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք յաւիտեան:

Եւ զինուորն զեղարդեամբն յարձակեալ խոցեաց զկող կենարարին, բար:

Ուստի աղբիւր կենդանարար բղխեալ լուաց զտիե-զերս ի մեղաց, բարձր:

Ո Եկեալ ի փրկութիւն ազգի մարդկան, ի ծա-ռայէ յանձն առնու մատնիլ ի դատաստան, համբերելով վասն զմեզ կեցուցանել:

Մատնեալ պիղատոսի որպէս մահապարտ, ի յաննա-յէ եւ ի կայիափայ դատապարտեալ, համբերէր:

Կացեալ ի յատենի երկրորդ Ադամ, վասն առա-ջինն Ադամայ պարտեացն թողութեան, համբերէր:

Ց Ո՛վ սքանչելիք եւ տեսիլ ահաւոր, զարարիչն երկնի եւ երկրի այսօր տեսաք ի խաչի:

Տեսեալ զտէրն ի խաչին խաւարեցաւ արեգակն, եւ վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ի վայր:

Անարգաբար խաչեցաւ տէրն ի մէջ ի յանօրինաց, զի լցցի գիրն որ ասէ թէ ընդ անօրէնսն համարեցաւ:

ՄԿ Որ թագաւորդ ես թագաւորաց Քրիստոս ի

Digitized by Google

Բյ Ծառայք դատապարտեալ համբերելով վասն մեր, երկայնամիտ տէր քեզ փառք:

Որ պատուական խաչիւդ քո Քրիստոս եւ սուրբ արեանդ քո հեղմամբ կեցուցանել զմեզ կամեցար, երգ:

Որ մարդասիրապէս վասն ամենեցուն ամենայնի համբերեցեր, եւ ի մահու զմահ կոխեցեր, երգ:

Հբ Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք սուրբ
գր երրորդութեանն, լոյսն որ ընդ հօր է յէու-
Գյ թեան, ի քահանայից դատապարտեալ եկեալ ի
խաչ ելանել, անմահ թագաւորն:

Զոր երկինք ոչ բաւէին տանել, զփայտ պատուհասի ուսով բարձեալ եւ եկեալ ի տեղի կառափման ի խաչ ելանել, անմահն:

Հիացեալ պետութեանց երկնից ընդ թաղումն տեառն ի նոր գերեզմանին, քանզի որ անմահն է յէութեան վասն արարածոց փրկութեան զմահ ճաշակեաց, անմահն:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Այսօր երբ քու ճշմարիտ նոր՝ ուխտիդ աստուածային ընթրիքը կը կատարէիր խորհրդաւոր վերնատունին մէջ, Յուդան հեռացաւ մերժուեցաւ փոքր խումբէն. ուստի դուն ալ, ո՛վ Աստուծոյ գառնուկ, ազատ կամքովդ դիմեցիր խաչին մահուան աշխարհի մեղքը վերցնելու համար. ուրեմն, ո՛վ Քրիստոս, խնայէ՝ մեզի քու կամաւոր չարչարանքներովդ ։.

Ո՛վ բանդ Աստուած, զոր հրեղէն երկնային զօր-

քերը մինչ երկրպագութեամբ կը փառաբանեն, այսօր մարմնով (իբրև մարդ) աղօթք կ'ընէիր հայր Աստուծոյ, (իբրև Աստուած) ընդունելով քու հօրդ հետ ինձի համար իբրև մարդ քու ըրած աղաչանքդ. ուստի ազատ կամքովդ վախի ենթարկուելով, հրեշտակներէն կը զօրանայիր դուն որ երկնաբնակներուն և երկրաբնակներուն զօրութիւն տուողն ես, ուրեմն:

Առաջուց ակնարկած քու հրամանդ (խօսքդ) այսօր կը կատարուէր աշակերտներուն խումբին վրայ, որովհետև մարգարէին ըսածին պէս՝ քաջ հովիւը զարնուելով հօտն ալ ցրուեցաւ. կապուեցար դուն զոր կապել անկարելի է, Աննայէն և Կայիափայէն դատապարտուեցար, (քահանայապետին) ծառայէն ապտակուեցար, և նախատալից թուք ընդունեցիր դուն որ հայր Աստուծոյ կերպարանքն ես. ուրեմն:

Փորձիչ սատանային խաբէական պատրանքը քու թոյլատուութեամբդ այսօր նեղը ձգեց հաւատքին վէմը (Պետրոս առաքեալը), իբրև յանդիմանութիւն մեր մարդկային տկարութեան և իբրև յոյս մեղաւորներու դարձի գալուն. Պետրոս դառն կերպով լալով իր երեք անգամ ուրանալուն բժշկութիւնը քեզմէ ընդունեց զքեզ սիրած ըլլալուն երեք հարցումով. ո՛վ Քրիստոս, անոր հետ բժշկէ՛ զմեզ, և զղջումի արցունք շնորհէ՛ մեզի:

Այսօր հրէից խաւարեալ խումբերը գիշեր ատեն ջահերով և սուրերով եկան բռնել զքեզ որ հոգևոր լոյսն ես և չես բռնուիր, և երկնային լուսեղէններէն կը պատուուիս մեծ վախ ազդելով անոնց. ուստի մինչև գետին կը խոնարհինք քու անպատմելի խոնարհութեանդ առջև:

Digitized by Google

Այսօր կորստական որդին՝ Յուդան՝ կը մօտենայ նենգութեամբ համբուրելու քեզ՝ որուն աստուածութեան փառքին երկիւղէն սերովբէները իրենց դէմքը կը ծածկէին, համբոյրը տալով իբրև նշան և իբրև պատճառ մահուանդ, որ անմահ ես. ուստի :

Ո՛վ Քրիստոս, քու բարեկամներդ և ազգականներդ այսօր հեռացան քեզմէ, քու եղբայրներդ ալ օտարացան, և դպիրներէն ու փարիսեցիներէն գէր ցուլեր զքեզ պաշարեցին և Պիղատոսին ու Հերովդէսին շուները քու չորսդ հաւաքուեցան. ուստի :

ԲՁ Յուդա իր արծաթսիրութենէն խելքը թռուցած, երեսուն արծաթի փոխարէն հրեաներուն կը մատնէր իր մեծ վարդապետը :

Որո՛ւ հետ որ ես պագնեմ, ըսաւ, ձերբակալեցէ՛ք զայն. ով նենգամիտ համբոյր, մահուան նշան և պատճառ :

Իր վրայէն հանեց նետեց աստուածային սուրբ հոգին, և սատանան հագաւ հագուստի պէս :

Այն գիշերը երբ մեր փրկիչը խաչին մահուան կը մատնուէր, Ջիթենեաց լեռը ելաւ, և աղօթելով կ'ըսէր, ո՛վ հայր, զանց ըրէ՛ ինձմէ այս բաժակը :

Իսկ անօրէն աշակերտը բանի տեղ չդնելով անոր սէրն ու գութը, քահանաներուն առաւ իր շունչը, ըսելով, ի՞նչ կ'ուզէք տալ ինծի որ վարդապետը մատնեմ :

Հրեաները հաւաքուելով շատ դրամ կշռեցին, և Պիղատոսին տանելով (այն գումարը), ըսին, խաչէ՛, խաչէ՛ զայն, որովհետև (մեր ; մովսիսական) օրէնքին դէմ հայհոյող մ'է :

Digitized by Google

Է Ո՛վ անսկիզբն որդի . երկինքէն իջնար , յանձնառու եղար չարչարուելու հողեղէն մարդոց ձեռքով . կ'օրհնենք զքեզ որ բոլոր ժամանակներէն կանուխ կայիր :

Դուն որ քու պարզ խօսքովդ հրամայեցիր որ երկիրը ստեղծուի , արարածները (այսօր) կը տեսնէին զքեզ դատարանին առջև կեցած . կ'օրհ :

Այսօր քու ազատ կամքովդ խաչուելու եկար , և գեղարդով վիրաւորուեցար դուն՝ որմէ կը գողան երկնային հրեշտակները . կ'օրհ :

Գ Օրհնեցէք տէրը և բարձր փառաւորեցէք զայն :

Զինուորը իր տէգով յարձակելով վիրաւորեց կողն անոր որ կեանք կուտայ . փառաւորեցէք զայն բարձր (Նոյն կողէն) կենդանարար աղբիւր մը բղխելով տիեզերքը սրբեց մեղքերէն . փառաւ :

Ո Մարդկային ազգը փրկելու համար գալով յանձնառու կ'ըլլայ ծառայէն (մարդոցմէ) դատաստանի մատնուելու , և (ամէն բաներուն) կը համբերէ մեզի կեանք տալու համար :

Իբրև մահապարտ Պիղատոսին կը մատնուի , Աննայէն և Կայիափայէն կը դատապարտուի , և կը համբերէ մեզի կեանք տալու համար :

Առաջին Ադամին յանցանքը քաւելու համար երկրորդ Ադամը դատարանին առջև կը կենայ , և կը համբե :

Ց Ի՞նչ հրաշալի և ահաւոր երևոյթ , այսօր խաչի վրայ տեսանք զայն որ երկինքն ու երկիրը ստեղծած է :

Արևը խաւարեցաւ՝ տէրը խաչին վրայ տեսնելով , և տաճարին վարագոյրը կը պատռէր վերէն վար :

Digitized by Google

Տէրը անարգութեամբ խաչուեցաւ անօրէններուն (երկու աւազակներուն) մէջտեղ, որպէս զի կատարուի գրուածը թէ անօրէններուն կարգը դասուեցաւ ։

ՄԿ *Ո՛վ Քրիստոս, որ թագաւորներուն թագաւորն ես, ծառայէն դաւաճանուեցար՝ մեզի համար համբերելով. փառաւորեալ ըլլա՛ս, ո՛վ համբերատար տէր ։*

Ո՛վ Քրիստոս քու պատուական խաչովդ և սուրբ արիւնդ թափելով ուզեցիր ազատեցնել զմեզ. փառք ։

Ամէնուն համար ամէն բանի համբերեցիր և մեռնելով ոտնակոխ ըրիր մահը. փառաւոր ։

ՇԲ *Ո՛վ հաւատացեալներ, եկէք երկրպագութիւն ընենք սուրբ երրորդութեան. լոյսը (Քրիստոսը) որ էութեամբ հայր Աստուծոյ հետ է, անոր քահանաներէն դատապարտուելով խաչ կ'ելնէ, անմահ թագաւորը ։*

Ան զոր երկինք չէր կարող կրել, կմախքը չայկած ոճրագործին փայտը կ'երթայ Գողգոթա խաչին վրայ ելնելու ։

Երկնային իշխանութիւնները (հրեշտակներուն խումբերը, դասակարգութիւնները) կ'ապշին տարօրինակ գերեզմանին մէջ տիրոջը թաղուելուն վրայ. որովհետև արարածներուն փրկութեան համար մահը ճաշակեց ան որ իր էութեամբը անմահ է ։

ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ

ԶՈՐ ՅԱՂԱԳՍ ՀՍԿՄԱՆ

ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒ ԳԻՇԵՐՈՅՆ Է ԱՍԱՑԵԱԼ

Դկ Ծ Այսօր անճառ լուսոյն ծագումն ի փրկութեան մեր կատարումն, խոնարհի ի վերնատունն ի ստուերական տօնից լրումն, նախ քան զընթրիսն խոր-հրդոյ սփածաւ ղենջակ արկօղն լուսոյ. եւ ջուր առեալ ծառայաբար զոտս լուանայր զաշակերտացն :

Բանին հօր փառաց լուսոյ պետրոս մերժիլ յոտս ոչ ներէր, այնմ ձեռաց որոյ են գործք երկնից երկինք եւ երկրաւորք, որով կուրաց աչք բացան խուլք եւ համերք արձակեցան, զոր վերածեաց զինքն ի ծովին՝ սաստեաց ալեացն եւ լռեցին :

Գլխոյն ընտրեալ հօտին փոքու սաստէր զխոնարհութիւն ոչ գիտելոյ, որով դառնայր եւ հնազանդէր զոտս եւ ըզ-գլուխս մաքրել մաղթէր. զլխոյս ասէ չէ ինչ պիտոյ լը-ւացումն ջրոյ զի լուացեալ է, ոտիցդ պէտք են մաք-րութեան յօդիլ ի գլուխս արքութեան :

Դասուց իւրոց աշակերտաց զոր նախ բանիւ վար-դապետեաց, այսօր գործով զծայրագոյն եցոյց յինքեան զխոնարհութիւն, սպասաւորեալ հողեղինաց այն որ անտեսն է հրեղինաց, տարեալ պաշտօն իւր ծառայիցն այն որ պաշտին ի սրովբէից :

Եթէ տէրս ասէ էից եւ վարդապետս բոլորից զա-

ռակերտացդ եւ զծառայից զոտս լուացի ի հնոյ աղտից . միմեանց եւ դուք համաբնութեամբ ցուցէք զնոյն խո-նարհութիւն , բարձրացելոյն ի կործանումն եւ անկելոյ բնութեանդ կանգնումն :

Զոր մաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօք զոտս նո-ցին , եւ ուսուցեր խոնարհութեամբ յաղթող լինել չար հպարտին , եւ զիս լուա զտիղմն մեղաց աղաչանօք սըր-բոյ գնդին , եւ զգնացս ուղղեա զոտին խոնարհութեամբ ելիւք յերկինս :

Ելից զօրէնսն մովսիսի զոր խօսեցաւն ի սինայի . եկեր զգառն օրինակին եւ զբաղարջն ընդ եղեգին, ըզ-հինն ի նորս փոխելով զտօներն ի լոյս ճշմարտելով . փոխան զառինն ինքն գոլով զառն Աստուծոյ նուիրելով :

Ընդ բաղարջին հաց անխմոր ետ զմարմին իւր զեր-կնաւոր , զկուսածնինն անսերմնաւոր զանապականն եւ զհոգեւոր . ընդ ոչխարին արեան ուխտին ետ մեզ զա-րիւնն իւր ուխտ կրկին , եւ եղեգան դառնագունին փո-խան զվարս աստուածային :

Թագաւորն արարածոց զհացն կենաց ետ քաղցելոց . եւ զբաժակն ուրախարար որք յադամայ տրտմեցելոց . այս նոր ուխտ է իմոյ արեան փոխան հնոյ ուխտին ա-րեանց զոր յիշատակ իմ առնիցէք մինչեւ եկից ես միւ-անգամ :

Ժողովեալքս ի քեն հայցեմք ընդ ժողովեալ մետա-սանին, որ զկենարարդ քո մարմին բաշխեալ ետուր ընդ բաժակին , շնորհեա եւ մեզ տէր ընդ նոսին հաղորդ լինել քում սեղանին կենաց հացիդ յոր փափաքիմք եւ ըմպելւոյդ ում ծարաւիմք :

Ի յընտրելոց առաքելոցն Յուդաս մեկնեալ ի սուրբ դասուցն, զբարձող մեղաց զգառն Աստուծոյ մատնէր ի մահ ընդ արծաթոյ. ի յընկերիսն հոգեւոր մերձի ժպիրհն եւ նենգաւորն, ուտելով ընդ վարդապետն յանախէ ընդ-կասբէութիւն:

Լոյսն խօսէր աղերսալից խաւարելոյն վասն դարձի, մի ումն ի ձէնջ ասէ եղբարք զիս մատնելոց է առ ի մահ. պետրոս լուեալ զայն զարհուրէր, եւ ակնարկէր առ Յովհաննէս հարցանել թէ ո՛վ իցէ դաւաճանող վարդապետին:

Խնամով սիրոյն յիւր սիրելեացն զտրտմութիւնն փարատեաց բացեալ պատառ տայ յուդայի նշաւակեալ ընդ-գողն մատնիչ, զոր առեալ եւ մերկացաւ յաստուածայինն հոգւոյն շնորհաց, մատնեցաւ նախաչարին ընդ մատնութեան վարդապետին:

Ծայրագոյն լուսոյն զրկեալ խաւարասէրն արտաքս ելեալ տէրն յայտնէր լոյս եղելոցն զգայթակղիլն ի գիշերի. պետրոս խօսէր խրախուսելի եւ կշտամբիւր հաւա-կօսի, զիւրն յաշխարհէ զփոխիլն ասէր եւ զգալուստ հոգւոյն պատմէր:

Կեդրոնեան յանկոյս ձորոյ ի վերն տունն ել խոր-հրդոյ եմուտ պարտէզ ընդ պարտիզի եմոյծ զադամ յա-դին դրախտի. մուծցես եւ զմեզ տէր ընդ նմին ուստի հաներ նախ զառաջինն, զի ժառանգել զհայրենին ար-ժանացուք մեք վերստին:

Հոգար զկերիցն տրտմաբար երիւքն եղեալ առանձ-նաբար, փրկել զաշխարհս հոգիս յօժար, բայց է բնու-

թիւն մարմնոյս տկար․ ոչ ունի ուժեղ եւ զօրաւոր, եւ ոմն անզօր կթանգաւոր, այլ միեւնոյն զօլ միաւոր կրէր զկիրսն կամաւոր:

Զայնիւ մաղթէր աղօթական վասն իմ առ հայր իւր եական, ծունր դնէր խոնարհական որում կրկնի ծունր ամենայն, եթէ փրկիլ մարդկան հնար է առանց մահու իմ որ գրեալ է, բաժակ մահուս յինէն անցցէ, ոչ իմ կամաւ այլ քոյդ եղցէ:

Ողբեալ յերկիւղ քրտանց նմանմն ոլոռնաձեւ կայլակ վիժման, ի զօրանալ հրեշտակ մեծեալ զօրհնական զիրն լցեալ, զի կատարեալ եառ զբնութիւն աստուածն քան զմարդկութեան, պարտէր զերկիւղ եւ զտրտմութիւն յիւրումն կրել տնօրէնութիւն:

Ճառագայթ փառաց Հօրն որ ըստ բնութեանս մարդկային տագնապեցար ի գիշերին աղօթեցեր առ հայր յերկին. ծագեա ի մեզ զլոյսդ երկնային եւ փարատեա զերկիւղ չարին, մասունք հոգւոց մեր եւ մարմին յերկիւղ քո սուրբ բեւեռեսցին:

Մեծեալ Յուդաս որ մատնելոց հանդերձ դասուն Փարիսեցւոց, անկան նման ստորանկելոց որք յաւիտեան չեն կանգնելոց. յուդաս նենգաւ համբուրելով առիթ մահու նշան տալով, փոխան սիրոյ զնա մատնելով չար ընդ բարւոյ վճարելով:

Յանձնեմ առ զուք սիրոյն պետրոս զծառային անուն Մաղքոս եհատ սուսերբ զականջն այնոյ որ ոչ լսաւ տեառն իւրոյ. իսկ տէրն մեր արագապէս յունի մեծեալ բժշկապէս, առողջացոյց աստուածապէս, զոր ոչ տեսին կուրացեալ հրեայքն:

Նոր հօտին փոքու ցրուեալ քանզի զհովիւն քաջ հարեալ, պետրոս միայն զհետ երթալ ի յաղջկանէ վիմին շարժեալ. Նշանակեալ հաւն խօսէր առ ի պետրոս տէրն ակնարկէր, զէ սնն յիշէր դառն արտասուէր ի գլորմանէն դարձեալ կանգնիւր :

Շնորհեալ վիմին եկեղեցւոյ զոր պահեցեր ի հոսե-լոյ եւ կանգնեցեր ի գլորելոյ վասն սրտիւն արտասուե-լոյ. կանգնեա եւ զիս տէր ընդ նմին ի գլորմանէ սայ-թաքողին, տալով աչացս յորդ արտասուս եւ ջուր ծո-վու նման գլխոյս :

Ո՛վ կամաւ զանկապելին կապեալ զձեռսն արձա-կողին, ի յապարանսն տանէին կայիափայ եւ աննա-յին. ծառային զերեսն այն ապտակէր յորմէ սրոբէն թե-ւասքօղէր, թուք արձակեալ պիղծ բերանով յայն որ կուրին լոյս ծագեաց թքովն :

Զոր կապանաց մարդկան լուծիչ որ կապեցար ընդ կապելոյն զիս արձակեա յինքնակապես մեղաց կապից դժոխայնոյն, որ ընդ մեզօք պարտաւորին կա-ցեր անմեղդ ի յատենին, յորժամ փառօք գաս հայրե-նին մի՛ դատեսցես զիս ընդ նոսին :

Պատկառանօք հինն Ադամայ որ ձաղեցար վասն նո-րա ջնջեա զամօթ մեղաց յրքին որով զերեսս իմ ծած-կեցին, որ ներեցեր չար ծառային ածեալ ձեռօք քեզ ապտակին, հար ուժգնակի զդէմս չարին որպէս եւ զիս եհար ուժգին :

Զոհն լուսոյ առաւօտին ի յուրբաթու հնոյ զատկին կայր առաջի դատաւորին ծառային նստէր ի յատենին, ի

հարցանել պիղատոսի տէրն ոչ առնէր պատասխանի, զի կանխասաց գիրն յցցի եղէ ես մարդ որ ոչ խօսի:

Ռամկական դասք զինուորացն արկին հանդերձ նախատանաց այնմ որոյ զգեստն է լոյս փառաց իբրեւ զօրաց զինքեամբ արկած. ի ծունր իջեալ կատակէին զգլուխն եղեգամբք հարկանէին պսակ ի փշոց բոլորէին զփուշ մեղացն բարձողին:

Սոսկային սերոբէից բառնայր ինքեամբ զփայտ խաչին մինչ ի տեղի գողգոթային յորում եդեալ մարդն առաջին, ետուն ըմպել զինի զմռսեալ եւ կերակուր լեղեաւ խառնեալ, որում զպտղոյն դառն համակ փոխեաց մեզ քաղցր եւ ախորժակ:

Վերնականքն զարհուրեալ տեսին զտէրն մերկացեալ եւ զհանդերձսն բաժանեալ պատմուճանին վիճակ արկեալ, զձեռսն եւ զոտսն ծակեցին ըստ յայտնապէս դաւթեան ձայնին, ընդ փայտ խաչին բեւեռեցին զմատունսն որ գրեաց ի տախտակին:

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց, փայտ ընդ փայտի դառն պտղոյ կեանք ընդ մահու փոխարկելով. ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուողն օրինաց, զոր ոչ տեսին ազգն կուրաց բաց ի միոյն աւազակաց:

Րոպէիցն արեգական զտիւն արար գիշերանման, զստուերն թող արկ մերկութեան զի մի' տեսցէ ակն անարժան. ի միջօրեայն նսեմացաւ յորժամ Ադամ մերօք մեռաւ ի յիններորդն ի լոյս դարձաւ յորժամ մահուամբ մահն լուծաւ:

Digitized by Google

Ցօղէր արտօսր ցաւագին մայր տեառն որ կայր մերձ առ խաչին, յորժամ լսէր զծարաւին բարբառելոյ իւր միածնին. եսուն քացախ խառնեալ լեղի այնմ որ բղխեաց զետ յադենի, եւ ի վիմէն վտակ ջուրի արբոյց տոհմին դառնացողի:

Իւծեալ յերրորդ ժամու օձին զմիտս նախնեայ մօրն Եւայի, ի վեցն տնկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նորին. ի սոյն ժամու տէրն ի խաչին զի քաւեսցէ զմեղս նոցին, եւ յորժամ ել ադամն հին եղ զաւազակն ի մէջ դրախտին:

Փարելի բարբառ ընդ իմ էլի էլի առ հայր գոչէր, զհոգին կամաւ հօր աւանդէր զհոգիս մարդկան նոյն ընծայէր. երկիր հիմամբք սասանեցաւ եւ վարագոյրն ընդմէջ հերձաւ, վէմք ի յինքեանց պատառեցան եւ գերեզմանք մահու բացան:

Քարոզի ի սքանչելեացս Աստուած մարմնով վասն իմ խաչեալ, մերով բնութեամբս մեռանի Աստուած անմահ խոստովանի, կրկնապատիկ կաղին աղբերբք եկեղեցի իւր հաստատի, ջրովն մաքրի զարիւնն ըմպէ զօրդի ընդ հօր փառաւորէ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Անպատմելի լոյսին (Հայր Աստուծոյ) ծագումը (Քրիստոս), այսօր ի գլուխ հանելու համար մեր փրկութեան գործը, վերնատունը կը խոնարհի, կ'իջնէ կատարելու, վերջացնելու համար ստուերական (Նորին

Digitized by Google

թերև օրինակ , թերև սուտեր ծառայող) ամենքը . խոր-հրդաւոր ընթրիքէն առաջ գօգնոց մը կապեց նա որ ամբողջովին լոյս հագած է , և ջուր առնելով սպասա-ւորի պէս կը լուար աշակերտներուն ոտքերը ։

Պետրոս թոյլ չէր տար որ իր ոտքերուն մօտենայ հայր Աստուծոյ փառքին լոյսը , բանն Աստուածը , ո-րուն ձեռքով ստեղծուած են երկինքն ու երկիրը , ո-րով բացուեցան կոյրերուն աչքերը , խուլերուն ականջ-ները և համրերուն լեզուները քակուեցան , որ զինք (Պետրոսը) ծովին երեսը հանեց , յանդիմանեց ալիք-ներուն և հանդարտեցան ։

(Քրիստոս) կը յանդիմանէր ընտրեալ փոքր խում-բին գլուխը (Պետրոսը) թէ չէր գիտեր այդ խորհուր-դին նշանակութիւնը . ասոր վրայ նա (Պետրոս) եւս դառնալով կը հնազանդէր , և կ'աղաչէր որ մաքրէ ոտքերն ալ գլուխն ալ . (Քրիստոս) ըսաւ թէ գլուխը ջրով լուացուելու պէտք չունի որովհետև լուացուած է . պէտք է որ դուք՝ ոտքերդ մաքրուիք սուրբ գլու-խիս (ինծի) միանալու համար ։

Այսօր երկրին վրայ ցոյց տուաւ վերջին ծայր խո-նարհութիւնը իր աշակերտներուն, որոնց նախ քարոզած էր խօսքով , հողեղէններուն ծառայեց նա որ հրեղէն-ներուն (հրեշտակներուն) անտեսանելի է , սպասաւո-րեց իր ծառաներուն նա որուն կը ծառայեն ներօրէնները։

(Քրիստոս) ըսաւ , եթէ ես որ բոլոր արարածնե-րուն տէրն եմ և ամէնուն ուսուցիչը եմ , հին աղտերէն լուացի ձեր՝ իմ աշակերտներուս և իմ ծառաներուս ոտ-քերը, դուք ալ որ իրարու հետ նոյն բնութիւնը ունիք, միեւնոյն խոնարհութիւնը ցոյց տուէք , որպէսզի ամ-

Digitized by Google

բարստաւանը կործանէ և ձեր ինկած բնութիւնը բարձրանայ ։

Իմ մեղքիս ցեխն ալ լուա՛, և իմ ոտքիս ընթացքը ուղղէ՛ խոնարհութեամբ դէպ ի երկինք ելնել, աղաչանքով սուրբ խումբին (աշակերտներուն), որոց ոտքերը մաքուր ձեռքերով մաքրեցիր կոնքին մէջ, և սորվեցուցիր խոնարհութեամբ յաղթել չար հպարտին (սատանային) ։

Կատարեց այն օրէնքը զոր ինք հրամայեց Մովսէսին Սինա լերան վրայ, կերաւ իբրև օրինակ ծառայող գառնուկը և անխմոր հացը եղերդին հետ, հինը նորի փոխեց, գառնուկին տեղ ինքզինք Աստուծոյ նուիրեց իբրև գառնուկ ։

Բաղարջին՝ անխմոր հացին տեղ տուաւ իր երկնաւոր և հոգևոր մարմինը, որ կոյսէն ծնած է առանց սերմի և անարատ. ոչխարին արիւնին ուխտին տեղ իր արիւնը տուաւ իբրև երկրորդ ուխտ, և լեղի եղերդին փոխարէն իր աստուածային վարքը տուաւ ։

Արարածներուն Թագաւորը կեանքին հացը տուաւ անօթիներուն, և Ադամի մեղքէն տրտմողներուն ալ տուաւ ուրախացուցիչ բաժակը. (ըսելով) իմ արիւնիս նոր ուխտն է ասիկա՝ (նիւթական) արիւններուն հին ուխտին տեղ. պէտի կատարէք ասիկա զիս յիշելու համար մինչև որ գամ նորէն ։

Հոս հաւաքուողներս կը խնդրենք քեզմէ (վերնատան մէջ) հաւաքուող տասն և մէկ աշակերտներուն պէս, դուն որ քու կենդանարար մարմինդ բաժակին հետ բաշխելով անոնց տուիր, մեզի ալ շնորհ ըրէ՛, ո՛վ

տէր, մասնակից ըլլալ քու սեղանիդ, կեանքի հացիդ՝ որուն կարօտ ենք և բաժակիդ՝ որուն ծարաւի ենք։

Սուրբ գառնուկներէն, ընտրեալ աշակերտներէն բաժնուելով Յուդան, դրամի փոխարէն մահուան կը մատնէր Աստուծոյ գառնուկը որ (մարդկային) մեղքը կը կրէր. անօրէնը և խարդախը (Յուդան) կը մօտենայ հոգևոր ընթրիքին, վարդապետին հետ կը ճաշէ խաբէութիւնը առաջ տանելով։

Լոյսը (Քրիստոս) թախանձելով կը խօսէր դարձի բերելու համար խաւարեալը (Յուդան). ըսաւ, ձեզմէ մէկը, ո՛վ եղբայրներ, զիս մահուան պիտի մատնէ, Պետրոս կը սոսկար այս լուրը առնելով, և աչք կ՚ընէր Յովհաննէսին որպէսզի հարցնէ թէ վարդապետին դաւաճանութիւն ընողը ո՞վ է։

Իր բազմախնամ սիրովը տխրութիւնը փարատեց իր սիրելիներէն. պատառը թաթխելով Յուդային կուտայ՝ յայտնապէս խայտառակելով մատնիչ գողը. Յուդա առնելով պատառը՝ զրկուեցաւ աստուածային հագիին շնորհքներէն, և վարդապետը մատնելուն տեղ ինք ալ մեծ չարին (սատանային) մատնուեցաւ։

Խաւարասէրը (Յուդան) կատարեալ լոյսէն (Քրիստոսէն) զրկուելով դուրս ելաւ, տէրը կ՚իմացնէր կանխաւ լոյս եղողներուն (իր միւս աշակերտներուն) թէ պիտի գայթակղին գիշերուան մէջ. Պետրոս եռանդնալից կը խօսէր, բայց հաւախօսին ժամանակ կը յանդիմանուէր, (Քրիստոս) կը պատմէր թէ ինք պիտի փոխադրուէր աշխարհէն և թէ պիտի գար սուրբ հոգին։

Digitized by Google

Խորհրդաւոր վերնատունէն ելնելով կեդրոնեան հեղեղատին միւս կողմը գնաց, (եղեմական) պարտէզին տեղ ուրիշ պարտէզ մը մտաւ, Ադամը մտցուց դարձեալ եդեմական դրախտին մէջ. ո՛վ տէր, զմեզ ալ անոր հետ մտցո՛ւր հոն ուրկէց հանեցիր առաջին անգամ, որպէսզի դարձեալ արժանի ըլլանք հայրենի (հին, Ադամական) պարտէզը ժառանգելու։

Տխուր կերպով հոգ կ՚ընէր իր կրելիքներուն վրայ՝ երեք անգամ առանձնանալով, (կ՚ըսէր) հոգիս պատրաստ է այս աշխարհը փրկելու, բայց մարմինիս բնութիւնը տկար է. ո՛չ թէ մին ուժով և զօրաւոր էր, և միւսն ալ տկար և վտանգաւոր, այլ երկուքն ալ (մարմին և հոգի) միասին էին, և ազատ կամքով կը քաշէր իր գլխէն անցածները։

Ինծի համար իր արարիչ հայր Աստուծոյ կը մաղթէր աղօթող ձայնով. խոնարհաբար կը ծնրադրէր նա՝ որուն առջև կը խոնարհին բոլոր ծունկերը, (կ՚ըսէր) եթէ կարելի է մարդոց փրկութիւնը առանց իմ մեռնելուս որ գրուած է, այս մահուան բաժակը թո՛ղ անցնի ինձմէ; բայց ո՛չ թէ իմ կամքով, այլ քու կամքդ թո՛ղ ըլլայ։

(Քրիստոս) ընկղմեցաւ երկիւղի մէջ որ ոլոռն ոլոռն քրտինք թափել կուտար անոր, հրեշտակ մը մօտեցաւ զայն զօրացնելու համար, որով օրէնքին (Հին Կտակարանին) մէջ գրուածը կատարուեցաւ, որովհետև բանին Աստուած կատարելապէս առաւ մարդկային բնութիւնը, պէտք էր որ իր աստուածային կարգադրութեան միջոցին կրէր թէ՛ երկիւղ և թէ տխրութիւն.

Digitized by Google

Ո՛վ Աստուծոյ փառքին ճառագայթը (Քրիստոս), որ մերձմարդկային բնութեան համեմատ տագնապներ կրեցիր նոյն գիշերուան մէջ, և աղօթեցիր դէպ ի երկինք հայր Աստուծոյ. ծագէ՛ մեր վրայ քու երկնային լոյսդ և ցրուէ չարին (սատանային) երկիւղը, մեր հոգիներուն բոլոր մասերը և մարմինը թո՛ղ զմայլին միասին քու սուրբ երկիւղիդ ։

Երբ փարիսեցիներուն խումբին հետ մատնիչ Յուդան մօտեցաւ, գետին տապալեցան երկինքէն վար ինկողներուն (սատանաներուն) նման, որք ա՛լ մինչև վերջը պիտի չկանգնին. Յուդա նենգութեամբ համբուրեց իբրև մահուան նշան և պատճառ տալով (համբոյրը), (Քրիստոսի) սիրոյն տեղ վայն մատնեց, բարիին տեղ չարիք փոխարինեց ։

Այն ատեն Պետրոս (Քրիստոսի համար) իր ունեցած սիրոյն համար, իր տիրոջը խօսքին միտք չընելով, Մաղքոս անուն ծառային աջ ականջը սուրով զարկաւ կտրեց. իսկ մեր տէրը փութով մօտեցաւ ականջին իբրև բժիշկ, իբրև Աստուած բժշկեց, բայց կոյրերուն (հրէից) բազմութիւնը չհասկցաւ ։

Նոր փոքր խումբը ցրուեցաւ որովհետև քաջ հովիւը զարնուած տեսաւ. Պետրոս միայն անոր ետևէն գնաց, բայց վէմն (Պետրոս) ալ աղջիկէն նեղը մնաց. արոշուած հաւախօսին ժամանակ տէրը Պետրոսին ակնարկ մը նետեց, որ դառնապէս արտասուեց, և իր գլորումէն դարձեալ ոտք կ'ելնէր ։

Շնորհք ըլլի գայթակղութենէ, վար ինկալէ պահելու եկեղեցւոյ վէմը (Պետրոսը), և իր գլորումէն վեր առիր զայն ի սրտէ արտասուելուն համար. ո՛վ տէր, զիս ալ անոր հետ վեր ա՛ռ սահեցնողին (սատա-

Digitized by Google

նային) գլորումէն , առատ արցունք տալով աչքերուս, և ծովի չափ ալ ջուր տալով գլխուս ։

Ինչ մեծ հրաշք էր որ կապելով զայն որ ձեռքերը կը քակէր , և զոր կապել անհնարին էր , Աննայի և Կայիափայի դատարանը կը տանէին , ծառան ապտակ կը զարնէր այն երեսին , ուրկէ սերովբէները իրենց երեսը կը ծածկէին իրենց թեւերով , և կը թքնէր իր պիղծ բերնով անոր որ իր թուքով լուսաւորեց կոյրը ։

Ո՛վ դուն որ քակեցիր մարդոց չար կապերը , որ կապուեցար կապուած Ադամին տեղ , արձակէ՛ զիս մեղքերու դժոխային կապերէն որոնցմով զիս կապեցի ․ դուն որ յանցաւոր Ադամին մեղքերուն տակ ատեանին առջև կեցար անմեղ ըլլալով, զիս անոնց հետ մի՛ դատեր երբ հայրենական փառքովդ գաս ։

Դուն որ հին Ադամին ամօթը յանձն առնելով ծաղրուեցար անոր համար , ջնջէ՛ մեր մեղքերուն ամօթը , որով նոյն մեղքերը ծածկեցին իմ երեսս ․ դուն որ ներեցիր չար ծառային որ իր ձեռքով ապտակեց զքեզ , ուժգին կերպով զա՛րկ չարին դէմքին , ինչպէս որ անիկա ուժգին կերպով ինձի զարկաւ ։

Լոյսին ջահը (Քրիստոս) հին (հրէական) դատիկին ուրբաթ առաւօտուն դատաւորին առջև կը կենար․ (խոկ) ծառան (հողեղէն մարդը) ատեանին մէջ բազմած էր , տէրը պատասխան չէր տար Պիղատոսի հարցումներուն , որպէսզի կատարուի մարգարէութիւնը թէ ես չխօսող մարդ մը եղայ ։

Զինուորներուն ռամիկ խումբերը նախատալից հա-

Digitized by Google

դուստ հագցուցին անոր որ փառքին լոյսը վերարկուի պէս հագած է․ ծունկի գալով կը նախատէին, գլխուն կը զարնէին եղէգով, փշեղէն պսակ կը հիւսէին անոր որ մեղքին փուշը կը վերցնէր ։

Նա որմէ կը սոսկան սերովբէները՝ անձամբ կը կրէր խաչափայտը մինչև Գողգոթա այն տեղը՝ ուր թաղուած էր առաջին մարդը․ զմռսած գինի խմցուցին և լեղիով խառնուած կերակուր, որով (արգիլուած) պտուղին դառն համը անոյշ և ախորժելի ընծայեց մեղի։

Վերնաբնակները (հրեշտակները) զարհուրեցան երբ տէրը մերկ տեսան, անոր հագուստները բաժնուած և պատմուճանին վրայ վիճակ ձգուած․ ծակեցին անոր ձեռքերն ու ոտքերը, ինչպէս գուշակած էր յայտնապէս Դաւիթ, խաչափայտին գամեցին այն մասները որք գրեցին (մովսիսական) տախտակին վրայ ։

(Քրիստոս) տարածեց ձեռքերը փոխանակ (Եւայի) ձեռքերուն (որք դէպ ի արգիլուած պտուղը երկարեցան), տարածեց ոտքերը փոխանակ (Եւայի) ոտքերուն (որք դէպ ի արգիլուած ծառը քալեցին)․ փայտը (խաչը) փայտին (արգիլուած ծառին) փոխանակեց, կեանքը՝ մահուան․ երկու անօրէններուն (աւազակ) մէջտեղ մերկ կեցած էր Նա որ օրէնքը տուաւ․ կոյրերուն (հրէից) ազգը չտեսաւ զայն բաց ի մէկ աւազակէն ։

Արեւու րոպէներէն ձեւացած ցերեկը (Քրիստոս) խաւարի վերածեց, ստուերով (խաւարով) ծածկեց իր մերկութիւնը որպէսզի (հրէից) անարժան աչքը չտեսնէ․ (արեւը) կէս օրին խաւարեցաւ երբ Ադամ

մեղքովը մեռաւ, ժամ ինծի լուսաւորուեցաւ երբ (Քրիստոսի) մահով (Ադամին) մահը քակուեցաւ ։

Տիրոջը մայրը՝ որ խաչին մօտ կեցած էր՝ ցաւալի արցունքներ կը թափէր երբ կը լսէր որ իր միածին որդին «Ծարաւի եմ» կ'աղաղակէր. լեղի խառնուած քացախ տուին անոր որ եդեմին մէջ գետ բխեցուց, և կարծրասիրտ ազգին (հրէից) անոյշ ջուր բխեցուց ապառաժէն ։

Ժամը երեքն էր երբ օձը խաբեց նախամայր Եւային միտքը, առաջին մարդն ալ (Ադամը) անոր համոզիչ խօսքով ինկաւ (մոլորեցաւ) ժամ վեցին. այս ժամուս տէրը խաչին վրայ ելաւ, որպէսզի անոնց մեղքը սրբէ, և երբ հին Ադամը դուրս ելաւ, աւազակը դրաւ դրախտին մէջ ։

(Քրիստոս) զօրաւորին ձայնով «Աստուած իմ, Աստուած իմ» կ'աղաղակէր հօրը, իր կամքով իր հոգին հօրը կը յանձնէր, ինչպէս նաև կը նուիրէր մարդոց հոգիները. երկիրը սարսեցաւ իր հիմերով և վարագոյրը մէջտեղէն պատռեցաւ, քարերը իրենք իրենցմէ ճաթռտեցան, և մեռելներուն գերեզմանները բացուեցան՝

Այս հրաշքներէն կը հասկցուի թէ Աստուած՝ մարմինով ինծի համար խաչ ելաւ, մեր բնութեամբ կը մեռնի, (բայց) իբրև անմահ Աստուած կը դաւանին զայն (մարդիկ). իր եկեղեցին կը հաստատուի անոր կողին կրկին աղբիւրներով, ջուրովը (մկրտութեամբ) կը մաքրուի, արիւնը (Ս. Խորհուրդ Հաղորդութեան) կը խմէ, և փառք կուտայ որդիին, ինչպէս նաև հօրը։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ԹԱՂՄԱՆ ՄԵԾԻ ՇԱԲԱԹՈՒ

ԱՁ Պարգեւատուն ամենեցուն այսօր խնդրի պար-
ԲՅ գեւս ի Պիղատոսէ եւ արկօղն զլոյս որպէս
Ժ զօթոց հանդանի պատիլ ի յօսեփայ:

Կենդանատուն ամենեցուն այսօր դնի ի նոր գերեզմանի, եւ զանձն անմահութեան կնքի մատանեաւ քահանայիցն:

Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր եդաւ ի նորափոր վիմի զոր օրհնեն զօրք երկնից երգով պահպանի ի զինուորաց:

Կենդանին յաւիտենից Քրիստոս այսօր խնդրի որպէս մեռեալ ի Պիղատոսէ եւ մերկութեան ծածկոյթն Ադամայ յանձն առնու պատիլ ի յովսեփայ:

Անմահութեանց տուող Քրիստոս այսօր ի հող մահու խոնարհեցաւ եւ բնակեալն ի լոյս անմատոյց թաղեցաւ մարմնով ի սիրտ երկրի:

Արեգակն արդարութեան Քրիստոս այսօր եդաւ ի գբի ստուերականի, եւ փառացն հօր ճառագայթ ծածկեցաւ վիմով ի մէջ երկրի:

Կուսածին մարմնով Քրիստոս այսօր դնի ի կոյս գերեզմանի, եւ լուծիչն երկանց դժոխոց մատանեաւ կնքի քահանայիցն:

Արթուն բնութեամբ արարիչն ամենեցուն այսօր ննջէ ի մէջ մահացելոց որ պահէն զԻսրայէլ անքուն պահպանի ի զինուորաց:

Ծնութիւն արարածոց Քրիստոս այսօր արտասուի

որպէս մեռեալ ի տրտմազգեցիցն, եւ բուրումն անմահութեան խնկի ի զգաստիցն իւղաբերից :

Հ Զքեզ օրհնեմք թագաւոր յաւիտենից անմահ,

ԳՅ Աստուած հարցն մերոց :

Զոր ոչ բնութիւնք արարածոց զԱստուած տանիւր, մահուամբ սահմանեալ դնի ի նոր գերեզմանի, նոր զիս ընդունելով մարդ, զովեմք զքեզ տէր հարցն մերոց :

Որ անփակ գրով հաստատեալ քարտէզ կնքի մատանեաւ անկորուստ պահելով զմեզ հաւատով երրորդութեանն, զովեմք զքեզ :

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան :

ԶՔրիստոս թագաւորն յիմանալի զօրացն ահիւ պաշտեալ, եւ բարձր :

Զանյաղթելի զթագաւորն որ պահի ի զինուորաց զանձն անմահութեան, եւ բարձր :

Ո Որ բաշխօղդ ես բարութեանց եւ պարգեւատու արարածոց քոց, այսօր հանեցար խնդրել ի պարգեւի մասին ի Պիղատոսէ, զի եւ մեզ շնորհեսցես զպարգեւս ողորմութեան քո :

Որ զանհատ զլոյս փառաց իբրեւ զօթոց զքեւ արկար, այսօր անհատ խոնարհութեամբ պատեցար ի յովսեփայ ի գերեզմանի դնեալ, զի զհնութիւն մեղաց մերոց նորոգեսցես ի կեանս անմահ :

Որ յէութեանդ ես ընդ հօր անպարագրելի բանդ, այսօր մատանեաւ քահանայիցն պարագրիլ ի յանձն առեր անկողոպտելի զանձ, զի զմեզ փրկեսցես ի յանցանաց մեղաց մերոց :

Տ Յովսէփ նօմարիս եւ արդար հայցէր ի պիղա-

Digitized by Google

տոսէ զհասարակաց զպարգեւատուն , որ տուաւ մեզ զանձ անկողոպտելի :

Պատեալ սուրբ կտաւօք զմարմինն տէրունական զարկողն զլոյս որպէս զօթոց , որ զգեցոյց մեզ զգեստ անկողոպտելի :

Եդաւ ի նորափոր ի վիմի եւ մատանեաւ կնքեցաւ , որ զնախաստեղծն կենդանացոյց եւ զմարդկան կապանս մահու ելոյծ :

Յովսէփ քեզ հաւատացեալ պիղատոսի աղերսէր շնորհել զտէրունեանդ մարմին :

Զանապական զաստուածացեալ մարմինդ պատեալ սուրբ կտաւօք եւ եդ ի գերեզմանի :

Որ արարիչդ ես արարածոց հանգուցեալդ ի քերոբէս վիմով կնքեցար յերկրի :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Այսօր Պիղատոսէն իբրեւ պարգեւ կը խնդրուի Նա որ ամէնուն պարգեւ տուողն է , եւ յանձն կ'առնէ Յովսէփէն պատանքի մէջ փաթթուիլ Նա որ լոյսը հագած է իբրեւ վերարկու ։

Այսօր նոր գերեզմանի մէջ կը դրուի Նա , որ կենդանութիւն կուտայ ամէնուն , եւ քահանաներուն կնիքով կը կնքուի Նա որ անմահութեան գանձարանն է ։

Նոր փորուած քարէ գերեզմանի մէջ դրուեցաւ այսօր Քրիստոս որ արարածներուն փրկիչն է . զին-

Digitized by Google

ուղեւորները պաշտպանութիւն կ'ընեն անոր զոր երկնային զօրքերը կ'օրհնեն ։

Քրիստոս, որ յաւիտենականէս կենդանի է, այսօր Պիղատոսէն կը խնդրուի իբրեւ մեռած մարդ մը, եւ նա որ Ադամին մերկութիւնը ծածկեց՝ յանձն կ'առնէ պատանքի մէջ փաթթուիլ Յովսէփէն ։

Քրիստոս, որ անմահութիւն կուտայ, այսօր կը զիջանի իջնել մահուան հողին մէջ, եւ անմատչելի լոյսին մէջ բնակողը (Քրիստոս) երկրի սրտին մէջ թաղուեցաւ մարմնով ։

Քրիստոս, որ արդարութեան արեւն է, այսօր խաւարային գուբի մէջ դրուեցաւ, եւ երկրին մէջտեղը քարով ծածկուեցաւ նա որ հայր Աստուծոյ փառքին ճառագայթն է ։

Այսօր կոյս (դեռ չգործածուած) գերեզմանի մէջ կը թաղուի Քրիստոս, որ կոյսէն մարմին առած էր, եւ քահանաներուն կնիքովը կը կնքուի նա որ ջնջեց դժոխային անէծքը, ցաւերը ։

Այսօր մահկանացուներուն մէջտեղ կը քնանայ ամէնուն արարիչը, որ իր բնութեամբ արթուն, անննջական է, զինուորները պահպանութիւն կ'ընեն անոր որ առանց քնանալու Իսրայէլին վրայ կը հսկէ ։

Սգակիր կիները այսօր կ'արտասուեն Քրիստոսի վրայ որ բոլոր արարածներուն ուրախութիւնն է, եւ իւղ բերող իմաստուն կիները կը խնկեն զայն որ անմահութիւն կը բուրէ ։

Հ Կ'օրհնենք զքեզ, ո՛վ յաւիտենական անմահ Թագաւոր, ո՛վ մեր հայրերուն Աստուածը ։

Մեռնելով նոր գերեզմանի մէջ կը փակուի նա

զոր բոլոր արարածները չեն կրնար կրել, նոր մարդ-ընդունելով զիս, կը գովենք զքեզ ո՛վ մեր հայրերուն տէրը:

Անփակ գիրով (Աստուծոյ անունը ցոյց տուող է գիրը) թուղթ մը պատրաստելով կը կնքուի կնիքով, որպէսզի երրորդութեան հաւատքով անկորուստ պահէ զմեզ, կը գով:

Գ Օրհնեցէք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն:

Երիտասարդ թագաւորը՝ որմէ կը սոսկան հզօր զօրքերը (հրեշտակները), և կը պատուեն զայն:

Անյաղթելի թագաւորը (Երիտասարդ), և անմահութեան գանձարանը, որուն պահպանութիւն կ՚ընեն զինուորները:

Ո Այսօր յանձնատու եղար իբրև պարգև խընդրուիլ Պիղատոսէն դուն՝ որ բարիքները կը բաշխես, և քու արարածներուդ պարգև կուտաս, որպէսզի մեզի ալ շնորհես քու գթութեանդ պարգևները:

Փառքի անպատմելի լոյսը իբրև զգեստ հագար, այսօր անպատմելի խոնարհութեամբ Յովսէփին պատանքով փաթթուեցար և գերեզմանին մէջ հանգեցիր, որպէսզի մեր հինցած մեղքերը անմահ կեանքով նորոգես:

Ո՛վ անբովանդակելի բանդ Աստուած, որ հայր Աստուծոյ հետ նոյն էութիւնը ունիս, այսօր յանձն առիր քահանաներուն կնիքով բովանդակուիլ դուն՝ որ անկողոպտելի գանձ մ՚ես, որպէս զի մեր մեղքերէն ու յանցանքներէն փրկես զմեզ:

Յ Արդար և ճշմարտախօս Յովսէփը Պիղատոսէն

Digitized by Google

կը խնդրէր զայն որ ընդհանուրին պարգև տուողն է, և մեզի տրուեցաւ իբրև անկողոպտելի գանձ մը։

(Յովսէփ) մաքուր կտաւներով փաթթեց տիրոջը մարմինը, զայն որ լոյս հագած է զգեստի պէս, եւ մեզի հագցուց անկողոպտելի զգեստ։

Նոր փորուած քարէ գերեզմանին մէջ դրուեցաւ և կնիքով կնքուեցաւ նա որ առաջին անգամ ստեղծուածը (Ադամը) կենդանացուց և մարդոց մահուան կապերը քակեց։

Յովսեփ քեզի հաւատալով թախանձեց Պիղատո-սին որ շնորհ ընէ տէրունական մարմինդ։

Անարատ և աստուածացած մարմինդ մաքուր կը-տաւներու մէջ փաթթելով գերեզմանին մէջ դրաւ։

Դուն որ արարածները ստեղծեցիր և քերոբէներուն վրայ կը հանգչիս, քարով մը կնքուեցար երկրի վրայ։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱԽԱՎԿԱՅԻՆ

ԱՀ Նահատակ բարի Քրիստոսի եղեր այսօր ի մի-
ԳԼ ջի մերում, եւ մեզ ի վերնատունն խորհրդոյ
ԺԵ յայտնեցականի :

Որ ընտրեցար ի դասս երկնաւոր զօրացն, պսակեցար ի թագաւորէն զանթառամ զպսակն, եւ մկրտեցար արեամբք քով սրբով առաջին վկայ Քրիստոսի սուրբ ստեփաննոս նախասարկաւագդ մեծ :

Մարտեար ընդդէմ թշնամւոյն այսօր եւ զնեցեր արեամբք քով զարքայութիւն, ի պարծանս ազգի մարդկան ճգնաւոր Քրիստոսի, զոհութիւն երեքսրբենին, որ ընկալաւ զվկայդ իւր զսուրբ ստեփաննոս ի վերինն Երուսաղէմ :

Որ ընտրեցար ի կոչումն առաքելական քարոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ Ստեփաննոս, բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց :

Որ խնդրեցեր զթողութիւն ի վերայ քո քարաձիգ ժողովոյն սուրբ ստեփաննոս եւ այժմ վասն քո ուխտաւորացս աղաչեա զընդաջմէ հօր նստեալն :

Որ արժանի եղեր զմարտիրոսականն առնուլ պսակ նախդ ի վկայս, առ պսակիչն սրբոց եւ վասն մեր բարեխօսեա :

ԴԿ Առաքեալ եւ նախավկայ Քրիստոսի սուրբ ստեփաննոս, որ զքարկոծումն յանձն առեր եւ յանմահից բնակարանսն վերափոխեցար, աղաչեա զԱստուած շնորհել մեզ զկեանս անվախճան :

Digitized by Google

Տունկ անմահ իմանալի դրախտին շնորհեցար ի հօ-րէ, եւ լուսաւորեցար անճառապէս, այսօր ցնծան դասք հրեշտակացն ընդ քո մեծապայծառ ծննդութիւնդ, առա :

Աստուածաստեղծ մարդոյն պտուղ ընծայեցար մեծ յանմերձենալի լոյսն, եւ հայրենի աւանդութեանն եղեր ժառանգորդ, առս :

Ճանապարհ վկայից յես Քրիստոսի զտար, եւ աստ-ուածային փառացն արժանաւոր եղեր, բանսարկուն զինու քո վիրաւորեցաւ եւ նախաստեղծն պայծառաց-եալ բերկրեցաւ, ապա :

Դասակարգեալ եւ մեք ընդ անմարմնական բազ-մութիւնսն վերահայցեմք ընդ հրեղէն լեզուացն աղօ-թանօք մաղթանօք հայցեմք ի քէն մարդասէր փրկիչ, խնայեա ի մեզ ստեղծող մեր եւ կեանք աշխարհի :

Հ Ընդ երկնայինն հոգեղինաց դասսն այսօր տօ-

ԳՁ նեմք զյիշատակ սրբոյն ստեփաննոսի, բարեբա-նելով զքեզ տէր Աստուած հարցն մերոց :

Որ հրեշտակակերպ տեսլեամբ արիաբար պատերազմ-եալ զքարկոծումն յանձն էառ, խոստովանելով զքեզ Քրիստոս Աստուած հարցն մերոց :

Որ անպարագրելի աստուածութեանդ տեսող եւ բա-րեխօս իւր ուխտաւորացս այսօր յիշատակաւ սրբոյն ստեփաննոսի, զովեմք զՔրիստոս Աստուած հարցն մերոց:

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւի-տեան :

Որ յերկնայինն զօրացն միշտ օրհնի Քրիստոս Աստուած այսօր յիշատակաւ սրբոյն ստեփաննոսի, զտէր օրհնէ :

Հրաշալի աստուածաբանութեամբ սրբոյն ստեփան-

Նորին քահանայք ընդ վերին զօրացն երկնից , զՔրիստոս գովէ :

Ո Առաքեա ի մեզ Տէր զբազում գթութեանց քո
Ել զողորմութիւն բարեխօսութեամբ սրբոյ Նա-
խավկային քո եւ ողորմեա :

Որում զերկնային բացեր զդուռն ցուցանելով զանճառելի զխորհուրդ , սորին աղաչանօք խնայեա ի մեզ Տէր եւ ողո̃ր :

Որ աղօթանօք հայցմամբ զթողութիւն խնդրելով ի քէն անօրէն սպանողաց իւրոց, սորին աղաչանօք խնայ:

Տ Ո՛վ երջանիկ նահատակդ , առաքելական քա-
րոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ Ստեփաննոս , համեստութիւն ի Քրիստոս հայցեա սուրբ եկեղեցւոյ :

Որ քոյին յօժարական համբերութեամբդ զքարկո-
ծումն յանձն առեր , շնորհեալ քեզ յԱստուծոյ լինիլ չար-
չարակից Քրիստոսի զի եւ մեզ ուսուցես փառաւորել սուրբ զերրորդութիւնն :

Աղօթէիր որ քարաձիգն լինէին ի քեզ նախդ ի վկայս, զի առցես հատուցումն բարի յարարչէն ամենեցուն , եւ այժմ աղաչեմք զքեզ եւ վասն մեր բարեխօսեա :

ՄԿ Նախասարկաւագ եւ առաջին մարտիրոս որ
րէ ի Քրիստոս պսակեցար , եւ յերկնահեմ ա-
ռագաստին պայծառացեալ բերկրեցար , աղաչեա զԱստ-
ուած շնորհել մեզ զկեանս անվախճան :

Որ քոյին համբերութեամբդ զդրունս երկնից բաց-
եալ տեսեր եւ զորդի ընդ աջմէ հօր , աղօթէիր ի վերայ քո քարաձգողացն , աղա :

Եկեղեցիք արդարոց եւ ժողովք ուղղափառաց այ-
սօր զյիշատակս քո տօնեմք եւ արտասուօք հայցեմք ի քէն շնորհս վկայ Քրիստոսի , աղա :

Digitized by Google

ԺԵ Ցնծայ այսօր եկեղեցի Աստուծոյ զքո վայելչապէս տօնէ զյիշատակս ով սուրբ Ստեփաննոս, մեծ եւ պատուական անուանիդ ի վկայս, աղաչեա զԱստուած մեզ:

Նախաշաւիղ բարեաց ամենայն աշխարհի եւ լուսազարդ ճանապարհացն եղեր ժառանգորդ ո՛վ սուրբ Ստեփաննոս, մեծ եւ:

Աստուածային զինու վառեցար սուրբ հոգւոյն, տեսանելով յերկինս հայրենի փառօք զորդին Աստուծոյ ով սուրբ Ստեփաննոս, մեծ եւ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Այսօր մեր մէջ (քրիստոնէական եկեղեցիին մէջ) Քրիստոսի քաջ նահատակը եղար, և յաւիտենական խորհուրդին վերնատունը մտար (Աստուծոյ փառքը տեսար, անոր քով գացիր)։

Երկնաւոր զօրքերուն խումբերուն մէջ ընտիր համարուեցար, անթառամ պսակով պսակուեցար թագաւորէն, և քու սուրբ արիւնովդ մկրտուեցար, ո՛վ սուրբ Ստեփաննոս, որ Քրիստոսի առաջին մարտիրոսը և առաջին սարկաւագն ես։

Այսօր թշնամիին (սատանային) դէմ կռուեցար և քու արիւնովդ գնեցիր արքայութիւնը, ո՛վ Քրիստոսի ճգնաւոր և մարդկային ազգի պարծանք. փա՛ռք կուտանք Երրորդութեան որ վերին Երուսաղէմի մէջ ընդունեց իր մարտիրոսը՝ սուրբ Ստեփաննոսը։

Քրիստոսի բարեխօսէ՛ մեր անձերուն համար ո՛վ

Ստեփաննոս, որ արժանաւոր ըլլալով՝ առաքելական քարոզութեան կոչումին յարմար դատուեցար։

Ո՛վ սուրբ Ստեփաննոս, ներում խնդրեցիր դքեզ քարկոծող բազմութեան համար. հիմայ ալ Հայր Աստուծոյ աջ կողմը նստող Քրիստոսին աղաչէ՝ մեզի համար որ քեզի համար ուխտ հաստատած ենք։

Ո՛վ մարտիրոսներուն մէջ առաջինը, որ արժանի եղար մարտիրոսական պսակը առնելու, մեզի համար ալ բարեխօսէ՝ անոր որ իր սուրբերը կը պսակէ։

Ո՛վ սուրբ Ստեփաննոս, Քրիստոսի առաքեալը և առաջին մարտիրոսը, որ յանձն առիր քարկոծուիլ և անմահներուն բնակարանը փոխադրուեցար, աղաչէ՝ Աստուծոյ որ անվախճան կեանքը պարգեւէ մեզի։

Հայր Աստուծմէ պարգեւուեցար հոգեւոր դրախտին բերք և մէկ անմահ տունկը, և անպատմելի կերպով լուսաւորուեցար. այսօր հրեշտակներուն դասերը կը հրճուին քու մեծ և պայծառ չարչարանքներուդ վրայ, աղաչէ Անոր։

Դուն բերք և պտուղ նուիրուեցար աստուածաստեղծ մարդուն (Ադամին) անհպելի լոյսին (Աստուծոյ) քով, և հայրենի աւանդութեան ժառանգորդ եղար, աղաչ։

Քրիստոսէ վերջ մարտիրոսներուն առաջնորդն եղար, և արժանի եղար աստուածային փառքը տեսնելու, սատանան քու զէնքէդ վիրաւորուեցաւ և նախաստեղծ Ադամը ուրախացաւ և հրճուեցաւ, աղաչէ՛։

Մենք ալ անմարմին հրեշտակներու հետ դասաւորուելով, ո՛վ մարդասէր փրկիչ, անոնց հրեղէն լեզուներուն հետ աղօթքով և մաղթանքով կը հայցենք՝ խնայէ՝ մեզի ո՛վ մեր արարիչը և աշխարհի կեանք տուողը։

Digitized by Google

Հ Երկնային հոգեւոր էակներէն դասերուն հետ այսօր կը տօնենք սուրբ Ստեփաննոսին յիշատակը գովաբանելով զքեզ, ո՛վ մեր հայրերուն տէր Աստուածը։

Հրեշտակի կերպարանք առնելով քաջօրէն կռուեցաւ եւ քարկոծուելու յանձնուած եղաւ, դաւանելով զքեզ, ո՛վ Քրիստոս՝ մեր հայրերուն Աստուածը։

Այսօր յիշելով սուրբ Ստեփաննոսը, որ տեսաւ քու անբովանդակելի աստուածութիւնդ, եւ կը բարեխօսէ մեզի՝ իր ուխտաւորներուն համար, կը գովենք զՔրիստոս, մեր հայրերուն Աստուածը։

Գ Օրհնեցէք տէրը եւ ի սպառ փառաւորեցէք զայն։

Այսօր սուրբ Ստեփաննոսին յիշատակին առթիւ օրհնեցէք Քրիստոս Աստուածը, որ միշտ կ'օրհնուի երկնային զօրքերէն։

Ո՛վ քահանաներ, սուրբ Ստեփաննոսի ուսուցած սքանչելի աստուածաբանութեամբ երկնային զօրքերուն հետ գովեցէք Քրիստոս Աստուածը։

Ո Ո՛վ տէր, առաջին սուրբ մարտիրոսին բարեխօսութեամբ մեր վրայ դրկէ՝ քու բազում ողորմութիւնդ եւ գթութիւնդ, եւ ողորմէ՛։

Անոր առջեւ բացիր երկնային դուռը եւ քու անպատմելի գաղտնիքդ ցոյց տուիր, անոր աղաչանքով խնայէ՛ մեզի, ո՛վ տէր, եւ ողորմէ։

Աղօթքով եւ պաղատանքով իր անօրէն սպաննիչներուն համար թողութիւն կը խնդրէր քեզմէ. անոր աղաչանքով։

Տ Ո՛վ երջանիկ ճառագայթ, սուրբ Ստեփաննոս, առաքելական քարոզութեան արժանաւոր պաշ-

Digitized by Google

տօնեայ, խնդրէ՛ որ Քրիստոս հաստատութիւն տայ սուրբ եկեղեցիին։

Քու յօժարութեամբդ և համբերութեամբդ քարկոծուելու յանձնառու եղար, Աստուած շնորհ ըրաւ քեզի որ Քրիստոսի չարչարակից ըլլաս, և մեզի սովրեցնես սուրբ երրորդութիւնը փառաւորել։

Ո՛վ առաջին մարտիրոս, կ'աղօթէիր զքեզ քարկոծողներուն վրայ՝ որպէսզի բարի վարձք ընդունիս բոլոր արարածներուն արարիչէն, հիմակ ալ կ'աղաչենք քեզի մեզի համար ալ բարեխօսէ։

ՄԿ *Առաջին սարկաւագ և առաջին մարտիրոս, որ Քրիստոսէն պսակուեցար, և երկնաւոր բնակարանին մէջ ուրախութեամբ փայլեցար. աղաչէ՛ որ Աստուած անվախճան կեանքը պարգեւէ մեզի։*

Քու համբերութեանդ շնորհիւ երկինքի դուռները բացուած տեսար, և որդին ալ հօր աջ կողմը, կ'աղօթէիր զքեզ քարկոծողներուն վրայ, աղաչ։

Արդարներուն եկեղեցիները և ուղղափառ քրիստոնէից բազմութիւնները, մենք, այսօր քու յիշատակդ կը տօնենք, և արտասուելով կը խնդրենք քեզմէ, ո՛վ Քրիստոսի ճշմարիտ մարտիրոս, աղաչ։

ՃՇ *Աստուծոյ եկեղեցին այսօր կը բերկրի և վայելուչ կերպով կը տօնէ քու յիշատակդ, ո՛վ սուրբ Ստեփաննոս, մարտիրոսներուն մէջ մեծը, պատուականը և նշանաւորը, աղաչ։*

Ընդհանուր աշխարհի բարի առաջնորդ եղար և (ճշմարտութեան) լուսաւոր ճամբաներուն ժառանգ եղար, ո՛վ սուրբ Ստեփաննոս, մարտիր։

Սուրբ հոգիին աստուածային զէնքովը սպառազինուեցար, երկինքին մէջ տեսար Աստուծոյ որդին, իր հօր փառքով, ո՛վ սուրբ Ստեփաննոս, մարտիրոսներուն մէջ մեծը, պատուականը և նշանաւորը, աղաչ։

Digitized by Google

Digitized by Google

ԵՐԳ

ԱՐԵՒԱԳԱԼԻՆ

Ցարեւելից մինչ ի մուտս, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ, ամենայն ազգ եւ ազինք յօրհնութիւն նոր օրհնեսցեն զարարիչն արարածոց, որ ծագեաց զլոյս արեգականն այսօր յաշխարհս:

Եկեղեցիք արդարոց, փառաբանիչք ամենասուրբ երրորդութեանն, յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս զովեսցեն ընդ հօր եւ հոգւոյն որ ծագեաց զլոյս գիտութեան իւրոյ ի մեզ:

Ցորդորակ

Ցարեւելից յարեւմուտս մանկունք Սիօնի, օրհնեցէք միշտ անդադար զծագօղն լուսոյ:

Եկեղեցիք արդարոց եւ փառաբանիչք, բարեբանեցէք որ ետ զիմաստս լուսոյ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ բոլոր ազգեր ու ցեղեր, արեւելքէն մինչեւ արեւմուտք, հիւսիսէն և հարաւէն, նոր օրհնութիւն-

Digitized by Google

Ներքով օրհնեցէք առաքեալներուն առաքիչը, որ այսօր աշխարհի վրայ ծագեց արեւուն լոյսը։

Արդարներու (հաւատացեալներուն) ժողովներ, ամենասո՛ւրբ Երրորդութիւնը փառաբանողներ, այս լուսաւոր առաւօտուն գովեցէք խաղաղութեան առաւօտը՝ Քրիստոս, Հայր Աստուծոյ և Հոգի Աստուծոյ հետ, որ մեր վրայ ծագեց իր գիտութեան լոյսը։

Յորդորակ

Ո՛վ Սիոնի մանուկներ (Քրիստոնէական եկեղեցիին զաւակները), միշտ և անդադար օրհնեցէք արեւելքէն մինչև արեւմուտք զայն որ լոյսը ծագեց։

Արդարներու ժողովներ, և փառաբանողներ, գովեցէք զայն որ լուսաւոր իմաստութիւնը տուաւ մեզի։

Ճգնաւորք Աստուծոյ եւ ժառանգորդք երկնից արքայութեանն, որք փոխանակեցէք զանցաւորս առ ի զանանցն բարութիւնսն, բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ։

Նահատակք պանծալիք եւ սիրեցեալք ի յերկնաւոր հօրէն, որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին, բարեխօ։

Մարտիրոսք ցանկալիք եւ օրհնեալք հոգւոյն ճշմարտութեան, որք յաղթեցիք հոգւով կարեաց եւ ցանկութեան, բարե։

Գովելիք առաքինիք, եւ բաղձալիք վերնոցն պետութեանց, որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդւոց մարդկան, բարեխօ։

Կամաւոr պատարագf, մանկունf sիօf եւ կատա-եալf իմաստութեամբ, որf փոխանակ կարգին արքիf զգինին զմայլեցուցիչ, բարեխօ :

Յորդորակ

Ճգնաւոrf նօմաrիsf վկայf Քrիսsոսի բաrեխօսեցէf առ sէr վասն անձանց մեrոց :

Նահատակf կենդանիf, սիrողf Քrիսsոսի, որf չաrչաrեցայf մաrմնով վասն անուանն sեառն :

Մաrsիrոսf ցանկալիf մաrգկան ըղձալիf, հայցե-ցէf ի սուrբ հոգւոյն sալ մեզ զբաrիս :

Գովելիf վեrնոց դասուց պաrծանf աշխաrհի, խնդrեցէf զխաղաղութիւն sալ եկեղեցւոյ :

Կամաւոr սուrբ պաsաrագf՝ հաստատուն մանկունf հայցեցէf լինել եւ մեզ՝ ձեզ պսակակից :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Աստուծոյ ճգնաւորներ, և երկնքի արքայու-թեան ժառանգորդներ, որ անցաւոր (աշխարհային) բարութիւններուն փոխանակեցիք անանցանելի (երկ-նային) բարութիւնները, տէրոջը բարեխօսեցէք եկեղե-ցիին մանուկներուն (հաւատացեալներուն) համար :

Երկնաւոր հօրմէն սիրուած պանծալի նահատակ-ներ, որ Քրիստոսի հետ խաչի մահով միացուեցաք ձեր արիւնով, տէրոջը :

Ճշմարիտ սուրբ հոգիին բնակարան ցանկալի մար-

տիրոններ, որ հոգիով յաղթեցիք աշխարհային կիրքե-րուն և ցանկութեան, տիրոջը ։

Աշխարհ կը գովէ զձեզ, և վերին պետութիւնները (հրեշտակները) ձեզի կը ցանկան, որ բոլոր մարդոցմէ աւելի երանութեան հասաք, տիրոջը ։

Ձեր անձերը զոհեցիք ձեր կամքով, հասակով մանուկ բայց իմաստութեամբ կատարեալ, կաթին տեղ զմայլեցնող գինին (մարտիրոսութիւնը) խմեցիք. տի-րոջը ։

Յորդորակ

Ճշմարիտ ճգնաւորներ, Քրիստոսի վկաներ, մեր անձերուն համար բարեխօս եղիք տիրոջը քով ։

Քրիստոսը սիրող կենդանի նահատակներ, որ տի-րոջը անունին համար մարմինով չարչարուեցաք ։

Ցանկալի մարտիրոսներ որոց կարօտ կը քաշեն մարդիկ, խնդրեցէք որ սուրբ հոգին բարիքներ տայ մեզի ։

Երկնային դասերը կը գովեն զձեզ, աշխարհ ձեզ-մով կը պարծի, խնդրեցէք որ տէրը խաղաղութիւն տայ եկեղեցիին ։

Սրբութեամբ զոհեցիք ձեր անձերը՝ թէև հասակով մանուկ. խնդրեցէք որ մենք ալ պսակակից ըլլանք ձեզի ։

Լոյս արարիչ լուսոյ առաջին լոյս, բնակեալդ ի լոյս անմատոյց, հայր երկնաւոր, ի դասուց լուսեղի-նացն օրհնեալ, ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի ։

Լոյս ի լուսոյ ծագումն արեգական արդար, անճառ ծնունդ հօր որդի, յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ հօր, ի ծագել լուսոյ առաւօտ:

Լոյս, ի հօրէ բղխումն աղբիւր բարութեան հոգիդ սուրբ Աստուծոյ, մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարեբանեն, ի ծագել լուսոյ:

Լոյս, երրեակ եւ մի անբաժանելի սուրբ երրորդութիւն, զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք, ի ծագել լուսոյ առաւօտ:

Յորդորակ

Անեղանելիդ Աստուած հայր ամենակալ, ընկալ զաղաչանս մեր քոց պաշտօնէից:

Ի հօրէ ծագումն անճառ արեգակն արդար, ծագեա՛ ի յանձինս մեր զլոյսդ ողորմութեան:

Ի հօրէ բղխեալ հոգի աղբիւր բարութեան, լուսով քո լցո՛ զմեզ յայսմ առաւօտուս:

Երեք անձինք եւ մի բնութիւն, մի աստուածութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ երրո՛րդութիւն:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Լոյս, երկնաւոր Հայր, առաջին լոյսն ես դուն և անմատչելի լոյսի մէջ կը բնակիս, և լուսեղէն դասերը (հրեշտակները) կ'օրհնեն զքեզ. երբ ահա կը ծագի այս առաւօտեան լոյսը, քու բանաւոր լոյսդ ալ մեր հոգիներուն մէջ ծագէ՛:

Digitized by Google

Լոյսէն ծագած լո՛յս, արդար արեւ, ո՛վ որդի, հօրը Աստուծոյ անպատմելի ծնունդը, քու անժամանակ հայր Աստուծոյ հետ կը գովուիս արեւէն ալ առաջ, երբ գաս ։

Ո՛վ լոյս, Աստուծոյ սուրբ հոգին, բարութեան աղբիւր որ հօրմէն կը բղխես, եկեղեցիին մանուկները հրեշտակներուն հետ կը գովեն զքեզ. երբ գաս ։

Ո՛վ լոյս, սուրբ Երրորդութիւն, երեք անձ, այլ մէկ և անբաժանելի, երկրի վրայ ապրողներս երկնայիններուն հետ միշտ կը փառաւորենք զքեզ. երբ գաս ։

Յորդորակ.

Ո՛վ Աստուած, որ մէկէ մը ստեղծուած չես, ամենակալ հայր, ընդունէ՛ մեր՝ քու պաշտօնեաներուդ աղաչանքները ։

Հօրմէն ծագած ես անպատմելի կերպով, արդար արեւ, մեր անձերուն վրայ ծագէ՛ քու ողորմութեանդ լոյսը ։

Ո՛վ հոգի, որ հօրմէն կը բղխես և բարութեան աղբիւր ես, քու լուսովդ լեցուր զմեզ այս առաւօտ ։

Երեք անձեր և մէկ բնութիւն, մէկ աստուածութիւն, ի սպառ կը դաւանինք զքեզ սուրբ երրորդութիւն ։

Digitized by Google

Ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք Քրիստոս, առաջնորդեա հոգւոց մերոց յերկրէ ելանել յերկինս :

Դուռն կենաց մեզ Յիսուս, մո՛յծ եւ զմեզ առ հայր քո եւ հոգի, երգել միշտ զփառս :

Յորդորակ

Ճանապարհ բարի Քրիստոս եւ ճշմարտութիւն, առաջնորդեա հոգւոց մերոց յերկրէ յերկինս :

Դուռն կենաց մեզ Յիսուս, Աստուած ճշմարիտ, մո՛յծ եւ զմեզ առ հայր քո հոգւովդ սրբով :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Քրիստոս, փրկութեան ճամբան, ճշմարտութիւն և կեանք ես դուն, առաջնորդ եղիր մեր հոգիներուն երկրէն մինչեւ երկինք :

Ո՛վ Յիսուս, կեանքին մէջ մտնելու դուռն ես դուն, զմեզ ալ տար քու հօրդ և հոգիին, որպէս զի միշտ փառք երգենք :

Յորդորակ

Ո՛վ Քրիստոս, բարի ճամբան և ճշմարտութիւնն ես, մեր հոգիներուն առաջնորդն ես երկրէն երկինք :

Ո՛վ Յիսուս, ճշմարիտ Աստուած, կեանքը մտնելու դուռն ես դուն, զմեզ ալ տա՛ր քու հօրդ քու սուրբ հոգիով :

ԵՐԳ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄՈՒ ԽԱՂԱՂԱԿԱՆԻՆ

ԲՁ Նայեա՛ց սիրով հայրդ գթած ի քո ստեղծեալ գործս ձեռաց, եւ զբանակս հրեշտակաց տուր պահապան մեզ տկարացս, փրկեա զանձինս ի փորձանաց ի խաւարի շրջող դիւաց, զի ի տուընջեան եւ գիշերի տացուք քեզ փառս անլռելի :

Էին անեղ անսկզբան ծնունդ անճառ որդի եւ բան, որ արարեր զտիւ գործոյ եւ զգիշեր ի հանգիստ քնոյ, տուր ի ննջել աչաց մարմնոյ արթուն լինել մեզ ըստ հոգւոյ, զի :

Րաբուն հոգւոց բանաւորաց աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց, ի փակել դրանց բնութեանց մարմնոց, լոյս տուր աչաց սրտից մերոց, ի գիշերաց առ քեզ կանխել ընդ հրեղինացն օրհնաբանել, զի :

Սուրբդ սրբոց երրորդութիւն, զմեզ մաքրեա քեզ բնակութիւն, շնորհեա ընդ մանկանցն առագաստի հանգչիլ ընդ քեզ ի յանկողնի, տուր զհացուած բարեկամին զփոխ երից նկանակին, զի :

Երեւելի լոյս ստեղծեր զտիւ եւ զգիշեր բաժանեցեր, ծագեա մեզ տէր ի գիշերի զճառագայթս իմանալի, տուր յամենայն ժամանակի զպահպանող աջ քո հովանի, զի ի տուընջեան :

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր բորբոքեսցի ի հոգիս մեր, զխորհուրդս սրտից մեր մաքրեսցէ, զլոյս գիտութեան քո փայլեսցէ, ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ, զմիտս բոցով քո վառեսցէ, զի :

Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց ի զգայական ծած-

Digitized by Google

կեալ յուսոյ, որ վասն մեր եղար ի գբի եւ ննջեցեր ի տապանի, առ մեզ ննջեա արթուն բնութիւն հերքեա զչարին ներգործութիւն, զի:

Էիդ յուսոյ անստուերի պաղատանօք կամք առաջի, որ փակեալ դրամբք յերեկոյին երեւեցար մետասանին, ընդ Թովմայի առ քեզ գոչեմք տէր եւ Աստուած զքեզ դաւանեմք, էջ եւ առ քեզ յերեկոյիս եւ տուր զողջոյն քո ի հոգիս:

Րամեալքս զքեզ տէր աղաչեմք մեզ յօգնութիւն նայեա հայցեմք պահապանդ իսրայէլի անձանց մերոց լեր հովանի, օթեա՛ առ մեզ խաղաղարար եւ ննջեսցուք անխռովաբար, զի ընդ առաւօտս կանխեսցուք օրհնել զքեզ ընդ հօր հոգւով:

Գոչման փողոյն Գաբրիէլի որ ի վերջնումն գիշերի, լսել արա զմեզ արժանի եւ յաջակողմն օղեաց դասի, անշէջ վառեալ զլոյս լապտերաց ընդ իմաստուն հինգ կուսանաց, զի ընդ փեսայիդ ի յառագաստ հարսունք հոգւով մտցուք ի փառս:

Հալածեա՛ ի մէնջ տէր նշանաւ խաչի քո զընդդիմամարտս եւ զաներեւոյթ գազանն, եւ մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնն:

Բարեխօսեա վասն մեր աստուածածին Մարիամ, որ ծնար զտէր Աստուած որ հովուէրն զիսրայէլ ամենազօր եւ սքանչելի փառօքն իւրովք:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ գթած Հայր, սիրով նայէ՛ քու ձեռքովդ ստեղծածներուդ, և հրեշտակներուն բանակները պահապան ըրէ՛ մեզի պէս ակարներուն, փրկէ՛ մեր անձերը փորձանքներէ, մութին մէջ պտըտող սատանաներէն, որպէս զի գիշեր ցերեկ փառք տանք անդադար։

Անսկիզբ և անեղ Աստուծոյ անպատմելի ծնունդ, ո՛վ Որդի և Բանդ Աստուած, որ ցերեկը գործելու և գիշերը հանգիստ քնանալու համար ստեղծեցիր, երբ մարմինին աչքերը քնանան, տուր որ հոգիով արթուն ըլլանք, որպէս զի։

Դուն որ բանական հոգիներուն (մարդոց) վարդապետ ես, լոյսին աղբիւրն ես, շնորհք կը բաշխես, երբ նիւթական մարմիններուն դուռները (աչքերը) գոցուին, լոյս տուր մեր սրտերու աչքերուն, առաւօտները կանուխ քեզի գալ և հրեղէն հրեշտակներուն հետ օրհնել զքեզ, որպէս զի։

Սուրբերուն սուրբը, ո՛վ Երրորդութիւն, մաքրէ՛ զմեզ իբրև բնակարան քեզի, շնորհ ըրէ՛ որ փեսաւեր մանուկներուն հետ քեզի հետ հանգչինք անկողինի մէջ. տուր մեր բարեկամին ուղածը՝ երեք նկանակին փոխը, որպէս զի։

Նիւթական երեւցած լոյսը ստեղծեցիր, ցերեկն ու գիշերը բաժնեցիր. ո՛վ Տէր, գիշերուան մէջ ծագէ՛ մեր վրայ հոգեւոր ճառագայթները, ամէն ժամանակ մեր վրայ հովանի ըրէ՛ քու պահապան աջդ; որպէսզի։

Digitized by Google

Երկրի վրայ նետուած քու սիրոյդ կրակը թո՛ղ բորբոքի մեր հոգիներուն մէջ, թո՛ղ մաքրէ մեր սըրտերուն խորհուրդը, թո՛ղ փայլեցնէ քու գիտութեանդ լոյսը, մահուան քունէն թո՛ղ արթնցնէ, մեր մեղքը թո՛ղ վառի՛ քու բոցովդ, որպէս զի:

Ո՛վ անմատչելի լոյս, զգալի լոյսէն ծածկուած քեզի կը նայինք, որ մեզի համար գուբին մէջ զետեղուեցար և գերեզմանին մէջ քնացար. ո՛վ արթուն քնութիւն, մեր քով քնացիր, վանէ՛ չար սատանային ազդեցութիւնը, որպէս զի:

Պաղատանքով կեցած ենք քու առջեւդ որ անխաւար լոյսն ես, և իրիկունը՝ դուռներուն գոց ատենը՝ երեւցար առանձնամէկ առաքեալներուն. Թովմաս առաքեալին հետ կ՚աղաղակենք քեզի, կը դաւանինք զքեզ իբրև Տէր և իբրև Աստուած. մեր քով ալ եկիր այս իրիկուն, և մեր հոգիներուն տուր քու ողջոյնդ:

Ո՛վ Տէր, հոս հաւաքուողներս կ՚աղաչենք քեզի որ մեզի նայիս և օգնես, հովանի եղիր մեզի որ Իսրայէլի պահապանն ես. ո՛վ խաղաղարար, գիշերը մեր քով անցուր, որպէսզի անխռով քնանանք, և առաւօտուն արթննալով հայր Աստուծոյ հետ զքեզ օրհնենք հոգիով:

Արժանի ըրէ՛ զմեզ որ վերջին գիշերը լսենք Գաբրիէլի փողին ձայնը և ոչխարներուն (արդարներուն) աջակողմը կենանք, առանց մարելու վառենք լապտերներուն լոյսը իմաստուն հինգ կոյսերուն պէս, որպէս զի հոգիով հարս եղած քեզի՝ որ փեսան ես, առագաստի փառքին մէջ մտնենք:

Ո՛վ Տէր, քու խաչիդ նշանով հալածէ՛ անտեսանելի և հակառակորդ գազանը, և մի՛ փճացներ քու ժառանգներդ, զմեզ:

Բարեխօսէ՛ մեզի համար , ո՛վ աստուածածին Մա-րիամ , որ ծնար Աստուածորդը մեզ , որ իբր ամենազօր է , ողորմելի [illegible] Յիսուսի [illegible] է ։

ԳՁ Ի քեն հայցեմք հայր գթութեանց եւ Աստուած մխիթարութեանց , ի տխրական գիշերային մերձեալ ժա-մուս , մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մերոց եւ շ-նորհեա զուրախութիւն գործովք արդարութեան , աղա-չանօք սուրբ աստուածածնին եւ ամենայն արդարոց :

Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչ-մանն որդի Աստուծոյ , եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք եւ ծանրաբեռնեալք , թեթեւացո ի ծանրու-թեանց մեղաց զանձինս , եւ զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոց պատուիրանաց , աղաչեմ :

Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս մարդասէր որդի Աստուծոյ , յորժամ նորոգես զերեսս երկրի եւ վերստին ստանաս զոգիս մարդկան , նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր զծնեալսն ի քեն սուրբ աւազանաւն , աղաչեմ :

Զկենդանագիր անարատ ծննդի քո արկանեմք առա-ջի անոխակալ տէրութեանդ քո , յորժամ գաս փառօք հօր դատել զթշնամին խաչի քո , նեղեա յանցանաց մե-րոց բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի , աղաչեմք ըզ-քեզ տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ :

Հաղորդս արա եւ զմեզ տէր ընդ սրբոց քոց առա-քելոցն , որք արժանի եղեն տեսանել զքեզ ի յարութեան քո , արժանաւորեա տէր տեսանել զքեզ ի միւսանգամ քո գալստեանն , օրհնութիւն առաքողին ի բարձունս :

Digitized by Google

Ի նոցին քո յանձնի զանազան անձեղ աղաչանօք սուրբ աստուածածնին լինել զննջեցեալսն մեր, յորժամ գայցես անձամբ փառօք, քանզի քո են փառք յաւիտեանս ամէն :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ գթութեանց հայր և մխիթարութեանց Աստուած, կը խնդրենք քեզմէ մեղքի տրտմութիւններէն մխիթարէ՝ զմեզ երբ անոր կը մօտենայ գիշերային տըխուր ժամը, և արդարութեան գործերով ուրախութիւն տուր մեզի սուրբ Աստուածածնին և բոլոր արդարներուն աղաչանքով :

Ո՛վ Աստուածորդի, քու աստուածային ձայնիդ քաղցր հրամանին համեմատ՝ այս իրիկուն քու առջևդ եկած ենք յոգնած և ծանր բեռներու տակ ընկճուած, մեր անձերը թեթևցուր մեղքերու ծանրութիւններէն, և ոյժ տուր. որ մեր ազատ կամքով կրենք քու պատուիրաններուդ լուծը, սուրբ Աստուածած :

Ո՛վ մարդասէր հոգի Աստուծոյ, հոգիով կը պաղատինք քեզի այս հանգստեան ժամուն հասնելով, երբ նորոգես երկրի երեսը և դարձեալ ձեռք ձգես մարդոց հոգիները, նորոգէ և զարդարէ՝ մեր ննջեցեալները՝ որ քեզմէ ծնած են քու սուրբ աւազանովդ, սուրբ Աստուածած :

Քու ներողամիտ տէրութեանդ առջև կը դնենք քու անարատ ծնողիդ (Մարիամու) պատկերը. երբ փառքովդ գաս դատելու քու խաչիդ թշնամին

Digitized by Google

(սատանան), մեր յանցանքներուն ներէ՛ քու մօրդ և կոյսին բարեխօսութեամբ. կ'աղաչենք քեզի, ո՛վ Տէր, քու սուրբ խաչիդ հովանիին տակ պահպանէ զմեզ։

Ո՛վ Տէր, մեզ ալ մասնակից ըրէ՛ քու սուրբ առաքեալներուդ հետ, որ արժանի եղան զքեզ տեսնելու յարութիւն առած ատենդ. արժանի ըրէ՛, ո՛վ Տէր, զքեզ տեսնելու քու երկրորդ գալուդ (վերջին դատաստանին). օրհնեա՛լ ըլլայ երկինքի մէջ նա որ զքեզ աշխարհ ղրկեց։

Ո՛վ ահաւոր դատաւոր, երբ ատեանին մէջ նստիս, յիշէ՛ մեր ննջեցեալները սուրբ աստուածածնին աղաչանքով երբ գաս անպատմելի փառքով, որովհետև քեզի կը վերաբերի միշտ փառքը։

ԿԱՆՈՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՀ Համբարձաւ տէրն մեր յերկինս ասելով առա-
րձ կերտացն, նստարուք ի քաղաքիդ երուսաղէմ,
իր մինչեւ զգենուցուք զզօրութիւն ի բարձանց :

Միաբանեալ սուրբ առաքեալքն միախոհ եւ միակրօն, միաբան նստէին ի սուրբ վերնատանն, եւ անդ ունէին գալստեան սուրբ հոգւոյն :

Յանկարծակի եհաս ի նմանութիւն լուսոյ փայլման եւ եկեալ բնակեցաւ ի սուրբ առաքեալսն, մինչդեռ նստէին ի սուրբ վերնատունն :

Համբարձաւ տէրն մեր Քրիստոս օրհնութեամբ ընդ ամպս երկնից, եւ առաքելոցն երկրպագեալ դարձան յերուսաղէմ, միաբանութեամբ վերառաքէին զաղօթս :

Մտեալ ի յերկինս բիւրաւոր զօրօք բազմութեամբ հրեշտակաց, որք աղաղակէին եւ ասէին, օրհնեալ եկեալ ի յանունն տեառն :

Նստեալ ընդ աջմէ ծնողին կ'ստարելով զխոստացեալ պարգեւսն, մխիթարիչ սուրբ հոգին գայ առ ձեզ, աղբերացուցանել զմեծ զողորմութիւն :

Հ Օրհնեսցի պսակ քաղցրութեան քո տէր որ պա-
րլ հեցեր զմեզ յերկրի, այսօր համբարձար փառօք յերկինս առ հայր հրեշտակաց դասուք, օրհնեալ տէր Աստուած հարցն մերոց :

Հիացան վերինքն ընդ մարդկային քո կերպ, հարցաբանեալք զԵսայեայն՝ ո՞վ է սա դիմեալ յերկրէ արիւնազգեստեալ, օրհ :

Digitized by Google

Երգէին հրեշտակքն զզուարթութեան աւետն առ քահա-նայսն դրանց երկնից, ասէին՝ համբարձէք իշխանք զդ-րունս ձեր ի վեր եւ մտցէ արքայ, որն :

Գ. Ձեռք որ հանեցին եւ բարձր արարին զնա յաւի-տեան :

Որ եկն ի կատար իւր եւ ընկենաց զիշխանսն մահու :

Որ եդ յանձն զզինուս իւր եւ վերացուցանէ առ հայր ի յերկինս, որն :

Որ նստի ընդ աջմէ հօր հաւասար սուրբ հոգւոյն, օրհնեալ :

Ո. Որ ազատութեամբ քո նորոգեցեր զաշխարհս, եւ իջեալ փրկեցեր ի յանիծիցն Ադամայ, այսօր համ-բարձար փառօք յերկինս առ աջմէն մեր Աստուած :

Որ իջեր ի քարանձաւն խաւարին [illegible] զննելութիւն փրկութեան, այսօր :

Որ երեւեցար բազմաց [illegible] զառաքելոց զգա-ւանանող [illegible], այսօր :

Ց. Խորհրդով [illegible] երկնից զարմացեալ [illegible] [illegible] [illegible], [illegible] առ քեզ [illegible] [illegible] [illegible] [illegible] բարձրաւոր փառաց :

Այս է [illegible] բանն Աստուած որ ի խաչին [illegible] [illegible], եւ [illegible] փառօք զայս յերկինս [illegible] [illegible] [illegible] [illegible] :

Այս է որ ի գերեզմանէն յարեաւ եւ աւետեաց ըզ-[illegible], եւ [illegible] [illegible] փառօք զայս առ հայր՝ [illegible] [illegible] ի [illegible] :

Ա. Որ [illegible] այսօր [illegible] իշխա-

Ն. [illegible] ի [illegible] ի կատար [illegible]-[illegible] ի [illegible] [illegible] առ [illegible] [illegible]՝

համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր եւ մտցէ թագաւոր փառաց :

Հիացան վերնականն իշխանութիւնքն եւ սոսկալի ձայնիւ աղաղակէին առ միմեանս , ո՛վ է սա թագաւոր փառաց եկեալ մարմնով եւ անճառելի զօրութեամբ, համբարձ :

Եղանակէին վերնական պետութիւնքն հրաշալի ձայնիւ երգէին երգ նոր ասելով՝ սա ինքն է թագաւոր փառաց փրկիչ աշխարհի եւ ազատիչ ազգի մարդկան , համբար :

ՀԲ Որք տնակից եղաք նմանութեան մահու քո որ-
ՏՅ դի Աստուծոյ , արժանաւորեա զմեզ կերպարանակից լինել քեզ փառաց թագաւոր , քեզ երգեսցեն եկեղեցիք սրբոցն զերգս հոգեւորս :

Զհին մարդն խաչակից քեզ արարեր եւ զխայթոց մեղացն շիջուցեր , ազատեցեր զմեզ կենարար փայտիւն յորում մածար, եւ շիթք արեան քո արբուցին զտիեզերս, քեզ երգես :

Վասն զթութեանդ քո աստուածային մարդեղութեանդ հաւասարեցեր զմեզ մարմնոյ քո եւ արեան , պատարագաւդ հօր ի հոտ անուշից զմարմինդ առ ի մէնջ , եւ համբարձար լուսափայլ ամպօք , յայտնեցար իշխանութեանց եւ պետութեանց՝ որք հիացեալ հարցանէին եթէ այս ո՛վ է որ դիմեալ գայ յԵդոմայ , եւ յեկեղեցւոյ քո ուսան զբազմապատիկ զիմաստութիւնս քո , քեզ :

Բարեխօսէ՛ մեզ հանապազ, ո՛վ աստուածածին Մարիամ, որ ետուր Աստուածորդի Տեառն, որ իր ամենազօր է, ողորմելի փառօք Իսրայելի հայրին էր։

կբ Ի քեն հայցեմք հայր գթութեանց եւ Աստուած մխիթարութեանց, ի տխրական գիշերային մերձեալ ժամուս, մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց եւ ընձեռնեա զուրախութիւն գործովք արդարութեան, աղաչանօք սուրբ աստուածածնին եւ ամենայն արդարոց :

Ըստ խաղաղագոյն աստուածային քո հրամանի կոչման որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք եւ ծանրաբեռնեալք, թեթեւացո ի ծանրութեանց մեղաց զանձինս, եւ զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քո պատուիրանաց, աղաչա :

Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս մարդասէր հոգի Աստուծոյ, յորժամ նորոգես զերեսս երկրի եւ վերստին ստանաս զոգիս մարդկան, նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր զծնեալսն ի քեն սուրբ աւազանաւն, աղաչա :

Չկենդանագիր անարատ ծննդի քո արկանեմք առաջի անոխակալ տէրութեան քո, յորժամ գաս փառօք հօր դատել զթշնամին խաչի քո, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի, աղաչեմք ըզքեզ տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ :

Հաղորդս արա եւ զմեզ տէր ընդ սրբոց քոց առաքելոցն, որք արժանի եղեն տեսանել զքեզ ի յարութեան քո, արժանաւորեա տէր տեսանել զքեզ ի միւսանգամ քո գալստեանն, օրհնութիւն առաքողին ի բարձունս :

Ի [illegible] աղաչանօք սուրբ աստուածածնին լիցես [illegible] զննջեցեալսն մեր, յորժամ գալ- ցես [illegible] փառօք, [illegible] փառս յաւիտենից ամէն :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ գթութեանց հայր և մխիթարութեանց Աստուած, կը խնդրենք քեզմէ մեղքի տրտմութիւններէն մխիթարէ՛ զմեզ երբ ահա կը մօտենայ գիշերային տըխուր ժամը, և արդարութեան գործերով ուրախութիւն տուր մեզի սուրբ Աստուածածնին և բոլոր արդարներուն աղաչանքով :

Ո՛վ Աստուածորդի, քու աստուածային ձայնիդ քաղցր հրամանին համեմատ՝ այս իրիկուն քու առջևդ եկած ենք յոգնած և ծանր բեռներու տակ ընկճուած, մեր անձերը թեթևցուր մեղքերու ծանրութիւններէն, և ոյժ տուր. որ մեր ազատ կամքով կրենք քու պատուիրաններուդ լուծը, սուրբ աստուածած :

Ո՛վ մարդասէր հոգի Աստուծոյ, հոգիով կը պաղատինք քեզի այս հանգստեան ժամուն հասնելով, երբ Նորոգես երկրի երեսը և դարձեալ ձեռք ձգես մարդոց հոգիները, Նորոգէ և զարդարէ՛ մեր ննջեցեալները՝ որ քեզմէ ծնած են քու սուրբ աւազանովդ, սուրբ աստուածած :

Քու ներողամիտ տէրութեանդ առջև կը դնենք քու անարատ ծնողիդ (Մարիամու) պատկերը. երբ փառքովդ գաս դատելու քու խաչիդ թշնամին

Digitized by Google

(սատանան), մեր յանցանքներուն ներէ՛ քու մօրդ և կուսին բարեխօսութեամբ. կ'աղաչենք քեզի, ո՛վ տէր, քու սուրբ խաչիդ հովանիին տակ պահպանէ զմեզ ։

Ո՛վ տէր, մեզ ալ մասնակից ըրէ՛ քու սուրբ առաքեալներուդ հետ, որ արժանի եղան զքեզ տեսնելու յարութիւն առած ատենդ. արժանի ըրէ՛, ո՛վ տէր, զքեզ տեսնելու քու երկրորդ գալուդ (վերջին դատաստանին). օրհնեա՛լ ըլլայ երկնքի մէջ նա որ զքեզ աշխարհ ղրկեց ։

Ո՛վ ահաւոր դատաւոր, երբ ատեանին մէջ նստիս, յիշէ՛ մեր ննջեցեալները սուրբ աստուածածնին աղաչանքով երբ գաս անպատմելի փառքով, որովհետև քեզի կը վերաբերի միշտ փառքը ։

ԿԱՆՈՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՀ Համբարձաւ տէրն մեր յերկինս ասելով աշա-
րձ կերտացն, նստարուք ի քաղաքիդ երուսաղէմ,
լր մինչեւ զգենուցուք զզօրութիւն ի բարձանց ։

Միաբանեալ սուրբ առաքեալքն միախոհ եւ միակրօն, միաբան նստէին ի սուրբ վերնատանն, եւ ակն ունէին գալստեան սուրբ հոգւոյն ։

Ցանկարծակի եհաս ի նմանութիւն լուսոյ փայլման եւ եկեալ բնակեցաւ ի սուրբ առաքեալսն, մինչդեռ նստէին ի սուրբ վերնատունն ։

Համբարձաւ տէրն մեր Քրիստոս օրհնութեամբ ընդ ամպս երկնից, եւ առաքելոցն երկրպագեալ դարձան յերուսաղէմ, միաբանութեամբ վեր առաքէին զաղօթս ։

Մտեալ ի յերկինս բիւրաւոր զօրօք բազմութեամբ հրեշտակաց, որք աղաղակէին եւ ասէին, օրհնեալ եկեալ ի յանունն տեառն ։

Նստեալ ընդ աջմէ ծնողին կատարելով զխոստացեալ պարգեւսն, մխիթարիչ սուրբ հոգին գայ առ ձեզ, աղբերացուցանել զմեծ զողորմութիւն ։

Հ Օրհնեսցի պսակ քաղցրութեան քո տէր որ պսա-
րէ կեցեր զմեզ յերկրի, այսօր համբարձար փառօք յերկինս առ հայր հրեշտակաց դասուք, օրհնեալ տէր Աստուած հարցն մերոց ։

Հիացան վերինքն ընդ մարդկային քո կերպ, հարցաբանեալք զնսայեայն՝ ո՛վ է սա դիմեալ յերկրէ արիւնազգեստեալ, օրհ ։

Digitized by Google

Երգէին հրեշտակքն զդաւթեան առածն առ բարա-պանս դրանց երկնից , ասեն՝ համբարձէք իշխանք ըզ-դրունս ձեր ի վեր եւ մտցէ արքայ., օրհ :

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւի-տեան :

Որ ելն ի կառս հուր եւ ընկենաց զիշխանն մահու :

Որ եդ յամպս զգնացս իւր եւ վերասլացաւ առ հայր ի յերկինս , օրհ :

Որ նստի ընդ աջմէ հօր հաւասար սուրբ հոգւոյն , օրհնեա :

Ո Որ ողորմութեամբ քո հիմնեցեր զաշխարհս , եւ իջեալ փրկեցեր ի յանիծիցն Ադամայ , այսօր համ-բարձար փառօք յերկինս տէր ողորմեա մեզ Աստուած :

Որ ելեր ի բարձրադիտակ քառաթեւին առնելով զհեծելութիւն փրկութեան , այսօր :

Որ երեքօրեայ թաղմամբ քով դատապարտեցեր զդա-ւաճանող վիշապն , այսօր :

Տ Իշխանութիւնք երկնից զարհուրեցան տեսանե-լով զելս քո Քրիստոս , ընկեր առ ընկեր սարսեալ ա-սէին՝ ո՛վ է սա թագաւոր փառաց :

Սա է մարմնացեալ բանն Աստուած որ ի խաչին զմեղս սպան , եւ վերասլացեալ փառօք գայ յերկինս տէր հզօր զօրութեամբ իւրով :

Սա է որ ի գերեզմանէն յարեաւ եւ աւերեաց ըզ-դժոխս , եւ վեր համբարձեալ փառօք գայ առ հայր՝ տէր կարող ի պատերազմի :

ՏԵ Որ համբարձաւն այսօր աստուածային իշխա-

Ջ նութեամբ ի հայրական ի կառս սպասաւորե-լով ի հրեշտակական դասուցն որք նուագէին ասելով՝

համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր եւ մտցէ թագաւոր փառաց :

Հիացան վերնականն իշխանութիւնքն եւ սոսկալի ձայնիւ աղաղակէին առ միմեանս , ո՛վ է սա թագաւոր փառաց եկեալ մարմնով եւ անճառելի զօրութեամբ, համբարձ :

Եղանակէին վերնականն պետութիւնքն հրաշալի ձայնիւ երգէին երգ նոր ասելով՝ սա ինքն է թագաւոր փառաց փրկիչ աշխարհի եւ ազատիչ ազգի մարդկան , համբար :

Հբ
Դձ
Որք տնակից եղաք նմանութեան մահու քո որդի Աստուծոյ , արժանաւորեա զմեզ կերպարանակից լինել քեզ փառաց թագաւոր , քեզ երգեսցեն եկեղեցիք սրբոցն զերգս հոգեւորս :

Զհին մարդն խաչակից քեզ արարեր եւ զխայթոց մեղացն ջնջուցեր , ազատեցեր զմեզ կենարար փայտիւն յորում մածար, եւ շիթք արեան քո արբուցին զտիեզերս, քեզ երգեն :

Վասն գթութեանդ քո աստուածային մարդեղութեանդ հաւաստարեցեր զմեզ մարմնոյ քո եւ արեան , պատարագաւդ հօր ի հոտ անուշից զմարմինդ առ ի մէնջ , եւ համբարձար լուսափայլ ամպօք , յայտնեցար իշխանութեանց եւ պետութեանց՝ որք հիացեալ հարցանէին եթէ այս ո՛վ է որ դիմեալ գայ յԵդովմայ , եւ յեկեղեցւոյ քո ուսան զբազմապատիկ զիմաստութիւնս քո , քեզ :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Մեր տէրը երկինք համբարձաւ՝ աշակերտներուն ըսելով՝ նստեցէք Երուսաղէմ քաղաքին մէջ, մինչև որ բարձունքէն ընդունիք զօրութիւնը ։

Սուրբ առաքեալները մէկ խորհուրդով և մէկ կըրօնքով միաբան կը նստէին սուրբ վերնատունին մէջ, և սուրբ հոգիին գալուն կ'սպասէին ։

Յանկարծ հասաւ պայծառ լոյսի նման և բնակեցաւ սուրբ առաքեալներուն մէջ, երբ սուրբ վերնատան մէջ կը նստէին ։

Մեր տէրը Քրիստոս օրհնութեամբ համբարձաւ երկնից ամպերուն մէջէն, և առաքեալները երկրպագութիւն ընելով Երուսաղէմ դարձան, և միաբերան աղօթքներ կ'ուղղէին դէպ ի երկինք ։

Երկինք մտաւ հրեշտակներու բիւրաւոր զօրքերով որք բարձրաձայն կ'ըսէին՝ օրհնեա՜լ ըլլայ այն որ տիրոջը անունով կուգայ ։

Ծնողին (հայր Աստուծոյ) աջ կողմը նստաւ կատարելով իր խոստացած պարգևը թէ՝ մխիթարիչ սուրբ հոգին պիտի գայ ձեզի, մեծ ողորմութիւնը աղբիւրի պէս հոսեցնելու համար ։

Է *Ո՛վ տէր, օրհնեալ ըլլայ քու քաղցր գործիդ կատարումը, որ երկրի վրայ պահեցիր զմեզ, այսօր հրեշտակներու դասերուն հետ փառքով երկինք համբարձար հայր Աստուծոյ քով. օրհնեալ ես, ո՛վ մեր հայրերուն տէր Աստուածը ։*

Վերնաբնակները ապշեցան քու մարդկային կեր-

Digitized by Google

պարտէզին վրայ, և իրարու կը հարցնէին Եսայիին ըսածը թէ՝ ո՞վ է ասիկա որ արիւնի պէս կարմիր ըզգեստներ հագած կուգայ երկրէն, օրհ.

Հրեշտակները կ'երգէին Դաւիթին խօսքը երկնքի դռնապաններուն, կ'ըսէին՝ ո՛վ իշխաններ, ձեր դռուները վեր վերցուցէք և թագաւորը (Քրիստոս) թո՛ղ մտնէ, օրհ.

Օրհնեցէք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն.

Որ իր կառքին (հրեշտակներուն) վրայ հեծաւ և ընկճեց մահուան իշխանը (սատանան), օրհ.

Որ ամպերուն վրայէն քալեց և երկինք թռաւ հօրը, օրհ.

Որ հայր Աստուծոյ աջ կողմը կը նստի սուրբ հոգիին հաւասար, օրհ.

Ո Քու ողորմութեամբդ աշխարհը հաստատեցիր, և իջնելով փրկեցիր Ադամին անէծքէն, այսօր փառքով երկինք համբարձար, տէ՛ր ողորմէ մեզի.

Որ բարձրահայեաց քառաթեւին (խաչին) վրայ ելար, փրկութեան գործիք ընելով զայն, այսօր.

Որ երեք օր թաղուելով դատապարտեցիր դաւաճան վիշապը (սատանան), այսօր.

Տ Երկնքի իշխանութիւնները սարսափեցան տեսնելով քու հոն ելնելդ, ո՛վ Քրիստոս, սարսափահար կ'ըսէին իրարու, ո՞վ է այս փառաւոր թագաւորը.

Սա է մարմին առնող բանն Աստուածը որ խաչին վրայ մեղքը սպաննեց, և իր զօրութեամբ հզօր տէրը փառքով երկինք կուգայ.

Սա է որ գերեզմանէն յարութիւն առաւ և դըժոխքը քանդեց, և պատերազմի մէջ կարող տէրը փառքով կուգայ հօրը քով.

Digitized by Google

ԺԵ Այսօր աստուածային իշխանութեամբ հայրական կառքին վրայ նստած, հրեշտակները կը ծառայեն, և երգելով կ'ըսեն, ո՛վ իշխաններ, վեր վերցուցէք ձեր դուռները և թո՛ղ մտնէ փառաւոր թագաւորը (Քրիստոս):

Վերին իշխանութիւնները ապշեցան և ահռելի ձայնով կ'աղաղակէին իրարու, ո՛վ է այս փառաւոր թագաւորը որ մարմնով և սքանչելի զօրութեամբ կուգայ. ո՛վ իշխ.

Վերին պետութիւնները հրաշալի ձայնով կ'երգէին նոր երգ մը՝ ըսելով, ասիկա նոյն ինքն փառաւոր թագաւորն է, աշխարհի փրկիչ և մարդկային ազգին հոգևոր ազատարարը, ո՛վ իշխ:

ԺԶ Ո՛վ որդի Աստուծոյ, մենք որ քեզի պէս մեռանք (մեղքերուն համար), ո՛վ փառաւոր թագաւոր, արժանի ըրէ նաև քու կերպարանքդ հագնիլ. սուրբերուն ժողովները հոգևոր երգեր պիտի երգեն քեզ:

Հին մարդը (մեղանչող մարդկութիւնը) քեզի հետ խաչեցիր և մարեցիր մեղքին խայթոցը, ազատեցիր ըզմեզ կենարար փայտովը որուն վրայ կառչեցար, և քու արեան կաթիլները տիեզերքը ոռոգեցին. սուրբե:

Քու աստուածային մարդեղութեանդ գթութեամբ հաղորդեցիր զմեզ քու մարմնիդ և արիւնիդ, մեզմէ առած մարմնիդ հայր Աստուծոյ զոհեցիր անոյշ հոտերով և լուսափայլ ամպերով համբարձար, յայտնըւեցար երկնային իշխանութիւններուն և պետութիւններուն, որք զարմանքով կը հարցնէին թէ՝ ո՞վ է ասիկա որ Եդովմէն (հեթանոս, կռապաշտ աշխարհէն) կուգայ, և քու եկեղեցիէդ տօնըեցան քու բազում իմաստութիւններդ. սուրբերուն:

ԿԱՆՈՆ ՍԲՈՑ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ
(ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ)

Աչ Առաքելոյ աղաւնւոյ իջանելով մեծաձայն
տձ հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն, մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Աննիւթական աղաւնի, անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ, զոր առեալ ի հօրէ պատմէ զահաւոր եւ ըզմիւսանգամ գալուստն, զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս ելողին ի հօրէ հոգւոյն սրբոյ, որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Կենդանարար Աստուած մարդասէր հոգի, զժողովեալսն միաբանական սիրով լուսաւորեցեր հրեղինօք լեզուօք, վասն որոյ եւ մեք այսօր տօնեմք զգալուստ քո սուրբ:

Զուարճացան քո գալստեամբն սուրբ առաքեալքն, կոչելով ի միասին զցրուեալսն ի միմեանց բազմաձայն լեզուօք, վասն:

Հոգեւորական սուրբ մկրտութեամբ զարդարեցեր նորօք զտիեզերս ի զգեստս լուսափայլս եւ նորափետուրս, վասն որոյ:

Բկ Երրորդութիւն անքաժանելի եւ զօրութիւն երկնային լոյս ծագեալ յաշխարհ, նմա հանցուք զօրհնութիւնս երգով:

Որ էջն յերկնից այսօր եւ հանգեաւ յառաքեալսն ճշմարիտ սուրբ հոգին, նմա:

Digitized by Google

Որ ի խորհուրդս փրկականս այսօր ընդ իջանել յառաքելոցն ծանուցաւ մարգարէին, նմա :

Հ Զհոգւոյն զգալուստ տօնեմք որ մխիթարեաց

ձ զառաքեալսն հանգչելով ի նոսա հրեղէն լեզուօք, օրհնեալ յաւիտեանս :

Զերեւումն հոգւոյն տօնեմք վերաբերեալ Աստուած խոստովանեմք նորոգող եւ կենդանարար, օրհ :

Այսօր ուրախացեալք հոգւովն խոստովանիմք Աստուած զհոգին սուրբ բաշխումն եւ լցուցիչ զամենայն, օրհ :

Գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան :

Զելողն ի հօրէ զէակից որդւոյն, սուրբ զհոգին օրհնեն :

Զեկեալն այսօր Աստուած հրեղինօք լեզուօք, առ քանն ընտրութեան օրհնեն :

Մ Այսօր նոր ժողովուրդք ցնծացէք ընդ գալուստ հոգւոյն սրբոյ, մեծացուցանելով զելողն ի հօրէ :

Այսօր ցնծան առաքեալքն զարդարեալք ի շնորհաց հոգւոյն սրբոյ մեծացու :

Այսօր զուարճացան արարածք հոմարիս գալստեամբ հոգւոյն սրբոյ, մեծացու :

Ո Որ յամենայնի ես աստուածութիւն, եւ ի ձայն հնչման իջեր յերկնից սուրբ հոգի, ողորմեա մեզ :

Որ զամենայն լնուս զօրութեամբ քով, եւ ի դասս առաքելոցն իջեր բնակիլ սուրբ հոգի, ողորմ :

Որ անբաժանելի ես յաստուածութեան եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն սուրբ հոգի, ողորմ :

Digitized by Google

Տ Որ ի քերոբէական կառս հանգչիս այսօր իջեր յերկնից ի դասս առաքելոցն սուրբ հոգի, օրհնեալ ես բազմաւոր անմահ :

Որ գնաս ի վերայ թեւոց հողմոց, այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն սուրբ հոգի, օրհն :

Որ խնամես տեսչութեամբ զքո զարարածս, այսօր եկիր ի հաստատել զեկեղեցի քո սուրբ հոգի, օրհ :

Տ Ծորովեալ ընտրելոց մտաւորացն, սպասեալ մնային աւետեացն հօր հաւատով ի վերնատանն :

Սուրբ հոգին երեւեալ սրբոցն յոյց խնդութեամբ սուրբ զառաքեալսն հաւատով ի վերնատանն :

Որք արբին զհուրն կենդանի եւ ընթացեալք արբուցին տիեզերաց, որք արբինն կենդանացան :

ԶԵ Որ ի հարասարդ ի յաղբերէն յառաջ բղխեալ

ԲՅ անհատաբար ի յորդւոյ տիրապէս սուրբ հոգին այսօր ի յերկնից սաստիկ հնչեալ ի դասս առաքելոցն յղուցիչ բոլորից, զնա օրհնեցուք երկրպագելով :

Որ յանսկիզբն եւ ի միոս ի յէէն նոյնագոյ բնութեամբ, անորիս բաժանմամբ ի յորդւոյ առաքչակից սուրբ հոգին այսօր հրով բաժանեալ լեզուս քարոզիցն, ի լոյս ածեալ զազգս մարդկան բաժանմամբ պէս պէս շնորհաց, զնա :

Որ ի վերայ ջուրցն գոլով գոյացոյց զարարածս, անանջրպետն ի հօրէ եւ յորդւոյ իշխանակից սուրբ հոգին այսօր վերածնեաց զազգս ամենայն, ջրոյ կենդանւոյ բղխեալ յերուսաղէմ, զնա :

Digitized by Google

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ղրկուած աղաւնին (սուրբ հոգին) բարձրաձայն հնչումով երկինքէն իջաւ, և պայծառ լոյսի նման կրակով զինեց աշակերտները առանց այրելու զանոնք, երբ սուրբ վերնատունին մէջ նստած էին։

Աննիւթ աղաւնի և անքննելի, որ կը քննէ Աստուծոյ խորին խորհուրդները, և հայր Աստուծմէ առնելով կը պատմէ Քրիստոսի ահաւոր և երկրորդ գալուստը, առաքեալները քարոզեցին թէ սուրբ հոգին ալ համագոյակից է հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ։

Օրհնեալ ըլլայ բարձունքին մէջ սուրբ հոգին որ հայր Աստուծմէ կը բղխի, որուն միջոցաւ առաքեալները գինովցան անմահական բաժակով, և երկրի բնակիչները երկինք հրաւիրեցին։

Ո՛վ մարդասէր հոգի Աստուած, որ կեանք կուտաս, հրեղէն լեզուներով լուսաւորեցիր զանոնք որ միաբանական սիրով հաւաքուած էին, ուստի մենք ալ այսօր կը տօնենք քու սուրբ գալուստդ։

Սուրբ առաքեալները ուրախացան քու գալուդ վրայ, և զանազան տարբեր լեզուներով իրարմէ բաժնուածները ի մի կոչեցին, ուս։

Անոնց (առաքեալներուն) միջոցաւ հոգեւոր և սուրբ մկրտութեամբ ամբողջ աշխարհը զարդարեցիր լուսափայլ և նորափետուր զգեստներով, ուստի։

Անբաժանելի երրորդութիւնը և երկնային զօրութիւնը լոյս ծագեցաւ աշխարհի վրայ, օրհնենք զանիկա երգերով։

Digitized by Google

Ճշմարիտ սուրբ հոգին այսօր երկինքէն իջաւ և առաքեալներուն վրայ հանգչեցաւ, օրհ։

Մարգարէն կանուխ գուշակեց փրկութեան խորհուրդով առաքեալներուն վրայ անոր իջնելը, օրհ։

Հ *Կը տօնախմբենք սուրբ հոգիին գալուստը, որ առաքեալները մխիթարեց հրեղէն լեզուներով անոնց վրայ հանգչելով, ի սպառ կ՚օրհնենք զայն։*

Կը տօնախմբենք սուրբ հոգիին երեւիլը, աւելցընելով թէ կը դաւանինք զայն իբրև նորոգող և կենդանարար Աստուած, ի սպառ։

Այսօր հոգիով ուրախացած՝ իբրև Աստուած կը դաւանինք սուրբ հոգին, որ կը բղխի և կը լեցնէ զամէնքը, ի սպառ։

Օրհնեցէք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն։

Սուրբ հոգին որ հօրմէ կ՚ելնէ, և որդիի Աստուծոյ հետ նոյն էութիւնը ունի, օրհ։

Այսօր իբրև Աստուած եկաւ հրեղէն լեզուներով ընտրելու համար քրիստոնէական վարդապետութիւնը, օրհ։

Մ *Ով նոր (քրիստոնեայ) ժողովուրդներ, այսօր հրճուեցէք սուրբ հոգիին գալուն վրայ, փառաւորելով զայն, որ հայր Աստուծմէն կ՚ելնէ։*

Այսօր առաքեալները կը հրճուին, սուրբ հոգիին շնորհներով զարդարուած, փառաւորև։

Այսօր արարածները ուրախացան սուրբ հոգիին իրապէս գալուն վրայ, փառաւորև։

Ո *Ո՛վ սուրբ հոգի, որ ամէն բանի մէջ Աստուած ես, և բարձրաձայն իջար երկինքէն, ողորմէ՛ մեզի։*

Digitized by Google

Որ ամէն բան կը լեցնես քու զօրութեամբդ, և վար իջար բնակելու առաքեալներու դասին վրայ, ողորմ։

Ո՛վ սուրբ հոգի, որ աստուածութեան մէջ անբաժանելի ես (հայր Աստուծմէն և որդի Աստուծմէն), և հրեղէն լեզուներու բաժնուելով առաքեալներուն վրայ հանգչեցար, ողորմ։

Տ *Ո՛վ սուրբ հոգի, որ քերոբէներէ ձևացած քու կառքիդ վրայ կը հանգչիս, այսօր երկինքէն իջար առաքեալներու դասին վրայ, օրհնեալ ըլլաս, ո՛վ անմահ թագաւոր։*

Ո՛վ սուրբ հոգի, որ հովերու թևերուն վրայ կը քալես, այսօր առաքեալներուն վրայ հանգչեցար հրեղէն լեզուներու բաժնուելով, օրհ։

Ո՛վ սուրբ հոգի, որ հովերու թևերուն վրայ կը քալես, այսօր առաքեալներուն վրայ հանգչեցար հրեղէն լեզուներու բաժնուելով, օրհ։

Ո՛վ սուրբ հոգի, որ կը նախախնամես քու արարածներդ, այսօր եկար հաստատելու քու եկեղեցիդ, օրհ։

Տ *Ընտրեալ տասնևմէկ առաքեալները հաւաքուելով, վերնատունին մէջ հաւատքով կ՚սպասէին հայր Աստուծոյ խոստումին։*

Սուրբ հոգին սուրբերուն երևելով, ուրախութեամբ և հաւատքով լեցուց սուրբ առաքեալները վերնատունին մէջ։

Որ կենդանի կրակը խմեցին, և փութացին ամբողջ աշխարհի ալ խմցնել. խմողները կեանք առին։

ՃԸ *Այսօր սուրբ հոգին, որ հայր Աստուծմէ չար-*

Digitized by Google

ժամ աղբիւրէն կը բղխի խոկապէս և որդիէն չի բաժանուիր, սաստիկ ձայնով երկինքէն թափեցաւ առաքեալներու գլխին վրայ և զամէնքը լեցուց. օրհնենք զայն երկրպագութեամբ։

Այսօր տօնը հոգւոյն, որ կ'ելնէ անսկիզբ և մշտափառ Հայր Աստուծմէն, նո՛յն բնութեամբ, և որդի Աստուծմէն կը բաժնուի առանց տարբերութեան, կրակով կը բաժնէ քարոզիչներուն (առաքեալներուն) լեզուները, և մարդկային ազգը կը լուսաւորէ զանազան շնորհներ բաշխելով, օրհ։

Այսօր տօնը հոգւոյն, որ (աշխարհի սկզբնաւորութեան ատեն) ջուրերուն վրայ շրջելով արարածները ստեղծեց, որդի Աստուծմէ և Հայր Աստուծմէ անբաժան է, անոնց հետ նոյն իշխանութիւնը ունի, նորէն ծնունդ տուաւ բոլոր ազգերուն, կենդանի ջուր բղխելով Երուսաղէմի մէջ, օրհ։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

ԱՀ Նոյն եւ նման Հօր եւ Որդւոյ Հոգիդ ամեն
ԲՅ եւ համագոյ, բղխումն Հօր անքննաբար առող
ԿԵ Հոգւոյ անճառաբար, ի վերնատունն այսօր ի-
ջեր զհոգիդ շնորհաց քոց արբուցեր, արբո՛ եւ մեզ ո-
ղորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան :

Էից ստեղծող արարածոց որ շրջէիր ի վերայ ջրոց, նոյն եւ ի ջուրսն աւազանին ի շնորհել մեզ քում էակցին, զգուես սիրով աղաւնակերպ զմարդիկ ծնանիս աստուածակերպ, արբո՛ :

Րաբուն վերնոցն իմանալեաց եւ սորին այսր ըզգալեաց, որ մարգարէս տաս ի հովուաց եւ առաքեալս ի ձկնորսաց, աւետաւոր զմաքսաւորս քարոզ բանի քում զհալածողս, արբո :

Սարսափելի հողմոյ նման ահեղագոչ սաստիկ հընչմամբ երեւեցար ի վերնատանն Հոգիդ դասուն երկոտասանն, որք առ ի քէն մկրտեցան որպէս զոսկի հրով մաքրեցան, մաքրեա ի մէնջ զմէգ մեղաց եւ զգեցո զլոյս փառաց :

Էկիր յերկիր աստուածաբար դատել զաշխարհս իշխանաբար, ընդ արդարութեան եւ ընդ մեղաց եւ ընդ չարին դատաստանաց, բացեր զգանձդ անհիւթական պարգեւս ետուր որդւոց մարդկան, մաքր :

Սէրն ի սիրոյ զսէրդ առաքեաց յինքն զանդամս իւր քեւ յօդեաց, զեկեղեցի իւր զոր շինեաց եօթն սեամբ քո հաստատեաց, տնտես ի նմա եդ զառաքեալսն եօթնեակ շնորհօք քո զարդարեաց, մաքր :

Digitized by Google

Հ Որ անիմանալիդ ես յէութեամբ եւ անպատում
Ձ հոգիդ ճշմարիտ, անսկզբնաբար բղխումն ի Հօրէ, եւ համագոյակից որդւոյն միածնի, օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց:

Որ կատարեալ անձնաւորութեամբ յերից կատարելոց մի եւ նոյն բնութիւն, որով ընդ Հօր եւ ընդ որդւոյ միշտ երկրպագիս յարարածոց հոգի Աստուծոյ, օրհ:

Որ համապատիւ Հօր եւ որդւոյ քարոզեցին զքեզ աստուածաբանքն եկեղեցւոյ, յոր մկրտիմք եւ դաւանիմք համագոյ երրորդութիւն անբաժանելի, օրհ:

Գ Զտէր օրհնեցէք բարձր արարէք զբաշխօղն շնորհաց:

Եկայք նոր արարածք ի Քրիստոս նորածնեալք աւազանաւն ի հոգւոյն սրբոյ, բարձր:

Նոր քահանայութիւն վերապատուեալ ի Քրիստոսէ օծմամբ սուրբ հոգւոյն, բարձր:

Ո Որ առաքեցար ի Հօրէ հոգիդ անեղ եւ համագոյ աղաչանօք տնօրինաբար քում էակցին լինել մխիթարիչ սուրբ առաքելոցն, աղաչեմք զքեզ ողորմեա:

Որ իջեր տիրաբար յերկնից սաստիկ հողմոյ նման Աստուած յայտնապէս, եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար ի դասս առաքելոցն, աղաչ:

Որ արբուցեր երկնաւոր գինեաւն իմաստութեան զհոգիս սրբոց քոց առաքելոցն, որք արբուցին տրտմեցելոց որդւոց Ադամայ զբաժակն ուրախարար յայգւոյն եդեմայ, աղաչ:

Տ Որ յերկնային զօրս անմարմնոցն նախ հեղեր առատապէս հոգիդ ճշմարիտ, զաստուածայինն եւ զգերազոյն քո իմաստութիւնդ լինել փառաբանիչ սուրբ

երրորդութեանդ, ընդ նոսին փառաւորեմք զերեակ միութիւնդ :

Որ զկերպարանն աստուածայինն սեղծեալ երրորդութեանդ խորհրդակցութեամբ զարդարեցեր փչմամբ շնորհաց քոց կենդանարար, եւ ընդ ծնեալսն առ ի նմանէ խօսեցար օրհնօք եւ մարգարէիւք, ընդ նա :

Որ յերկրորդի յինեյութեանս յետ յարութեան քում եալցին մտեալ ի վերնատունն դրօքն փակելովք շնորհելով ըստ առաջին փչմանն զքեզ մեծարանիցն, առաքելոցն ասաց՝ առէք հոգի սուրբ, ընդ նո :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Հոգի Աստուած, Հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ նոյն և նման ես, մէկէ մը ստեղծուած չես, նոյն գոյութիւնը ունիս անոնց հետ, Հայր Աստուծմէ կը բղխիս անքննելի կերպով, որդի Աստուծմէ կ'առնես անպատմելի կերպով, այսօր վերնատունը իջնելով քու շնորհներուդ հոգին խմցուցիր. մեզի ալ մեղքցիր և քու իմաստութեանդ բաժակէն խմցուր :

Արարածներուն ստեղծիչը, որ ջուրերուն վրայ կը սորոտէիր, նոյնպէս աւազանին (մկրտութեան) ջուրերուն վրայ՝ քու էակիցիդ (Քրիստոսի) շնորհիւ՝ աղաւնիի պէս սիրով կը զուրգուրաս, և աստուածային կերպարանքով ծնունդ կուտաս մարդոց, մեզի ալ :

Երկնային հոգեւոր էակներուն և այս աշխարհի նիւթական էակներուն վարդապետն ես, հաւլինեքէն

մարգարէ կը հանես, ձկնորսներէն առաքեալ, մաքսաւորներէն աւետարանիչ, զքեզ հալածողներէն քարոզիչներ, մեզի ալ։

Սարսափելի հովի մը նման, ահաւելի և սաստիկ ձայներով, ո՛վ հոգի Աստուծոյ, վերնատան մէջ երեւցար տասներկու առաքեալներուն որ քեզմէ մկրտուեցան և ոսկիի պէս կրակով մաքրուեցան, մեր վրայէն մաքրէ՛ մեղքերուն մշուշը և փառքի լոյս հագցուր։

Երկրի վրայ եկար իբրև Աստուած, իբրև իշխան երկիրը դատելու արդարութեան համար, մեղքին համար, և չարը (սատանան) դատապարտելու համար, աննիւթական գանձդ թափիր և պարգևներ տուիր մարդոց, մաքրէ՛։

Սէր հայր Աստուծմէ ծնող սէր Քրիստոս զրկեց զքեզ որ սէր ես, քեզմով իրեն միացուց իր անդամները (քրիստոնէական եկեղեցիին զաւակները), քու եօթն ձիրներովդ (շնորհներով) ամրացուցիր իր շինած եկեղեցին, անոր տնտես դրաւ առաքեալները զոր զարդարեց քու եօթն շնորհներով, մաքրէ՛։

Հ Ո՛վ ճշմարիտ հոգի, որուն էութիւնը ըմբռնել անկարելի է և անպատմելի է, առանց սկիզբի ունենալու հայր Աստուծմէ կը բղխիս և միածին որդիին հետ նոյն գոյութիւնը ունիս, կ՚օրհնենք զքեզ, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Կատարեալ անձնաւորութեամբ, երեք կատարեալներէն ըլլալով մէկ և նոյն բնութեամբ, ո՛վ Աստուծոյ հոգի, միշտ կը պաշտուիս հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ, կ՚օրհ։

Եկեղեցիին աստուածաբանները հայր Աստուծոյ և

Digitized by Google

որդի Աստուծոյ հետ նոյնապատիւ քարոզեցին զքեզ , որով կը մկրտուինք և կը խոստովանինք համագոյ և անբաժան Երրորդութիւնը , կ'օրհ ։

Օրհնեցէք տէրը , փառաւորեցէք զայն որ շնորհ կը բաշխէ ։

Քրիստոսով պատրաստուած նոր առագաստներ , որ սուրբ հոգիէն դարձեալ ծնաւ մկրտութեան աւազանին մէջ , եկէք փառա ։

Նոր քահանաներ Քրիստոսէ պատուուած , և սուրբ հոգիէն օծուած , փառաւորե ։

Ո *Ո՛վ անեղ և համագոյ հոգի , որ հայր Աստուծմէ ղրկուեցար քոն էակիցիդ (Քրիստոսի) իբրև մարդ աղաչելուն համար , սուրբ առաքեալներուն մխիթարիչ ըլլալու , կ'աղաչենք քեզի , ողորմէ՛ ։*

Որ սաստիկ հովի մը նման իսկապէս իջար երկինքէն , յայտնապէս իբրև Աստուած , և հրեղէն լեզուներու բաժնուելով , հանգչեցար առաքեալներու խումբին վրայ , կ'աղաչ ։

Որ իմաստութեան երկնաւոր գինիով գինովցուցիր քու սուրբ առաքեալներուդ հոգիները , որ Ադամի տրտմած որդիներուն խմցուցին Եդեմի այգիէն ուրախարար բաժակը , կ'աղաչ ։

Տ *Ո՛վ ճշմարիտ հոգի , որ նախ և առաջ երկնային անմարմին զօրքերուն վրայ առատօրէն թափեցիր քու աստուածային և բարձրագոյն իմաստութիւնդ՝ որպէսզի սուրբ Երրորդութիւնդ փառաբանեն , անոնց հետ կը փառաւորենք երեքանձնեայ միութիւնդ ։*

Երրորդութեան խորհրդակցութեամբ աստուածային կերպարանքը (Ադամը) ստեղծելով զարդարեցիր քու

Digitized by Google

կենդանարար շնորհքդ փչելով, և անկէց վերջ ծնած-ներուն հետ օրէնքներով և մարգարէներով խօսեցար, անոնց հետ ։

Երկրորդ ստեղծագործութեան (Քրիստոսով) ատեն քու էակիցդ իր յարութենէն վերջ վերնատունը մտաւ դուռները գոց, և առաջին փչումին պէս դքեզ շնոր-հեց տասնեւմէկին, ըսելով անոնց՝ առէք սուրբ հոգին. անոնց հետ ։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ԵՐՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

Ա։ Բէ Ձլ Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգումն, քանզի նորոգօղն էից Հոգին էջ ի սուրբ վերնատունն, որով նորոգեցան դասք առաքելոցն :

Այսօր հողանիւթեայ բնութիւնս ցնծայ ընդ նոր հաստութեան, քանզի որ եբարձ զհոգին ի մարդկանէ մարմնին եղելոց դարձեալ վերստին զնոյն պարգեւէ :

Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ ըզգալուստ սուրբ Հոգւոյն, որով զարդարեցան ի զգեստ լուսափայլս եւ զերապայծառս, երգեն ընդ սրոբէսն զերեքսրբենին :

Որ զմիաբանեալսն յաշտարակին բաժանմամբ լեզուացն քակեաց, այսօր զբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեալ ի սուրբ վերնատունն . ամենայն հոգիք օրհնեցէք զհոգին Աստուծոյ :

Որ էջ հոգին տեառն եւ առաջնորդեաց երկոտասան ցեղիցն իսրայէլի ի յանապատին, այսօր երկոտասանն առաքելոցն առաջնորդէ ի յաւետարանն, ամենայն հոգիք:

Որ ելից հոգին տեառն զբեսելիէլ ճարտարապետ խորանին, այսօր շինէ զմարդիկ խորան սուրբ երրորդութեանն, ամենայն հոգիք :

Հ Տձ Որ բոլորից ես պատճառ էից անպատճառից եւ որոց պատճառաւ, հայր անծին եւ անըսկիզբն, որդւոյ պատճառ անժամանակ ծննդեամբ եւ հոգւոյ բղխման անքննաբար, օրհնեալ ես Աստուած հարցն մերոց :

Որ կամաւ հօր եւ սուրբ հոգւոյն անեղակից բանդ Աստուած ի հայրական ծոցոյ իջեր աւետօք Գաբրիէլի որ զհոգին բերկրեալ կուսին յորժէ ծնար մարմնով անճառաբար ի հոգւոյն սրբոյ, օրհ:

Որ մարգարէիւքն զաւետակեյեր հոգիդ յառաջագոյն զգալուստ քում էակցին, եւ ի յորդանան վկայեցեր աղաւնակերպ իջմամբ ի վերայ մարմնացեալ բանին, օր:

Գ Զսէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան:

Այսօր համագոյակիցն հօր եւ որդւոյ հոգին հրափայլ ծագմամբ իջեալ ի վերնատունն մկրտեաց զդաս առաքելոցն ի հուրն անկիզելի, զսէր:

Այսօր արարչակիցն հօր եւ որդւոյ հոգին բղխեալ անհիւթական ջուր կենդանի յերուսաղէմ իմաստութեան եւ մաքրութեան մեղաց, զսէր:

Ո Որ ի վերայ բղխեալ զաւազանին յեսսեայ, հանգեար եօթնարփեան շնորհօք, հոգի Աստուծոյ եւ խորհրդոյ, հոգի հեզութեան եւ զօրութեան, հոգի իմաստութեան եւ գիտութեան, հոգի երկիւղի աստուածապաշտութեան, աղաչեմք շնորհեա եւ մեզ ողորմութեամբ ի քո պարգեւացդ:

Որ զգուշակեալն քո եսայեաւ եկից օծեալն ի քէն մարմնով, ասէ՝ հոգի տեառն ի վերայ իմ, զոր ի տնօրէնութեանն խոնարհութեամբ ընթերցեալ որ վասն իւր զբան մարգարէին, աղաչ:

Որ զառաքումն առ ի հօրէ ի եւ հոգւոյդ բանին յաշխարհ մարգարէիւն ծանուցեր, զոր ի դիմաց մարդացելոյն բարբառիւր առ մարդկութիւնս՝ տէր տէր առաքեաց զիս եւ հոգի նորա, աղաչ:

Տ Ընդ երկնայնոց հոգեղինաց դասուցն հոգւոցն

Digitized by Google

ստեղծողին երգեմք, փառաւորեալ է գալուստ հոգւոյն սրբոյ :

Ընդ առաքելոց խմբիցն այսօր զուարճացեալք վետագոչեմք հոգւով, փառաւոր :

Աստանօր վերնատուն սիօնի որդիք նորոյ երգեցէք ձայնիւ վերնոցն, փառա :

Ի ձայն ցնծութեան ամենայն հոգիք տացուք զմեզ նորոգողին զփառս, փառա :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հրեշտակները այսօր ուրախացան մեր՝ երկնաւորներուս նորոգուելուն վրայ, որովհետև արարածները նորոգող հոգին վերնատունը իջաւ, որով նորոգուեցան առաքեալները :

Մեր հողեղէն բնութիւնը այսօր կը հրճուի հայր Աստուծոյ մեզի հետ հաշտուելուն վրայ, որովհետև նա որ (ջրհեղեղին ժամանակ) իր հոգին վերցուց մարմին եղող մարդիկներէն, դարձեալ կը շնորհէ նոյն հոգին :

Եկեղեցիին մանուկները այսօր ուրախութեամբ կը տօնեն սուրբ հոգիին գալուստը, որուն շնորհիւ լուսափայլ և յոյժ պայծառ զգեստներով զարդարուեցան. և սերոբէներուն հետ կ'երգեն սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ :

Ո՛վ բոլոր հոգիներ, Աստուծոյ հոգին օրհնեցէք, որ լեզուները բաժնելով քակեց աշտարակին մէջ գտնուողներուն միաբանութիւնը, և այսօր դարձեալ սուրբ վերնատունին մէջ համաձայնեցուց ազգերուն բաժնըւած լեզուները :

Digitized by Google

Տիրոջը հոգին որ իջաւ և անապատին մէջ առաջնորդ եղաւ Իսրայէլի տասներու ցեղերուն, այսօր իր աւետարանով առաջնորդ կ'ըլլայ տասներկու առաքեալներուն. ո՛վ բոլոր հոգիներ, Աստուծոյ հոգին օրհնեցէք:

Տիրոջը հոգին, որ լեցուց Երուսաղէմի տաճարին ճարտարապետ Բեսելիէլը, այսօր սուրբ Երրորդութեան խորան կը չինէ մարդիկը, ո՛վ բոլոր:

Հ Ո՛վ հայր Աստուած, որ մէկէ մը ծնած չես և սկիզբ չունիս, պատճառ ես բոլոր անպատճառ և պատճառաւոր էակներուն, անժամանակ ծնունդով պատճառ ես որդիին, և հոգին քեզմէ կը բղխի անքննելի կերպով, օրհնեալ ես, ո՛վ մեր հայրերուն տէր Աստուածը:

Ո՛վ բանդ Աստուած, որ հայր Աստուծոյ և սուրբ հոգիին կամքով հայրական ծոցէն իջար Գաբրիէլ հրեշտակին բարի լուրովը, որ հրճուեցուց կոյսին հոգին, որմէ մարմինով ծնար անպատմելի կերպով սուրբ հոգիին միջոցաւ, օրհ:

Ո՛վ հոգի, որ առաջուց մարգարէներու միջոցաւ գուշակեցիր քու էակիցիդ գալուստը, և Յորդանանի մէջ վկայեցիր՝ մարմին առնող բանն Աստուծոյ վրայ իջնելով աղաւնիի պէս, օրհ:

Օրհնեցէք տէրը, ի սպառ փառաւորեցէք զայն:

Հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ գոյակից հոգին այսօր հրափայլ ծագումով վերնատունը իջնելով, առաքեալները մկրտեց անկիզելի կրակովը, օրհ.

Հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ արարչակից հոգին այսօր Երուսաղէմի մէջ բղխեցուց իմաստութեան

և մեղքի մաքրութեան աննիւթական կենդանի ջուր, օրհ :

Ո Եօթն շնորհներով հանգչեցար Յեսսէի (Դաւիթի) սերունդին վրայ, Աստուծոյ և խորհուրդի հոգի, խոնարհութեան և զօրութեան հոգի, իմաստութեան և գիտութեան հոգի, աստուածպաշտութեան և երկիւղի հոգի. կ'աղաչենք մեզի ալ շնորհ ըրէ ողորմութեամբ քու պարգեւդ :

Մարմինով քեզմէ ծնունդը (Քրիստոս) կատարեց Եսայիին գուշակածը, ըսաւ՝ տիրոջը հոգին իմ վրաս, և մարգարէին իրեն մասին ըսած խօսքը խոնարհութեամբ կարդաց իր տնօրէնութեան (աշխարհի վրայ գտնուած) ատեն, կ'աղաչ :

Մարգարէին միջոցաւ յայտնեցիր բանին Աստուծոյ աշխարհ գալը հայր Աստուծոյ և Հոգիիդ կողմէ, մարգարէն մարդացեալին (Քրիստոսի) կողմէ կը խօսէր մարդկութեան թէ Տէրը և անոր Հոգին ղրկեց զիս, կաղաչ :

Տ Երկնային հոգեղէն հրեշտակներուն հետ կ'երգենք հոգիները ստեղծողին. սուրբ հոգիին գալուստը փառաւորուած է :

Առաքեալներուն խումբին հետ այսօր ուրախանալով կ'աղաղակենք հոգիով դէպ ի երկինք. սուրբ :

Հոս է Սիոնի վերնատունը, Նոր սիոնի որդիներ, հրեշտակներուն ձայնով երգեցէք, սուրբ :

Մենք՝ բոլոր հոգիներս, ուրախութեան ձայնով փառք տանք անոր որ զմեզ նորոգեց. սուրբ հոգիին գալուստը փառաւորուած է :

ԿԱՆՈՆ ՉՈՐՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

ԱՀ Արեգակն արդարութեան Քրիստոս ծագեալ
ՓՅ յաշխարհ հալածեաց զխաւարն անգիտութեան,
ՄՐ եւ յետ մահու եւ յարութեան համբարձաւ առ
Հայր յորմէ ծագեաց, որ երկրպագի յերկնաւորաց եւ
յերկրաւորաց ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն, վասն որոյ եւ
մեք երկիր պագանեմք Հօր Հոգւով եւ ճշմարտութեամբ:

Որ փոխանակ ծագածին բանին որ ել յերկինս, ա-
ռաքեցաւ աւետիքն Հօր ի բարձանց Հոգին ճշմարտու-
թեան, մխիթարել զորս յադամայ տրտմեցելոց եւ հրա-
զինել զընտրեալ զդասս առաքելոցն, վասն:

Այսօր տրտմականն եւ գիշերայինն լուծան երկունք
ծննդեան նախամօրն, քանզի զծնեալսն մարմնով ի մահ
եւ յապականութիւն վերստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ
Հօրն երկնաւորի, վասն:

Որ համագոյդ ես Հօր եւ Որդւոյ անճառաբար
բղխումն ի միջս էէն, այսօր բղխեցեր ջուր կենդանի
յերուսաղէմ, Հոգի Աստուծոյ ողորմեա:

Որ աթոռակից ես Հօր եւ Որդւոյ, որով կենդա-
նածեալք ի ջուրց արարածք այսօր որդիք Աստուծոյ ծնա-
նիս ի ջուրց, Հոգի Աստուծոյ, ողորմեա:

Որ փառակից ես Հօր եւ Որդւոյ եւ քննես զխորս
Աստուծոյ, այսօր խորագէտս իմաստից զյիմարս աշխար-
հի արարեր, Հոգի:

Հ Որ անքննինդ ես յէութեան համագոյ երրոր-
ՏԷ դութիւն, երեքսրբեան մի տէրութիւն միով բը-
նութեամբ աստուածութիւն, զքեզ բարեբանեմք Աս-
տուած հարցն մերոց:

Որ ես պատճառ որդւոյ ծննդեամբ հայր յառաջ քան զյաւիտեանս, յորմէ հոգիդ ճառագայթեալ անորիշ բաժանմամբ, զքեզ:

Որ էակից ես հօր որդի լոյս ի լուսոյ ծագումն անճառ, անեղակից սուրբ հոգի հօր եւ որդւոյ հաւասար, զքեզ:

Գ Զտէր օրհնեցէք բարձր արարէք զբղխեալն ի հօրէ:

Այսօր ամենայն հոգիք բանաւորաց սուրբ զհոգին ճշմարտութեան, որ բոցատիպ լեզուօք ահեղագոչ սաստիկ հողմոյ հնչմամբ իջեալ ի յերկնից, օրհնեցէք ի ձայն գոհութեան բարձր արարէք զնա յաւիտեան:

Այսօր քահանայք եկեղեցւոյ սուրբ զհոգին կենդանարար որ բաշխէ առատապէս զբազմապատիկ պարգեւս յեկեղեցիս արդարոց, գովեցէք հոգեւոր երգով, բարձր արարէք զնա:

Ո Աղբիւր կենաց բաշխող շնորհաց հոգիդ իջեալ ի բարձանց, զանապական պարգեւս քո բաժանեցեր յառաքեալսն:

Որ ի վերայ ջուրցն գոլով ստեղծանէիր զարարածս, իջեալ ի ջուրս աւազանին ծնանիս որդի Աստուծոյ:

Որ զարդարեալ նորոգես միշտ զնոր քո զեկեղեցի, պէսպէս շնորհաց քոց պարգեւօք փայլին մանկունք սորա:

Տ Հոգիք հրեղինացն այսօր տօնին ընդ մեզ ըզգալուստ հոգւոյն Աստուծոյ:

Տեսանողն յառաջ նշանակէր զառատաբուղխ վտակ իմաստից ի մեզ հեղեալ ի հոգւոյն:

Վէմն հաւատոյ զմայլեալ անմահական բաժակաւն այսօր բաշխէր ծարաւեաց:

Digitized by Google

Գետոցս այս գնացիւք ցնծայ քաղաքն Աստուծոյ սիոն մայր եկեղեցի :

Վասն որոյ եւ մեք երրեակ եւ մի աստուածութեանն երգեմք զփառս ի բարձունս :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Քրիստոս, արդարութեան արեւը, աշխարհի վրայ ծագելով ցրուեց տգիտութեան խաւարը, և մեռնելէն ու յարութիւն առնելէն վերջ համբարձաւ հայր Աստուծոյ քով՝ որմէ ծագեցաւ. երկնաւորները ու երկրաւորները երկրպագութիւն կ'ընեն անոր հայր Աստուծոյ և սուրբ հոգիին հետ. ուստի մենք ալ հոգիով և ճշմարտութեամբ երկրպագութիւն կ'ընենք հայր Աստուծոյ :

Ճշմարտութեան հոգին, հայր Աստուծոյ խոստումը, բարձունքէն ղրկուեցաւ իր ծոցէն ծնած բանն Աստուծոյ տեղ որ երկինք ելաւ, մխիթարելու Ադամին տրտմած սերունդը, և կրակով զինելու առաքեալներուն ընտրեալ դասը. ուստի :

Նախամայր Եւայի տխուր և խաւարային ցաւերը այսօր բուժուեցան, որովհետեւ սուրբ հոգին մահուան և ապականութեան համար ծնածները նորէն կը ծնի իբրեւ լուսաւոր որդիներ երկնաւոր հօր. ուստի :

Ո՛վ Աստուծոյ հոգի, որ մշտագոյ էակէն անպատմելի կերպով կը բղխիս, գոյակից ես հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ, այսօր կենդանի ջուր բղխեցուցիր Երուսաղէմի մէջ. ողորմէ՛:

Ո՛վ Աստուծոյ հոգին որ հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ ստեղծագործութեան մասնակից եղար, ջուրերէն կենդանացած արարածները այսօր ալ ջուրերէն կը ծնիս իբրև Աստուծոյ որդիներ. ողորմէ՛։

Ո՛վ Աստուծոյ հոգի, որ հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ նոյն փառքը ունիս և Աստուծոյ գաղտնիքները կը քննես, այսօր իմաստուն և խորագէտ ըրիր աշխարհի յիմարները. ողորմէ՛։

Հ *Դուն որ էութեամբ անքննելի ես, համագոյ Երրորդութիւն, երեքանձնեան մէկ տէրութիւն, մէկ բնութեամբ աստուածութիւն, կը գովաբանենք զքեզ ո՛վ մեր հայրերուն Աստուածը։*

Ո՛վ հայր, որ բոլոր ժամանակներէն առաջ ծնար և պատճառ եղար որդիին, հոգին քեզմէ կը ճառագայթէ անճառ բաժանումով, կը գովաբա։

Ո՛վ որդի Աստուած, որ հայր Աստուծոյ հետ նոյն էութիւնը ունիս, լոյս Աստուծմէ լոյս ծագում ես անպատմելի կերպով, անեղակից սուրբ հոգի, հայր Աստուծոյ հաւասար, կը գովաբա։

Օրհնեցէք տէրը, փառաւորեցէք զայն որ հօրմէն կը բղխի.

Ո՛վ բանաւոր էակներու հոգիներ, այսօր երախտագիտական ձայներով օրհնեցէք և ի սպառ փառաւորեցէք ճշմարիտ սուրբ հոգին, որ բոցեղէն լեզուներով անեղաձայն սաստիկ հովի հնչումով իջաւ երկինքէն։

Ո՛վ եկեղեցիին քահանաներ, այսօր հոգևոր երգերով գովեցէք և ի սպառ փառաւորեցէք կենդանարար սուրբ հոգին, որ առաքեալներու ժողովներուն առատօրէն կը բաշխէ բազմապատիկ շնորհները։

Digitized by Google

Ո Ո՛վ հոգի, կեանքի աղբիւր որ շնորհք կը բաշխես երկինքէն իջնելով, քու անապական պարգևներդ առաքեալներուն բաժնեցիր։

Դուն որ ջուրերուն վրայ ըլլալով արարածները կը առեղծէիր, աւազանին ջուրերուն վրայ իջնելով կը ծնիս իբրև Աստուծոյ որդիներ։

Քու նոր եկեղեցիդ կը զարդարես, կը նորոգես՝ անոր մանուկները (հաւատացեալները) զանազան պարգևներով և շնորհներով կը փայլին։

Տ Հրեղէն հրեշտակները այսօր կը տօնեն մեզի հետ Աստուծոյ հոգիին գալուստը։

Մարգարէն առաջուց կը գուշակէր թէ հոգին աստուածորէն պիտի թափէ մեր վրայ իմաստութեան գետ մը։

Հաւատոյ վէմը (Պետրոս) անմահական բաժակովը գինովցած այսօր կը բաշխէր ծարաւիներուն։

Այս գետերուն ընթացքին վրայ կը հրճուի Աստուծոյ քաղաքը, Սիոն, քրիստոնէական մայր եկեղեցին։

Ուստի մենք ալ երեքանձնեայ և մէկ աստուածութեան երգենք. փառաւորեա՛լ թող ըլլայ Աստուած որ երկինքը կը բնակի։

Digitized by Google

ԿԱՆՈՆ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

ԱՀ ՏԻ Հ Զանսկզբնաբար բղխումն ի հօրէ զհոգին ճըշմարիտ , որ հնչմամբ ձայնի էջ ի վերնատունն այսօր նման սաստիկ հողմոյ , զոր փառաւորեմք հոգեւոր երգով :

Զհամագոյակիցն հօր եւ որդւոյ զբաշխողն շնորհաց , որ ի հրեղէն լեզուս բաժանեալ զբանն ընտրութեան լեզուաց շնորհեաց սուրբ առաքելոցն , զոր :

Զաղբիւրն իմաստութեան զկատարեալն անձնաւորութեամբ , որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս , զոր :

Այսօր ցնծան դասք առաքելոցն գալստեամբ հոգւոյն Աստուծոյ , զորս մխիթարեաց փոխանակ բանին մարմնացելոյ եղեալ ընդ նոսա , փառս տացուք նմա սրբասաց ձայնիւ :

Այսօր բղխեաց ջուր կենդանի յԵրուսաղէմ յորմէ լցան զետք աստուածայինք , եւ ընթացեալք արբուցին տիեզերաց զքառավտակ աղբիւրն Եդեմայ , փառս :

Այսօր ցօղով իմանալեաւ յամպոց հոգւոյն զուարթացան բոյսք եկեղեցւոյ , պարարտացան դաշտք արդարութեամբ եւ գեղեցկացան անապատք մաքուր կուսութեամբ , փառս :

Հ Անեղանելիդ Աստուած եւ եղեալդ էակ , որ առաքեցեր յաշխարհ զանեղակից քո զհոգիդ ի փառս միածնի որդւոյ քո , օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց :

Ծագումն ի հօրէ անճառ ծննդեամբ , որ ետուր

մխիթարիչ առաքելոց քոց որբոց զհոգիդ քո տիրակից գոլով, օրհ։

Հոգիդ Աստուծոյ անեղ էութիւն, կատարեալ անձնաւորութեամբ եւ կատարող բոլորից, ընդ Հօր եւ ընդ Որդւոյ միաւորեալ բնութեամբ, օրհ։

Գ Ամենայն հոգիք զհոգին սուրբ գովեցէք, զէակիցն ընդ Հօր եւ Որդւոյ երեքսրբեան ձայնիւ։

Զհուրն երկնային զարկեալ բանին յերկիր բանաւոր, որ մկրտեաց այսօր զառաքեալսն ի սուրբ վերնատունն, ամենայն։

Զեղօղն ի Հօրէ զառատաբուղխ աղբիւրն իմաստից, որ խօսեցաւն զհին եւ զնոր օրէնս Աստուծոյ, ամենայն։

Ը Իջեր տէր ողորմութեամբ քով յաշխարհ եւ զմեռեալ բնութիւնս ի կեանս վերափոխեցեր։

Ելեր տէր առ Հայր փառօք ի յերկինս, եւ մխիթարիչ առաքելոցն առաքեցեր սուրբ զհոգիդ։

Բացեր տէր այսօր զգանձդ երկնային, եւ բաշխեցեր առատապէս պարգեւս աղքատ բնութեանս։

Տ Այսօր աղբիւր գիտութեան բղխեալ ի սուրբ վերնատունն, յորմէ լցան տիեզերք զնացիւք զետոցն ոռոգմամբ։

Այսօր իջեալ ի յերկիր Հօր աւետիքն ի բարձանց, տալ աւետիս Ադամայ դառնալ յԵդեմ վերստին։

Այսօր խնդայ նոր Սիօն որդւովք իւրովք զոր ծնաւ օծմամբ հոգւոյն նորոգեալ յորդիս լուսոյ եւ տուընջեան։

Այսօր ի ձայն գոհութեան զհոգին ընդ Հօր եւ Որդւոյ հոգիք ամենայն օրհնեցէք զերեքսրբեանն երգելով։

Այսօր ցնծամք երկրաւորքս ընդ գալստեան երկնայնոյն, եւ պարելով ընդ հրեշտակս երգեմք զփառս ի բարձունս։

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հոգեւոր երգերով կը փառաւորենք հայր Աստուծ-մէ անսկզբնաբար բղխող ճշմարիտ հոգին, որ այսօր սաստիկ հովի մը պէս անեղ ձայնով վերնատունը իջաւ։

Հայր Աստուծոյ եւ որդի Աստուծոյ համագոյակից է, եւ շնորհք կը բաշխէ, եւ հրեղէն լեզուներու բաժանուելով լեզուներու ընտրութեան վարդապետութիւնը տուրք առաքեալներուն շնորհեց։

Իմաստութեան աղբիւրը, եւ անձնաւորութեամբ կատարեալը․ որ խօսեցաւ օրէնքներուն, մարգարէներուն եւ աւետարաններուն մէջ։

Աստուծոյ հոգիին գալուն վրայ այսօր կը հրճուէին առաքեալները, զորս մխիթարեց մարմնացեալ բանն Աստուծոյ տեղ որ անոնց հետ գտնուեցաւ ժամանակ մը․ փառք տանք անոր՝ սո՛ւրբ սո՛ւրբ սո՛ւրբ եղանակելով։

Այսօր կեանք տուող ջուր մը բղխեց Երուսաղէմի մէջ, որմէ լեցուեցան աստուածային գետերը, եւ առաքեալները աշխարհի վրայ երթալով խմցուցին Եդեմի (դրախտին) աղբիւրը, որ չորս գետերէ կը բաղկանար․ փառք տանք։

Այսօր եկեղեցիին բոյսերը (Նոր հաւատացեալները) դալարճացան հոգիին ամպերէն իջնող հոգեւոր ցօղով, դաշտերը արդարութեամբ պարարտացան, եւ անապատները գեղեցկացան մաքուր կոյսերով․ փառք։

<u>Հ</u> *Ո՛վ Աստուած, որ մէկէ մը ստեղծուած չես, եւ բոլոր արարածներուն արարիչն ես, որ աշխարհ ղըր-*

կեցիր քու Հոգիդ որ քեզի պէս մէկէ մը ստեղծուած չէ, և այս կերպով փառաւորեցիր քու միածին որդիդ. օրհնեա՜լ ես ո՛վ մեր հայրերուն տէր Աստուածը:

Ո՛վ որդի Աստուած, որ անպատմելի ծնունդով հայր Աստուծմէ ծագեցար, և քու սուրբ առաքեալներուդ իբրև մխիթարիչ տուիր քու Հոգիդ որուն հետ նոյն տէրութիւնը ունիս. օրհ:

Ո՛վ Աստուծոյ հոգի, անեղ էութիւն, անճառելութեամբ կատարեալ և բոլոր արարածները կը լեցնես, հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ միացած ես բնութեամբ, օրհ:

Ո՛վ բոլոր հոգիներ (մարդիկ), գովեցէք սուրբ հոգին սուրբ սուրբ սուրբ աղաղակելով, նա հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ նոյն էութիւնը ունի:

Որ բանն Աստուծոյ բանաւոր երկրի վրայ ձգած երկնային կրակն է, որ այսօր առաքեալները մկրտեց սուրբ վերնատունին մէջ:

Իմաստութեան առատաբուխ աղբիւրն է, հայր Աստուծմէ բղխող, որ Աստուծոյ հին ու նոր օրէնքները խօսեցաւ:

Ո Ո՛վ տէր, քու ողորմութեամբդ աշխարհի վրայ իջար և մեր մեռած բնութիւնը կենդանացուցիր:

Ո՛վ տէր, փառքով ելար երկինք քու Հօրդ քով, և քու սուրբ Հոգիդ ղրկեցիր իբրև մխիթարիչ առաքեալներուն:

Ո՛վ տէր, այսօր բացիր քու երկնային գանձարանդ, և մեր աղքատ բնութեան պարգևներ բաշխեցիր առատօրէն:

Տ Այսօր գիտութեան աղբիւր մը բղխեցաւ սուրբ

Digitized by Google

վերնատունին մէջ, որմէ լեցուեցաւ ամբողջ աշխարհ գետերուն ընթացքէն ոռոգուելով ։

Այսօր հայր Աստուծոյ խոստումը (հոգին) երկրի վրայ իջաւ բարձունքէն, բարի լուր տալու Ադամին որպէսզի Նորէն Եդեմ դառնայ ։

Այսօր Նոր Սիոն (քրիստոնէական եկեղեցին) կ'ուրախանայ իր ծնած որդիներով, զոր հոգիով օծելով՝ լուսաւոր և պայծառ որդիներու փոխեց ։

Ո՛վ բոլոր հոգիներ, սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ երգելով օրհնեցէք հոգին երախտագիտական ձայնով հայր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ ։

Մենք՝ երկրաւորներս այսօր կը հրճուինք երկնաւորին (սուրբ հոգիին) գալուն վրայ, և հրեշտակներուն հետ պար բռնելով կ'երգենք՝ փառաւորեա՛լ թող ըլլայ Աստուած որ երկինքը կը բնակի ։

ԿԱՆՈՆ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

Ա՛Հ Տձ Հ— Անմահարար բաժակ հեղեալ յերկնից սուրբ հոգի, զոր արբին ի վերնատանն դասք սուրբ առաքելոցն, օրհնեալ ես սուրբ հոգիդ ճշմարիտ:

Առատապէս ծաւալեալ ի մեզ հուրն կենդանի՝ քանզի արբեալ առաքելոցն եւ արբուցին տիեզերաց, օրհն:

Այսօր մեծապէս ցնծան եկեղեցիք հեթանոսաց, ընդմայլեալք ուրախութեամբ ի քէն կենդանարար բաժակ, օրհն:

Անսկիզբն Աստուած սուրբ հոգի զմարգարէութեանց նախագուշակումն արտափայլեալ լուսազարդեցեր առատապէս հեղեալ յառաքեալսն:

Անժամանակ որդի միածին, զխոստացեալ պարգեւս առաքեցեր ի վերնատունն աւարտեալ լցեր, առատս:

Ամենակալ հայր երկնաւոր զանբաժանելի լուսոյդ զծագումն հողեղինացս շնորհեցեր, առատս:

Հ —Կ Անճառելի բղխումն ի հօրէ հոգիդ ճշմարիտ, այսօր ի վերնատունն խորհրդոյ խոնարհեալ հանգեար յառաքեալսն, Աստուած հարցն մերոց:

Անքննելի խորոցդ Աստուծոյ քննօղ ընդ հօր միաւոր, այսօր ի հրեղէն թեւոցն խոնարհեալ հանգեար յառաքեալսն, Աստուած:

Անսպառ աղբիւր լուսոյ սուրբ հոգի այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն, Աստուած:

Digitized by Google

Գ Զտէր օրհնեցէք բարձր արարէք զհոգին ճշմարիտ:

Որ անճառ խոնարհութեամբ հանգեաւ յառաքեալսն, պանծալի արփիափայլ պսակ եդեալ ի նոսա, բարձր:

Որ զանճառելի խորհուրդ երրորդութեանն յայտնեաց նոցա, իմաստութեան աղբիւր կենդանի բղխեալ ի նոսա, բարձր:

Ո Որ ի հայրական իսկութենէն յառաջ բղխեալ աղբիւր լուսոյ, եւ ճառագայթարձակ լուսովն զուարճացուցեալ լցեր զառաքեալսն, աղաչանօք սոցա ողորմեա:

Որ զէութիւն քո հրեղինաց հիացմամբ ցուցեր, նոյն ինքն իմանալի աստուածայինն լուսովն զուարճացուցեալ լցեր զառաք:

Որ զաշխարհամած խաւարն ի սկզբան ի լոյս փոխեցեր, այսօր հրաշալի աստուածայինն լուսովն զուարճացու:

Որ հրաբորբոք ծաւալմամբ յառաջ խաղացեալ հոգիդ ճշմարիտ, եւ հրածորան աստուածայինն լուսովն զուարճացու:

Տ Որ ի հրացայտ սաւառնաթեւիցդ վերայ նստիս, այսօր ի դասս հողեղինաց անպատմելի սիրով հեղեալ ի յերկնից, օրհնեալ ես սուրբ հոգի Աստուած:

Որ ի հրեղէն լեզուացն եռաճիւսեակ սրբաբանիս, այսօր ի շրթունս հողեղինացն հրածորան հեղեալ ի յերկնից, օրհ:

Որ հրակերպիցն արփիափայլ բոցով միշտ երեւիս, այսօր հողեղինացն հրաճաշակ բաժակ հեղեալ ի յերկնից, օրհ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Սուրբ հոգին երկինքէն Թափեցաւ իբրեւ անմահու-Թիւն տուող բաժակ մը, զոր սուրբ առաքեալները խը-մեցին վերնատունին մէջ. օրհնեալ ըլլաս, ո՛վ ճշմա-րիտ սուրբ հոգի։

Կեանք տուող կրակը առատօրէն մեր վրայ ծա-ւալեցաւ, որովհետեւ առաքեալները խմեցին և տիե-զերքին ալ խմցուցին. օրհ։

Հեթանոսներէ ձեւացած քրիստոնէական եկեղեցի-ները այսօր մեծապէս կը հրճուին, քու կենդանարար բաժակիդ ազդած ուրախութենէն զմայլելով. օրհ։

Ո՛վ սուրբ հոգի, անսկիզբ Աստուած, մարգարէ-ներուն առաջուց գուշակածը, քու գալուստդ, փայ-լեցնելով, առատօրէն լուսաւորեցիր՝ Թափուելով ա-ռաքեալներուն վրայ։

Առանց ժամանակի եղող միածին որդի, քու խոս-տացած շնորհքդ, բարի լուրը; վերնատունին մէջ ա-ռաքեցիր և կատարեցիր։

Ո՛վ ամենակալ Հայր երկնաւոր, քու անբաժան լոյսիդ ծագումը մեզի՝ հողեղէններուս շնորհեցիր։

Հ *Ո՛վ ճշմարիտ հոգի, որ անպատմելի կերպով Հայր Աստուծմէ կը բղխիս, այսօր խորհրդաւոր վերնա-տունը իջնելով առաքեալներուն վրայ հանգչեցար. ո՛վ մեր հայրերուն Աստուածը։*

Աստուծոյ անքննելի գաղտնիքները քննող, և Հայր Աստուծոյ հետ մէկ, այսօր հրեշտակներուն հրեղէն Թե-ւերէն վար իջնելով առաքեալներուն վրայ հանգչեցար. ո՛վ մեր։

Digitized by Google

Ո՛վ սուրբ հոգի, լոյսի անհատնում աղբիւր, այսօր հրեղէն լեզուներու բաժնուելով առաքեալներուն վրայ հանգչեցար. ո՛վ մեր:

Օրհնեցէք Տէրը, փառաւորեցէք ճշմարիտ հոգին:

Որ անպատմելի խոնարհութեամբ հանգչեցաւ առաքեալներուն վրայ իբրև փառապանծ և արեւու պէս փայլող պսակ մը զետեղուելով անոնց վրայ. փառս:

Որ անոնց (առաքեալներուն) յայտնեց Երրորդութեան անպատմելի խորհուրդը, իմաստութեան կեանք տուող աղբիւր մը ցայտեցնելով անոնց վրայ. փառս:

Ո Ո՛վ լոյսի աղբիւր, որ բուն հայր Աստուծմէ կը բղխես առաջուց, ճառագայթ արձակող լուսով ուրախացուցիր և լեցուցիր առաքեալները. ողորմէ՛ անոնց (առաքեալներուն) աղաչանքով:

Դուն որ քու էութիւնդ ցուցուցիր հրեղէն հրեշտակներուն՝ հիացում պատճառելով անոնց, նոյնպէս հոգեւոր աստուածային լուսով ուրախացուցիր և լեցուցիր առաքեալները. ողորմ:

Դուն որ սկիզբէն լոյսի փոխեցիր ընդհանուր աշխարհը պատող խաւարը, այսօր աստուածային հրաշալի լուսով ուրախացուցիր և լեցուցիր առաքեալները. ողորմէ՛:

Կրակի պէս բոցբոքելով և ծաւալելով դէպ առաջ շարժեցար, ո՛վ ճշմարիտ հոգի, և կրակ կաթեցնող աստուածային լուսով ուրախացուցիր և լեցուցիր առաքեալները. ողորմէ՛:

8 Դուն որ կրակ ցայտեցնող և իրենց թեւերը պարզող հրեշտակներուն վրայ կը նստիս, այսօր երկինքէն վար թափեցար հողեղէն մարդոց խումբին վր-

Digitized by Google

րայ անպատմելի սիրով . օրհնեա՛լ ես , ո՛վ սուրբ հոգի Աստուած :

Դուն որ հրեշտակներուն հրեղէն լեզուներէն կը փառաբանուիս , սո՛ւրբ , սո՛ւրբ , սո՛ւրբ ձայնով , այսօր երկինքէն կրակի պէս կաթեցար հողեղէն մարդոց շրթունքներուն վրայ . օրհ :

Դուն որ կրակէ կերպարանք ունեցող հրեշտակներուն միջա արեւու պէս փայլող բոցով կ'երեւիս, այսօր երկինքէն հողեղէն մարդոց վրայ թափեցար իբրև հըրեղէն բաժակ . օրհ :

ԿԱՆՈՆ ԵՕԹՆԵՐՈՐԴԻ ԱԻՈՒՐՆ

ԱՀ Ի հարաշարժ աղբերն անհատահոսդ վտակ
ՏԷ կենդանարար սուրբ հոգի, օրհնեալ ես լոյս
ՀԲ ճշմարիտ :

Այսօր ի սուրբ վերնատունն եկեալ Աստուած ճշմարիտ հրաշազարդեաց զառաքեալսն ի լոյս փառաց քոց հոգի :

Հրնուողական խնդութեամբ աշակերտացն լցեալ, փառաւորելով երգէին օրհնեալ ես լոյս զերազանց :

Ի համբառնալ բանին յերկինս եւ ի նստիլ ընդ աջմէ հօր, զուարճացեալ առաքելոցն երկրպագէին, օրհնելով զհայր զառաքօղ բանին :

Համահաւաքեալ գունդք սրբոցն ի վերնատունն խորհրդոյ համբարձմամբ աչաց սպասէին հոգւոյն, օրհ :

Յանկարծահաս հնչմամբ հեղեալ կենդանարար աղբիւր լուսոյ, անմահական կենաց լուսով զարդարեալ, որք օրհնէին զհայր զառաքօղ հոգւոյն :

Հ Անեղանելի հոգիդ սուրբ որ ես ընդ հօր փա-
ԳԵ ռակից, եւ էակից գոլով ծոցածին բանին, անհասանելիդ Աստուած հարցն մերոց :

Որ ի քառակերպեան աթոռդ բազմեալ հանգչիս, եւ սրբաբանեալ օրհնիս ի հրեղէն լեզուացն, անհա :

Այսօր մարդասիրապէս աստուածաբար իջեալ ի սուրբ վերնատունն, եւ զհրեղէն լեզուս բաժանեալ հանգչելով ի նոսա, անհա :

Գ Զտէր օրհնեցէք բարձր արարէք զհոգին ճշմարիտ Աստուած :

Զմխիթարիչ սուրբ հոգին որ փոխան միածնին իջ-եալ ի հօրէ, որ հրաշազարդեաց զսուրբ զառաքեալսն, բարձր :

Զերկնային ծորանին հեղեալ ի սուրբ վերնատունն, որ աստուածազարդ հրազինեաց զսուրբ զառաքեալսն, բարձր :

Ո Հոգիդ ճշմարիտ որ զաստուածային զհրաման-սըն քո զառածն դաւթեան լցեր, արբուցանելով աշա-կերտացն զպարարտութիւն քո ի սուրբ վերնատանն, ո-ղորմեա :

Որ առաքեցար ի հօրէ կենդանարար վտակ եւ լոյս ճշմարիտ, արբուցանելով նոքօք որդւոց սիօնի զուղխս փափկութեան, ողորմ :

Որ կատարեցեր զփափաք ցանկութեան սրտից նոցա, որք սպասեալ մնային մեծի գալստեան քո ի սուր վեր-նատանն, ողորմ :

Տ Որ ի թեւս թեթեւս անձինք սաւառնեալ եւ հրացայտ սերոբէից, վերանստեալ տեսչութեամբ խնա-մես զարարածս, հոգիդ սուրբ, օրհնեալ ես յարարա-ծոց քոց :

Որ սքանչելապայծառ հրաշալի ձայնիւ ընդ հօր եւ ընդ որդւոյ միշտ փառաբանիս, եւ քաղցրութեամբ հա-յիս յարարածս, հոգիդ :

Այսօր աստուածային տեսչութեամբ ի վերնատունն իջեալ հողմաձայն հնչմամբ, եւ զառաքեալսն արբուց-եալ բաշխեցար յարարածս, հոգիդ :

Հբ Հոգին սուրբ էր միշտ եւ է եւ եղիցի, ոչ ըն-
Տձ կալեալ եւ ոչ դադարեալ, այլ միշտ ընդ հօր եւ ընդ որդւոյ կարգեալ եւ թուեալ, եւ միշտ օրհնեալ է ի յաւիտեանս

Էր միշտ ընդունող սրբող եւ լցուցիչ աստուածացուցիչ, եւ միշտ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ կարգեալ եւ թուեալ, եւ միշտ օրհ :

Մշտաշարժ ինքնաշարժ ինքնիշխան ինքնազօր ամենազօր, վասնզի շնչէ ուր կամի որքան ախորժէ յորժամ եւ որքան, եւ միշտ օրհ :

Ինքն յինքեան նոյն միշտ ընդ որս դասեցաւ աներեւոյթ անժամանակ, անայլայլելի անփոփոխելի, եւ միշտ:

Առանց որքանութեան, առանց որպիսութեան, առանց տեսութեան անշօշափելի, եւ միշտ :

Տէր առաքիչ որոշիչ տաճար առնէ ինքն ինքեան, առաջնորդէ զօրացուցանէ որպէս եւ կամի բաժանէ զշնորհս, եւ միշտ :

Կեանք եւ կենդանարար լոյս եւ գոյացուցիչ լուսոյ, ինքն բարի աղբիւր բարութեան հոգի ուղիղ առաջնորդական, եւ միշտ :

Հոգի զօրութեան եւ երկիւղի, որով հայր ճանաչի եւ որդի փառաւորի, որոց մի կարգ մի պատիւ մի երկրպագութիւն, կատարելութիւն սրբութեան, եւ միշտ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ սուրբ հոգի, որ հայր Աստուծմէ չարժած աղբիւրէն անհատնում կերպով հոսելով գետի մը պէս կեանք կուտաս. օրհնեա՛լ ըլլաս, ո՛վ ճշմարիտ հոգի :

Այսօր ճշմարիտ Աստուածը, հոգին, սուրբ վերնատունը գալով, առաքեալները հրաշքով զարդարեց քու փառքիդ լուսովը :

Digitized by Google

Աշակերտները լեցուելով հրճուեցնող ուրախութեամբ՝ փառք տալով կ'երգէին. օրհնեա՜լ ըլլաս, ո՛վ գերազանց լոյս։

Երբ բանն Աստուած երկինք համբարձաւ և հայր Աստուծոյ աջ կողմը նստաւ, առաքեալները ուրախութեամբ երկրպագութիւն կ'ընէին, փառք տալով հայր Աստուծոյ՝ որ բանն Աստուածը ղրկեց։

Սուրբերուն (նոր հաւատացեալներուն) խումբերը խորհրդաւոր վերնատունը հաւաքուելով հոգիին կ'սպասէին աչքերնին երկինք վերցուցած, փառք։

Լոյսին կենդանատու աղբիւրը (սուրբ հոգին) յանկարծ հասաւ և մեծ ձայնով թափուելով անմահ կեանքի լուսով զարդարեց առաքեալները, որ փառք կուտային Աստուծոյ, որ հոգին ղրկեց։

Հ Ո՛վ սուրբ հոգի, որ մէկէ մը ստեղծուած չես, և հայր Աստուծոյ հետ նոյն փառքը ունիս, և անոր ծոցէն ծնող բանն Աստուծոյ հետ ալ նոյն էութիւնը, ո՛վ մեր հայրերուն անըմբռնելի Աստուածը։

Զորս կերպարանք ունեցող հրեշտակներէն կազմուած քու աթոռիդ վրայ կը հանգչիս, և անոնց հրեղէն լեզուներով կ'օրհնուիս սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ աղաղակով, ո՛վ։

Այսօր մարդասիրութեամբ և իբրև Աստուած սուրբ վերնատունը իջնելով, հրեղէն լեզուները բաժնեցիր, և առաքեալներուն վրայ հանգչեցար, ո՛վ։

Օրհնեցէք ազգեր, փառաւորեցէք ճշմարիտ հոգին Աստուած։

Մխիթարիչ սուրբ հոգին, որ միածին որդիին տեղ հայր Աստուծմէն իջնելով հրաշալի կերպով զարդարեց առաքեալները, փառաւս։

Երկնային հանդերձները սուրբ վերնատունին վրայ թափելով, իբրև Աստուած զարդարեց և կրակով պճնեց սուրբ առաքեալները, փառաւոր։

Ո Ո՛վ Ճշմարիտ Հոգի, կատարելագործիր քու աստուածային պատգամդ, Պաւղոսին խօսքը, քու պարգևատացնող շնորհներդ խմցնելով աշակերտներուն՝ սուրբ վերնատունին մէջ. նորոգէ՛։

Հօրմէն ղրկուեցար Տէրէ, Միածնատուր հրով և իբրև Ճշմարիտ լոյս, անոնց (առաքեալներուն) միջոցաւ Սիոնի (քրիստոնէական եկեղեցիին զաւակներուն) խմցնելով քու փափուկ ջուրերդ (շնորհներդ), ողորմէ՛։

Կատարելագործիր անոնց սիրտերուն փափաքն ու ցանկութիւնը, որ սուրբ վերնատունին մէջ կ'սպասէին քու մեծ գալուստիդ. ողորմէ՛։

Տ Ո՛վ սուրբ Հոգի, որ անմիջական թեթև թևերու վրայ կը թռչիս և կրակի ցայտեցնող անրօրէններուդ վրայ կը նստիս և կը նախախնամես արարածները, օրհնեալ ըլլաս քու արարածներէդ։

Սքանչելի, պայծառ, հրաշալի ձայնով միշտ կը փառաւորուիս Հայր Աստուծոյ և Որդի Աստուծոյ հետ, և քաղցրութեամբ կը նայիս արարածներուն. օրհ.։

Այսօր աստուածային կարգադրութեամբ վերնատունին մէջ հնչեցիր հովի մը պէս, և առաքեալները կշտացնելով արարածներուն բաշխուեցար. օրհ.։

Ւ Սուրբ Հոգին միշտ կար, կայ և պիտի կենայ, սկիզբ ունեցած չէ, դադրած ալ չէ, այլ միշտ Հայր Աստուծոյ և Որդի Աստուծոյ հետ դասաւորուած և հաշտուած է, և ի սպաս կ'օրհնուի։

Միշտ կ'ընդունի (իրեն դիմողները), կը սրբէ,

կը լեցնէ և կ'աստուածացնէ, և միշտ հայր Աստուծոյ և որդի ։

Միշտ կը շարժի, ինքն իրմէ կը շարժի, բացարձակ տէր է, ուրիշի անկարօտ է, ամէն բանի կարող է, որովհետև կը փչէ ո՛ւր որ ուզէ, ո՛րքան մարդոց վրայ որ հաճի, ե՛րբ ուզէ և ո՛ր չափով որ ուզէ, և ի սպառ ։

Ինք իրեն մէջ, միշտ նո՛յն է որոնց հետ որ դասաւորուեցաւ, չի տեսնուիր, սկիզբ և վերջ չունի, չի փոխուիր, չայլայլիր, և ի սպառ ։

Բանականութիւն չունի, մասնաւոր որպիսութիւն չունի, տեսութեան տակ չիյնար, չի չօշափուիր, և ի սպառ ։

Տէր է, կը ղրկէ, կը գայ, ինք իրեն համար բնակարան կ'ընէ (մարդիկը), կ'առաջնորդէ, կը զօրացնէ, իր ուզած կերպով շնորհք կը բաժնէ, և ի սպառ ։

Կեանք է, կեանք կուտայ, լոյս կը մատակարարէ, և լոյսը ի՛նք ստեղծած է, ինք բարի է, բարութիւնը իրմէ կը հոսի, ուղիղ կերպով կ'առաջնորդէ, և ի սպառ ։

Զօրութեան, երկիւղածութեան հոգի է, իրմով հայր Աստուած կը ճանչցուի, և որդի Աստուած կը փառաւորուի, որոնց կարգը մէկ է, պատիւը մէկ է, պաշտամունքը մէկ է, իբրև սուրբ կատարեալ են, և ի սպառ ։

ՎԵՐՋ

Digitized by Google

Digitized by Google